
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՄԱԿԵՐԵՆ
ՇԱՐԻԱԹԱԿԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ
Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր Ը
(ԺԷ – ԺԸ դարեր)

Տպագրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի «Մատենադարանի XVII-XVIII դարերի շարիաթական-նոտարական վավերագրերը. բնագրերի թարգմանություն և վերլուծություն» (ծածկագիր՝ 15 T-6A307) գիտական ծրագրի շրջանակներում տրամադրված ֆինանսավորմամբ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN

III

SHARI'A NOTARIAL DOCUMENTS
(XVII –XVIII cc.)

BY K. P. KOSTIKYAN, M. A. KHECHO

YEREVAN 2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ПЕРСИДСКИЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА

III

ШАРИАТСКИЕ-НОТАРИАЛЬНЫЕ ДОКУМЕНТЫ
(XVII –XVIII вв.)

СОСТАВИЛИ К.П. КОСТИКЯН, М.А. ХЕЧО

ЕРЕВАН 2018

1360484

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

III

ՇԱՐԻԱԹԱԿԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

(ԺԷ – ԺԸ դդ.)

1036584

Կազմեցին, բնագրերը թարգմանեցին և ծանոթագրեցին
Ք.Պ. Կոստիկյանը և Մ.Ա. Խեչոն

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 09 : 93/94
ԳՄԴ 76.11+63.3
Մ 331

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Գ. Մարգարյան

Մ 331 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Մաս III: Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ – ԺԸ դդ.)/ Կազմ.՝ Ք.Պ. Կոստիկյան, Մ.Ա. Խեչո. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018.- 224 էջ:

Սույն պրակը շարունակում է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հրատարակության շարքը: Այն հայերեն թարգմանություններով ու անհրաժեշտ մեկնաբանություններով ներկայացնում է կալվածագրերի առաջին պրակը ժամանակագրորեն շարունակող շրջանի 25 շարիաթական-նոտարական վավերագրեր՝ պարսկերեն բնագրերով ու լուսապատճեններով:

ՀՏԴ 09 : 93/94
ԳՄԴ 76.11+63.3

ISBN 978-5-8080-1328-5
© Ք. Կոստիկյան, Մ. Խեչո 2018

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պարսկերեն փաստաթղթերի այս խմբի անվանումը կապվում է նրանց ստեղծման վարչական ատյանի՝ *շարի'աթական*-նոտարական գրասենյակների հետ: Ստեղծված լինելով քաղաքացիական ամենատարբեր գործարքների առիթով՝ *շարիաթական*-նոտարական փաստաթղթերը արտացոլում են հիմնականում սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող իրողություններ ու երևույթներ: Թեև այս տեսակի վավերագրերը մեծ թիվ են կազմում Իրանի ու նրա հարևան երկրների արխիվային հավաքածուներում, սակայն դրանց վերաբերող ուսումնասիրություններն ու հրատարակությունները շատ ավելի քիչ են, քան պարսկերեն հրովարտակներին ու նամակներին վերաբերող հետազոտությունները:

Խորհրդային իշխանության շրջանում որոշակի աշխատանք է տարվել Հարավային Կովկասի ու Միջին Ասիայի արխիվային հավաքածուների պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության ուղղությամբ: Իհարկե, առավելապես ուսումնասիրվել են հրովարտակները, սակայն մի քանի շարիաթական-նոտարական վավերագրեր ևս հետազոտվել ու հրատարակվել են 1936թ. Յ. Ն. Մառի խմբագրությամբ լույս տեսած Նախիջևանի խանության XVII-XIX դարերի վավերագրերի ժողովածուի մեջ[1]: Այս բնագավառում զգալի աշխատանք են կատարել նաև Միջին Ասիայի հետազոտողները: 1954թ. Օ. Դ. Չեխովիչի աշխատասիրությամբ նախ հրատարակվում են Բուխարայի խանության ագրարային հարաբերությունների պատմությանը վերաբերող XVII – XIX դարերի 51 վավերագրեր[2], ապա 1965թ. «XIV դ. Բուխարայի վավերագրերը» խորագրով՝ 6 վակֆնամեներ[3]: Մեկ տարի անց, XVI դարի ագրարային հարաբերությունների պատմությանը նվիրված ուսումնասիրության հետ հրատարակվում է նաև Շեյբանի խանի ընդարձակ վակֆնամեն Ռ. Գ. Մուկմինովայի կողմից[4]:

---

[1] Передняя Азия в документах, серия памяти Ю. Н. Марра, кн. 1, Нахчеванские рукописные документы, XVII-XIX вв., Тифлис, 1936.

[2] Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве XVII – XIX вв., перевод, введение и примечания О. Д. Чехович, под редакцией А. К. Арендса, Ташкент, 1954.

[3] **О. Д. Чехович**, Бухарские документы XIV века, Ташкент, 1965.

[4] **Р. Г. Мукминова**, К истории аграрных отношений в Узбекистане XVI в., по материалам «Вакф-наме», Ташкент, 1966.

Շատ չեն պարսկերեն վավերագրագիտության այս ոլորտի աշխատանքները նաև արտասահմանում: Ուշադրության է արժանի Հերբերտ Հորստի աշխատասիրությամբ հրատարակված Շեյխ Սեֆի ալ-Դին Արդաբիլիի որդի Խոջա Ալիին Լանկ Թեմուրի կողմից 1403-1404 թթ. Կատարած նվիրատվության վակֆնամեի լուսանկարային բնագրի հրատարակումը[5]: Իրանում 1972 թ. ֆաքսիմիլե եղանակով հրատարակվել է Ռաշիդ ալ-դին Ֆազլալլահի վակֆնամեն Թավրիզի արվարձանի իր նվիրատվության վերաբերյալ[6]:

Ամիդ Ռեզայիի կողմից հետազոտություն է անցկացվել ղաջարական շրջանի շարիաթական փաստաթղթերի (կալվածագրեր, վարձակալագրեր, կտակագրեր, լիազորագրեր, ամուսնության ու ապահարզանի պայմանագրեր և այլն) կառուցվածքի ու առանձնահատկությունների ոլորտում[7]:

Սեֆյան շրջանի պարսկերեն գրագրության կանոնների ու որոշ եզրույթների, հատկապես վավերագրերի տեսակների առանձնահատկությունների ուսումնասիրության ու բնորոշման համար արժեքավոր սկզբնաղբյուրներ են «Մունշա'աթ-ե Սուլեյմանի» (Սուլեյմանի նամակագրությունը) աշխատությունը՝ գրված շահ Սուլեյմանի գրագրատան անհայտ գրագրի կողմից[8], նաև Մուհամմադ բ. Սաբզ Ալի Իսֆահանիի «Վաջիզե ալ-թահրիրը» (Գրագրության համառոտագրություն)[9]: Պարսկերեն վավերագրագիտության սկզբունքային հարցերի ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր աշխատություններից են Ջահանգիր Ղայեմմաղամիի և Սամ Ալիի հետազոտությունները, որոնցում աղբյուրագիտական լայն հենքի վրա ներկայացվում են Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական ժամանակաշրջանի վավերագրերի տեսակները, նրանց գրության ու կառուցվածքի առանձնահատկությունները[10]:

Մատենադարանի XVII – XVIII դարերի պարսկերեն վավերագրերի մեջ զգալի տեղ են զբաղեցնում շարիաթական-նոտարական վա-

---

[5] Herbert Horst, Tīmūr and Ḫōǧä ʻAli, Ein Beitrag zur Geschichte der Safawiden, Akademie der Wissenschaften und der Literatur, Abhandlungen der Geistes und Sozialwissenschaftlichen Klasse, 1958, n. 2, Wiesbaden.

[6] رشید الدین فضل الله همدانی، وقف نامه ربع رشیدی، به کوشش مجتبی مینوی، انجمن آثار ملی، 1350.

[7] امید رضایی، در آمدی بر اسناد شرعی دوره قاجار، تهران، 1390.

[8] منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانهٔ شاه سلیمان صفوی، به کوشش رسول جعفریان، تهران، 1388.

[9] وجیزه التحریر، نگاشتهٔ محمد بن سبزعلی اصفهانی، بکوشش رسول جعفریان، تهران، 1393.

[10] سام علی، بررسی فرمان نویسی دورهٔ اول قاجار، تهران، انتشارات کلک زرین، 1392، قایم مقامی ج.، مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسلهٔ انتشارات انجمن آثار ملی 1350،

վերագրերը: Այս վավերագրերը իրենց բովանդակած նյութով ու զանազան տվյալներով (տնտեսական գործարքների մանրամասներ, տեղանուններ, ազդեցիկ անձանց անուններ, հարկային եզրույթներ, էթնոդավանական տեղեկություններ) արտացոլելով իրենց ստեղծման շրջանի պատմական իրողությունները՝ կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակահատվածի[1] հայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության համար: Չնայած այս իրողությանը, ի տարբերություն Մատենադարանի պարսկերեն հրովարտակների, որոնք արդեն բավականաչափ ուսումնասիրվել ու հրատարակվել են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի չորս պրակներում[11], հիշյալ փաստաթղթերը հանրությանը առայժմ ներկայացված են միայն մեկ պրակով, որի մեջ ընգրկվել են վաղ շրջանի (1305 - 1592թ.) 27 կալվածագրեր՝ առքուվաճառքի ու վակֆային նվիրատվության գործարքներ բովանդակող շարիաթական-նոտարական փաստաթղթեր[12]: Մնացած շարիաթական-նոտարական վավերագրերի մի մասի ընդհանուր հակիրճ նկարագրությունները ուսումնասիրողների լայն շրջանակին մատչելի են միայն շնորհիվ Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության, որը, ցավոք, լիովին չի ներկայացնում այդ վավերագրերի տվյալները:

Էջմիածնի կալվածքները XVII-XVIII դարերում

Դեռևս XII դարում Հայոց եկեղեցու առաջնորդները, գիտակցելով հարևան ժողովուրդների հետ տանելի փոխհարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, քրիստոնյա ու մահմեդական պետությունների հետ բանակցություններում հանդես էին գալիս ողջ ժողովրդի անունից և ջանում լուծել նրա առջև կանգնած խնդիրները[13]: Հայոց պետականության կորստից հետո Հայոց եկեղեցին դառնում է հայ ժողովրդի շահերը ներկայացնող այն կարևոր օղակը, որի միջոցով ձևավորվում են մահմեդական տիրապետության տակ բնակվող հայության կեցության պաշտոնական փաստաթղթերում արձանագրված իրավա-

---

[11] **Փափազյան Հ.,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Բ, Երևան, 1956, 1959: Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Գ, Դ, Երևան, 2005, 2008:

[12] **Փափազյան Հ.,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրերը, պրակ Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968:

[13] **Ա. Ա. Բոզոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, 1995, էջ 15:

քաղաքական ու սոցիալ-տնտեսական պայմանները: Այս փաստաթղթերը, որոնք այժմ պատմագիտական բարձր արժեք ունեցող սկըզբնաղբյուրներ են, իրենց ժամանակին ունեին կարևոր իրավական ուժ:

Պետության բացակայության պայմաններում Հայոց եկեղեցու որպես մահմեդական իշխանությունների տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանի դերը մեծապես կախված էր նրա տնտեսական դրությունից, որի կայունությունն ու բարվոք վիճակը կարևոր նախապայման էր շահական արքունիքի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում:

Մատենադարանի պարսկերեն կալվածագրերի առաջին պրակում ընդգրկված XIV-XVI դարերի *շարիաթական* նոտարական կալվածագրերի տվյալները հստակ ուրվագծում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների ձեռք բերման ուղիներն ու եղանակները, որոնք հաճախ կապվում էին տվյալ շրջանում մահմեդական իշխանությունների կողմից հայ ազնվականական խավի նկատմամբ իրականացվող, նրանց ունեզրկմանն ու վերացմանն ուղղված հետևողական քաղաքականության հետ: Կարա-Կոյունլուների և Ակ-Կոյունլուների մահմեդական իշխանությունները հետևողականորեն իրականացնում էին հայ ազնվականների հողային սեփականության վերացման քաղաքականություն: Դա կատարվում էր ոչ այնքան ռազմական բախումների ժամանակ, որքան կրոնական անհանդուրժողականության, հայ ազնվականների ոչնչացման ու նրանց հողերի բռնագրավման միջոցով, որը թույլատրում էր *բեյթ ուլ-մալի* հաստատությունը՝ հենվելով *շարի՛աթական* նորմերի վրա[14]: Հայ հողատերերի ունեցվածքը նման ոտնձգություններից պաշտպանելու միջոցներից մեկն է դառնում դրանց փոխանցումը հայոց վանքերին ու հայ ազնվականական տոհմերի ներկայացուցիչների անցումը հայ հոգևորականների շարքը, ինչպես դա կատարվում է Գանձասարի կաթողիկոսության հետ, որի կաթողիկոսները XIV դարից նշանավոր իշխանական Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչներն էին և Տաթևի եպիսկոպոսության հետ, որը գլխավորում էին Օրբելյան իշխանական տան ժառանգները և այլն[15]:

Հայ ազնվականության ձեռքից *բեյթ ուլ-մալի* կողմից բռնագրավված որոշ կալվածքներ հաջողվում է ետ վերադարձնել՝ վերածելով

---

[14] Այս մասին մանրամասն տե՛ս А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, 1972, сс. 64-80.

[15] А. Папазян, նշվ. աշխ., էջ 130:

դրանք եկեղեցական կալվածքների[16]: Այդպես, 1431թ. Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի կողմից Էջմիածնի համար գնվել էին Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերի վեցական *դանգ մուլքերը*[17]:

Մատենադարանի պարսկերեն կալվածագրերի տվյալների հիման վրա հնարավոր է վերականգնել Էջմիածնի կալվածքների գնման ու վաճառման, նրանց շուրջ տեղի ունեցած վեճերի մանրամասն պատմությունը: 1585թ. Մայր Աթոռը ձեռք է բերում Դիբաքլու գյուղը[18]: Փիլիպոս կաթողիկոսի օրոք Էջմիածինը շարունակում է ձեռքբերել գանձագին *մուլքեր*[19], մի գործառույթ, որը հետագայում շարունակվում է Հակոբ Ջուղայեցի ու մյուս կաթողիկոսների աթոռակալության տարիներին: XVII դարում Փիլիպոս Աղբակեցի, Հակոբ Ջուղայեցի ու մյուս կաթողիկոսների կողմից Էջմիածնի համար մաս-մաս գնվում է Օշական գյուղը[20]: Պահպանվել են Մաստարա գյուղի գնման ու Էջմիածնին *վակֆ* արվելու կապակցությամբ կազմված կալվածագրերը՝ թվագրված 1656, 1657, 1709 և 1719 թվականներով[21]: Ֆրանկանոց գյուղը ևս ամբողջովին գնվել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1655թ[22]: Նույն կաթողիկոսի կողմից գնվում են 1660 թ. Կարբիի Ջաշոռլու[23] գյուղի 6 *դանգերը* և *վակֆ* արվում Էջմիածնին[24]:

1661 թ. Հակոբ Ջուղայեցին Չոխուր Սա'ադի նախկին *քալանթար* Իսհակ անունով հայտնի Խոջա Սահակից 30 թումանով գնում է Դարաչիչաքի (Ծաղկաձորի) Յայջի գյուղի 6 *դանգը*, Գեղարքունիքի Ամիրքենդի (կամ Ամիրի) գյուղի 4,5 *դանգը*, Դարաքենդում (Զորագյուղում) Զանգի գետի ափին գտնվող մեկ քար ջրաղացը, Նորագեղում գտնվող մեկ տունը[25]:

---

16 **А. Папазян**, նշվ. աշխ., էջ 71-75:

17 **Հ. Փափազյան**, կալվածագրեր, վավ. 5:

18 **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 166:

19 **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, էջ 40:

20 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 61ա, բ, 64, 65ա, 66, 70, 74, 100, 101; թղթ. 1բ, վավ. 123, 160, 176:

21 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1զ, վավ. 947, 948, 950, 951:

22 **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 158:

23 Սա ըստ երևույթին Սիմեոն Երևանցու նշած Շոռլու գյուղն էր, որը գտնվում է Վաղարշապատի մոտ (Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 215):

24 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1073:

25 Տե՛ս ստորև վավերագիր 11:

Հակոբ կաթողիկոսը 1664 թ. 2 *թումանով* գնում է Ապարանի Մելիքի գյուղի բոլոր 6 *դանգերը*[26], 1675 թ.՝ 55 *թումանով* Նորք (Չոլմաքչի) գյուղի 6 *դանգերը*[27]:

XVII դարում ընդհանուր առմամբ 23 գյուղ է հիշվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների թվում, որոնց մի մասը, սակայն, վանքը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մահից հետո կորցնում է[28]: Դա տեղի է ունենում Էջմիածնի պարտքերի դիմաց նրա կալվածքների գրավադրման[29], ինչպես նաև Մայր Աթոռի կալվածքների, այդ թվում նաև *վակֆերի* նկատմամբ պարտատերերի կատարած ոտնձգությունների հետևանքով: Այդ խնդրի կապակցությամբ Էջմիածնի միաբանները դեռևս 1680 թ. դիմել էին շահ Սուլեյմանին և ձեռքբերել այդ ոտնձգություններն արգելող նրա հրովարտակը[30]: Այս առթիվ տեղին է նշել նաև, որ ընդհանրապես XVII դարի երկրորդ կեսում Արևելյան Հայաստանի վանքերի կալվածքների նկատմամբ հաճախակի էին ոտնձգությունները: Դա ակներև է հատկապես Տաթևի վանքի օրինակով, որի կալվածքների նկատմամբ ոտնձգությունների մասին փաստող հրովարտակները մեծ թիվ են կազմում, իսկ մի քանիսում նշվում են նաև *վակֆային* կալվածքների յուրացման փաստեր[31]:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերի նյութերը, Էջմիածնի կալվածքների պաշտպանության նպատակով հետագայում ևս կարիք է լինում դիմել Սեֆյան շահի՝ այս անգամ Սուլթան Հուսեյնի հրամանին, և 1712 թ. Ալեքսանդր կաթողիկոսի ջանքերով ձեռք են բերվում հրովարտակներ, որոնք արգելում են ոտնձգությունները Մայր Աթոռի կալվածքների, այդ թվում նաև *վակֆային* սեփականության նկատմամբ[32]:

Վաղարշապատ գյուղի 1725թ. հարկացուցակից, որտեղ թվարկված են նաև հարկերից ազատվող վանքապատկան կալվածքներն ու այլ ստացվածքները, պարզվում է, որ այդ թվականներին Էջմիածնին էին պատկանում միայն Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Քիրաջլու և

---

[26] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1080:

[27] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1089:

[28] **Հ. Փափազյան**, Վանական կալվածքների սեփականատիրական մի քանի առանձնահատկություններ, Բանբեր Մատենադարանի, №10, Երևան, 1971, էջ 243:

[29] **А. Папазян**, նշվ. աշխ., էջ 118-120:

[30] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 46:

[31] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 24, 52, 53:

[32] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 78, 81:

Ֆրանկանոց գյուղերը[33]:

Նադիր շահի օրոք 1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսին հաջողվում է շահական հրովարտակով ամրագրել Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլու, Դիբաքլու և Չալաբիքենդ գյուղերի պատկանելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին[34]: Սակայն արդեն Իբրահիմ շահից 1748թ. Ղազար կաթողիկոսի ձեռքբերած հրովարտակի համաձայն Մայր Աթոռին էին պատկանում միայն Վաղարշապատ, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա գյուղերը[35]:

Ինչպես նշում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, հետագայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնից խլվում են նաև Օշական և Ֆրանկանոց գյուղերը, որոնք սակայն հիշյալ կաթողիկոսը կարողանում է վերադարձնել: Բացի այդ, Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի *վակֆնամեի* հիման վրա Սիմեոն Երևանցին ետ է վերադարձնում նաև Աշտարակ, Եղվարդ, Մուղնի և Աղավնատուն գյուղերը՝ ամրապնդելով նրանց պատկանելությունը Մայր Աթոռին Երևանի Հուսեյն Ալի խանի, *շեյխ-ուլ-իսլամի* ու այլ պաշտոնյաների կողմից ստորագրված ու կնքված փաստաթղթերով[36]:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կալվածքներ է ունեցել նաև Թավրիզում և Դեհխարղանում: Ըստ Սիմեոն Երևանցու, Ատրպատականի Դեհխարղան գյուղում գտնվող կալվածքը, որը նրա օրոք «շէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս» էր, բաղկացած էր երեք կտոր այգիներից և մաս-մաս ձեռք էր բերվել Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից[37]: Պահպանվել է Դեհխարղանում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1657 թ. 14 *թուման* 5000 *դինարով* գնված այգու կալվածագիրը[38], ինչպես նաև 1735 թ. Դեհխարղանի կալվածքներից մեկի վարձակալության հայերեն կալվածագիրը, որի համաձայն այն 10 տարով վարձակալության էր տրվել ոմն Տեր Մինասի՝ «տարեկան 450 լիտր չամիչ վճարելու պայմանով»[39]: 1835 թ. Հովհաննես կաթողիկոսը հանձնարարական է տալիս Գալուստ

---

[33] **Հ. Փափազյան**, Վաղարշապատ գյուղի 1725 – 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, № 5, Երևան, 1960, էջ 453:

[34] Տե՛ս **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 8:

[35] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթապանակ 1գ, վավ. 398ա:

[36] **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 51-52:

[37] **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 253:

[38] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1066:

[39] **Հ. Աբրահամյան**, Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ Ա, Երևան, 1941, հ. 60, էջ 80-1:

Ելիմիրզեանցին վաճառելու Դեհխարղանի այգին[40]:

Թավրիզում գտնվող կալվածքի ձեռքբերման ժամանակին և հանգամանքներին վերաբերող վավերագրեր Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում չկան, սակայն Սիմեոն Երևանցին հիշատակում է այնտեղ Միրիմ կոչված ջրից օգտվելու կալվածագրերի մասին[41]: Այդ կալվածքները բավականին հեռու էին Էջմիածնից և նրանց հասույթներից օգտվելը կապված էր որոշ դժվարությունների հետ: Ուստի շատ կարևոր էր նրանց հետ կապն իրականացնող գործակալների ազատ երթևեկության ապահովումը տեղական կառավարիչների ու ճանապարհները հսկող ծառայողների ոտնձգություններից: Այս նպատակով Աբրահամ Կրետացի կաթողիկոսը Նադիր շահից ձեռք է բերում 1148 թ. սաֆար ամսի (1735թ.) հրովարտակը՝ հրապարակված Աբրահամ կաթողիկոսի խնդրագրի հիման վրա Մայր Աթոռի Դեհխարղանում ու Թավրիզում գտնվող կալվածքների կապակցությամբ երթևեկող վանքի սպասավորներին արգելքներ չհարուցելու ու նրանցից հավելագանձումներ չկատարելու հրամանով[42]: Նույն բովանդակությամբ հրամանագիր է ձեռքբերում նաև 1814 թ. Եփրեմ կաթողիկոսը Ատրպատականի կառավարիչ Աբբաս Միրզայից[43]:

Թավրիզում գտնվող վակֆերի եկամուտների ստացման հետ կապված դժվարություններն են թերևս պատճառը, որ Սիմեոն Երևանցին 1766 թ. այնտեղի այգին 99 տարով վարձակալության է տալիս Մուհամմադ Շաֆի'ին՝ նրա խնդրանքի համաձայն[44]:

Սույն ժողովածուի մեջ ընդգրկել ենք դիտարկվող ժամանակաշրջանի առավել տիպական և մեր կարծիքով հայագիտության ու պարսկական վավերագրագիտության համար հետաքրքրություն ներկայացնող 25 վավերագրեր:

---

40 Այդ մասին տե՛ս հետևյալ վավերագրում Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., վավ. 85, էջ 106-107:

41 **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 377:

42 Տե՛ս **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 7, բնօրինակը՝ Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1178:

43 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ը, վավ. 1542:

44 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 457, 458:

Մատենադարանի XVII-XVIII դարերի պարսկերեն շարիաթական-նոտարական վավերագրերի տեսակները

Այս փաստաթղթերը սովորաբար հաստատվում էին *դազիի, դիվանբեկիի* ու *շար'ի* սպասավորների (խադեմների), հաճախ նաև վկաների կնիքներով: Սեֆյան շահ Սուլեյմանի շրջանի գրագրության ուղեցույցում բերվում են այս *շարի'աթական*-նոտարական փաստաթղթերի նմուշներ, որոնց հիման վրա հնարավոր է ճշտել վավերագրի տեսակների անվանումները ու գրության սկզբունքային հարցերը[45]: Փաստաթղթերի տեսակներից յուրաքանչյուրի գրության սկզբունքներն ու լեզվա-կաղապարային առանձնահատկությունները փոփոխվում էին ժամանակի ընթացքում: Մատենադարանի պարսկերեն այս վավերագրերի առատ նյութը հնարավորություն է տալիս ուսումնասիրել տեսակներից յուրաքանչյուրի առանձնահատկություններն իրենց զարգացման մեջ, ինչպես նաև նոր դիտարկումներով հարստացնել պարսկերեն վավերագրագիտության միջազգային փորձը, հատկապես *զիմմիների* ու մահմեդականների միջև կնքված գործարքների բնագավառում: Մատենադարանի պարսկերեն շարի'աթական-նոտարական վավերագրերի ուսումնասիրությանը նվիրված իր աշխատանքում Հ. Փափազյանը «կալվածների առուծախի, օտարման և ընդհանրապես հողի սեփականատիրության հարցերին վերաբերող վավերագրերը անվանում է կալվածագրեր»[46]: Այս փաստաթղթերը կոչվում էին նաև *շարի'աթական* եզրույթով «hոջջաթ - حجت» («ապացույց»), որոնցով ապացուցվում էին սեփականատիրությանը վերաբերող հարցերը[47]: Ստորև կներկայացնենք շարիաթական-նոտարական վավերագրերի տեսակները, որոնք առկա են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի արխիվում, որոնցից սակայն ոչ բոլորից է, որ նմուշներ ենք ընդգրկել սույն ժողովածուի մեջ: Ժողովածուի մեջ ընդգրկվող վավերագրերի նմուշներն ընտրելիս առաջնորդվել ենք նրանց բովանդակած այլևայլ տվյալների պատմական արժեքով ու կարևորությամբ:

Մատենադարանի XVII-XVIII դարերի *շարիաթական*-նոտարական վավերագրերի բովանդակային կառուցվածքի վրա իրենց դրոշմն են դրել ժամանակաշրջանի իրողությունները: Մասնավորապես, Սեֆ-

---

[45] منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانهٔ شاه سلیمان صفوی، 162-173.

[46] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, էջ 8:

[47] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, էջ 13:

յան տիրապետության ուշ շրջանի (XVII-XVIII դարի սկիզբ) փաստաթղթերում առկա է հայերի ժառանգության խնդիրներում գործող և իսմամ Ջա'ֆարի անունով կոչված օրենքին հակազդելու խիստ ակնհայտ փաստերը: Այս օրենքի գործադրության մասին առաջին վկայությունները XVII դարի 20-ականների սկզբից են և կապվում են շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանի հետ[48]: Շահ Աբբաս Ա-ի կողմից իր մահից (1629 թ.) քիչ առաջ հրապարակվում է մի հրամանագիր, որի համաձայն «յուրաքանչյուր քրիստոնյա, որ մահմեդականություն էր ընդունում, իրավունք էր ստանում ժառանգելու իր բոլոր ազգականների ունեցվածքը մինչև յոթ պորտ»[49]: Այդ հրամանագիրը փաստորեն նոր ուժ էր հաղորդում այլակրոնների ժառանգական խնդիրներին վերաբերող այդ օրենքին և փաստացի խրախուսում քրիստոնյաների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում ինչպես Իրան տեղափոխված հայության շրջանում, այնպես էլ Արևելյան Հայաստանի շրջաններում: Մեծ թվով հայեր, «կամավոր» մահմեդականություն են ընդունում ագահությունից դրդված կամ էլ մահմեդական դարձած ազգականներից իրենց ժառանգությունը պաշտպանելու նպատակով: Ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատափոխության դեպքերը հատկապես շատ էին քաղաքաբնակ ունևոր դասի ներկայացուցիչների՝ առևտրականների ու արհեստավորների շրջանում[50]: Հայ ունևոր դասի ներկայացուցիչներից շատերն էլ չցանկանալով մահմեդականանալ, հեռանում էին Իրանից:

Այս օրենքի վնասներից և ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու ուղիներից մեկը, ըստ Տեր Հովհաննյանցի, դրանց պարգևագրով (սոլհնամե - صلح نامه)» իր զավակներին փոխանցելն էր, որից հետո «ուրացեալ ընտանին զկնի մահուանն նորա ոչ կարէ առնել զպահանջ ինչ»[51]:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ իսլամի իրավագիտության տեսանկյունից եկեղեցական վակֆային կալվածքներն էին, որ առավել պաշտպանված էին

---

[48] Տե'ս **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 16:

[49] Այս հրամանագրի մասին տե'ս A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries, vol. I, London, 1939, p. 288.

[50] Այս մասին տե'ս Փափազյան Հ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան, 1956, № 3, էջ 92:

[51] **Տէր Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 209:

նոր մահմեդականացած ժառանգների ոտնձգություններից, քանի որ նրանք տեսականորեն համարվում էին անձեռնմխելի ու որևէ կերպ օտարման ենթակա չէին[52]: Այնուամենայնիվ, ինչպես վերն արդեն նշել ենք, օրինախախտումները հաճախակի էին Սեֆյան ուշ շրջանում և այդ պատճառով վակֆային կալվածքները ևս գրավ էին դրվում ու բռնագրավվում:

Քանի որ այս երկու տիպի (վակֆի ու սուլհի) իրավական գործարքներն էին հնարավոր դարձնում պաշտպանել *զիմմիների* ունեցվածքը մահմեդականացած ազգականներից, ուստի XVII դարի գրեթե բոլոր փաստաթղթերում առկա են նաև դրանց կայացման մասին ձևակերպումներ ու նշումներ:

Ղաբալե (ﻗﺒﺎﻟﻪ) - Առքուվաճառքի պայմանագիր

Մատենադարանի պարսկերեն *ղաբալեները* հիմնականում վերաբերում են հայոց վանքերի և հատկապես Էջմիածնի կալվածքներին: Եթե XIV-XVI դարերի կալվածագրերի մեջ տվյալների մանրամասնությամբ միմյանցից բավականին հեռու էին ընդարձակ և համառոտ շարադրանքով *ղաբալեները*[53], ապա XVII դարից այդ տարբերությունները փոքրանում են: Ժամանակի ընթացքում միտում է նկատվում դեպի շարադրանքի պարզեցումը և արաբերեն ձևակերպումների նվազումը: XIX դարի առաջին կեսում ևս առքուվաճառքի պայմանագրերը Հարավային Կովկասում հաճախ գրվում էին պարսկերեն և պարզեցված կարգով՝ սյունակներով, առանձին-առանձին նշելով նախ վաճառողի անունը «վաճառող - بایع» բառի տակ, ապա գնորդինը՝ «գնորդ - مشتری» բառի տակ, այնուհետև՝ գնման առարկա «գնման առարկա - مبیع» բառի տակ և գինը «գին - ثمن» բառի տակ: Այս ամենին հաջորդում էին գործարքի համապատասխանությունը *շարիաթի* օրենքներին ու գնման առարկայի նկատմամբ իրավունքների փոխանցումը վաճառողից գնորդին հաստատող ձևակերպումները պարսկերեն ու արաբերեն արտահայտություններով[54]:

---

[52] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Ա, էջ 120:

[53] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, էջ 10:

[54] Որպես XIX դարի առաջին կեսի պարսկերեն կալվածագրի օրինակ տե՛ս Խաչատուր Աբովյանի կողմից իրականացված գնման գործարքի կալվածագրի բնագիրը և հայերեն թարգմանությունը Ք. Կոստիկեան, Խաչատուր Աբովեանի կեն-

Եթե վաղ շրջանի *դաբալեներում* զգալի տեղ էր զբաղեցնում արաբերեն նախաբանը, որը հիմնականում բաղկացած էր Ալլահին, նրա իմաստությունն ու արդարադատությունը, Մուհամմադ մարգարեին գովաբանող արտահայտություններից, ապա հետագայում այդ արտահայտությունների ծավալը փոքրանում է, կամ փոխարինվում նույն բովանդակությամբ պարսկերեն պերճախոս ձևակերպումներով:

Գործարքի բուն նյութը *դաբալեում* շարադրվում է որպես փաստաթղթի գրության պատճառ և սկսվում հետևյալ արտահայտություններով՝ «այս օրինական և ընդունելի խոսքերի գրության նպատակն այն է, որ – غرض از تحریر و تسطیراین ارقام شرعیه و باعث بر تقریرو تنسیق این کلام مرعیه انست که»[55] կամ «հստակ ապացույցների շարք ներկայացնող այս օրինական խոսքերի գրության պատճառն այն է - باعث بر تحریر این کلمات شرعیه لایحه البینات»[56], կամ «այսպիսով, սույն օրինական ու գործադրելի շարադրանքի գրության պատճառը այն է, որ - اما بعد باعث بر تحریر این ارقام شرعیه لانجام آنست که»[57] և ներկայացվում էր հետևյալ կերպ. Նախ նշվում էին վաճառող(ներ)ի անուն(ներ)ն ու տիտղոսաշարը, այնուհետև վաճառվող գույքը՝ իր չափով ու սահմաններով, ապա գնորդ(ներ)ի անուն(ներ)ը և գույքի արժեքը: Երբեմն գնորդի և վաճառվող գույքի տեղերը փոխված են: Գույքի արժեքի հարցում շփոթությունից խուսափելու նպատակով որպես կանոն նշվում էր նաև արժեքի կեսը և լրիվ ներկայացվում դրամական միավորը, որով այն գնահատված է: Գնման արժեքի լրիվ վճարումը ավելի ուշ կատարվելու դեպքում կազմվում էին նաև ստացականներ՝ տրված վաճառողի կողմից, որոնք հավաստում էին գույքի լրիվ արժեքի վճարված լինելու մասին[58]:

Բուն նյութի շարադրանքին հաջորդում էին արաբերեն բառերի ու արտահայտությունների լայն կիրառմամբ ձևակերպումները գործարքի կայացման, նրա անբեկանելի լինելու, նաև գնի լրիվ վճարումից հետո սեփականատիրական իրավունքների վաճառողից գնորդին անցնելու վերաբերյալ: Ինչպես օրինակ. «Այժմ այս *շարի'աթական* գործարքով վերը նկարագրված վաճառքի առարկան դառնում է հիշյալ գնորդի

սագրութեան մի մասնիկ, Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ, 2013 հ. 33, էջ 291-296:

[55] Տե՛ս ստորև վավերագիր 1:

[56] Տե՛ս ստորև վավերագիր 4:

[57] Տե՛ս ստորև վավերագիր 11:

[58] Այս մասին տե'ս նաև ստացականներին նվիրված ենթաբաժնում:

օրինական ու բացառիկ ունեցվածքը և նրա կամքն է, որ ... ըստ իր ցանկության այն տնօրինի, ինչպես, որ սեփականատերն է տնօրինում իր օրինական սեփականությունը – تمامی مبیع مزبور کشت حق طلق و مال مختص خاص خالص مشتری بهر گونه که خواهد و اراده نماید در بیع مزبور تصرف کند کماینتصرف الملاک فی املاکهم و ذوی الایادی فی حقوقهم بای وجه شآء و اراد جری»[59], կամ հետևյալ օրինակում՝ «[Գույքի] օտարումից և գումարի վճարումից հետո այս օրինական առքուվաճառքի գործարքով նրա նկատմամբ օրինական ու բացառիկ սեփականատիրական իրավունքը հիշյալ գնորդինն է և նրա տնօրինության տակ է նրա *մալիքանեն*, ինչպես, որ սեփականատերերին է պատկանում իրենց օրինական սեփականությունը – اکنون بموجب این مبایعه شرعیه تمامی مبیع موصوف حق طلق و مال مختص خاص خالص مشتری مزبور است و اوراست تصرف مالکانه در ان کما بتصرف الملاک فی املاکهم الحقوق فی ایدیهم بای وجه شاء و اراد جری ذالک»[60]:

Ղաբալեները եզրափակում էր փաստաթղթի գրության տարվա ու ամսաթվի մասին նշումը: *Ղաբալեների* վերին լուսանցքում *դազիի* կամ *շար'ի* այլ պաշտոնյայի հաստատումն էր՝ արաբերեն ձևակերպմամբ, ստորին լուսանցքում՝ հաճախ վաճառողի ստորագրությունն ու կնիքը, իսկ աջ լուսանցքում՝ վկաների կողմից գործարքին ներկա գտնվելու ու փաստաթղթի իրականությանը համապատասխանելու մասին գրառումները և կնքադրոշմները:

Մատենադարանի XVII դարի ղաբալեները սովորաբար հայ *գիմմիների* գնված ունեցվածքը մահմեդականացած ազգականների հավակնություններից ազատելու ու լրացուցիչ ամրություն հաղորդելու նպատակով բովանդակում են նաև կից շարադրված սոլհնամե կամ մուսալեհենամե:

Սոլհնամե, մուսալեհենամե (صلح نامه، مصالحه نامه)

Սոլհնամե բառացի նշանակում է «հաշտության, համաձայնության գիր»: Դեհխոդայի բառարանում այն բացատրվում է որպես երկու անձանց կամ խմբերի միջև կնքված հաշտության համաձայնագիր, որում նշվում են համաձայնության պայմանները[61]: *Մուսալեհենամեները* փաստորեն սովորաբար կազմվում էին վեճերի կապակցությամբ՝ գրանցելով հաշտության պայմանները: Մատենադարանի հավաքածուի հնագույն *մուսալեհենամեներից* է Զաքարիա Հավուցթառեցու կալ-

---

[59] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 54:

[60] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 51:

[61] دهخدا، لغت نامه ، جلد 18 ، ص. 306

վածքների վերադարձման առթիվ 1489 թ. կազմված *մուսալեհենամեն*, որի համաձայն որպես «հաշտության գին» նա *բեյթ ուլ-մալի* վերակացու Ամիր Քյամալ-էդ-դին Աբդին բեկին վճարում է 5000 դինար[62]:

XVII դարի սկզբից Մատենադարանի պարսկերեն *շարիաթական*-նոտարական տարբեր տեսակի վավերագրերում հաճախ են հադիպում հիմնական գործարքը լրացուցիչ համեմատաբար փոքր գումարի դիմաց կնքված *սոլհնամեով* կամ *մուսալեհնամեով* ամրացման մասին հիշատակությունները: *Սոլհնամեն* կարող է ներառված լինել տարբեր տեսակի *շարիաթական* փաստաթղթերում. կտակ, առքուվաճառք, ժառանգության բաժանում և այլն:

Ըստ Տեր Հովհաննեսյանցի, պարգևագրով (սոլհնամե - صلح نامه)» ժառանգությունը իր զավակներին փոխանցումը կատարվում էր հայերի ժառանգության հարցում գործող Իմամ Ջա'ֆարի օրենքի վնասներից և ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու նպատակով, որից հետո «ուրացեալ ընտանին զկնի մահուանն նորա ոչ կարէ առնել զպահանջ ինչ»[63]:

Փաստորեն, *սոլհնամեն* սովորաբար կնքվում էր փաստաթղթին լրացուցիչ ամրություն և ուժ հաղորդելու նպատակով և նախկին սեփականատիրոջ, նրա ազգականների ու ժառանգների հետագա պահանջներից ու վեճերից խուսափելու նպատակով: Եվ այն հիմնականում հանդիպում է Մատենադարանի XVII դարի պարսկերեն վավերագրերում, քանի որ այդ շրջանում՝ Սեֆյան շահ Աբբաս Ա-ի ու նրան հաջորդած Սեֆյան գահակալների օրոք էր, որ հիշյալ օրենքը լայնորեն կիրառվում էր Արևելյան Հայաստանի շրջաններում: Սեֆյան պետության անկումից հետո Հարավային Կովկասի անջատմամբ թերևս մասամբ թուլանում է նրա վտանգը տեղի հայության համար՝ շարունակելով իհարկե սպառնալ ու թուլացնել բուն Իրանում բնակվող հայ համայնքները, որոնց վերաբերող *շարիաթական* նոտարական վավերագրերը Մատենադարանում շատ քիչ են:

Վակֆնամե (կամ վակֆնամչե, վակֆիե وقفیه، وقفنامچه، وقفنامه)

Վակֆային նվիրատվություններին վերաբերող արձանագրությունները կոչվում էին *վակֆնամեներ*[64]: Բարձրաստիճան հոգևորականները

---

[62] Հ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 8, էջ 445:

[63] Յ. Տէր Յովհաննէսեանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 209:

[64] Հ. Փափազյան, կալվածագրեր, պրակ Ա, էջ 9, 11:

ջանում էին հայոց վանքերի կողմից գնված ու նրանց նվիրաբերված կալվածքները վերածել *վակֆերի*, որոնք մահմեդական իրավունքի տեսանկյունից առավել պաշտպանված սեփականություն էին: *Վակֆի* օրենքները Սեֆյան Իրանում հատկապես խստորեն էին պահպանվում մահմեդական կրոնական հաստատությունների վերաբերությամբ[65]: Թեև Մատենադարանի վավերագրերի մեջ չկան այնպիսիքը, որոնք բովանդակեն *վակֆային* կալվածքների վաճառքի մասին տվյալներ, սակայն բազում վավերագրեր կան, որոնք արտացոլում են հայոց վանքերի *վակֆային* ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունները[66], հատկապես գրավի դիմաց դրանց բռնագրավման դեպքերը[67]:

Շարի'աթական օրենքով միայն այն կալվածքները կարող էին *վակֆի* վերածվել, որոնց սեփականությունն անվիճելի էր. այսինքն կամ ժառանգված էին, որի մասին նշվում էր փաստաթղթում[68], կամ գնված: Ուստի հաճախ *վակֆ* արվող կալվածքների համար նախապես կազմվել են գնման *դաբալեներ* և ապա ձևակերպվել նվիրատվությունը: Երբ վավերագիրը բովանդակում է և' *դաբալե* և' *վակֆնամե,* այն կոչվում է «դաբալե-վակֆնամե», որպիսիք կան Մատենադարանի վավերագրերի մեջ[69]: Երբեմն նախկինում կատարված գնման մասին նշվում է *վակֆնամեում* շեշտելով, որ գնորդն իր կամքով է *վակֆ* անում, ինչպես օրինակ Սաղմոսավանքին 1668 թ. *վակֆ* արված Օշական գյուղում գտնվող մեկ կտոր այգու *վակֆնամեում*[70]:

Որոշ դեպքերում նույն օրը տեղի ունեցած երկու գործարքները (գնումը և վակֆ անելը) կարող էին ձևակերպված լինել առանձին-առանձին փաստաթղթերով, ինչպես օրինակ 1664 մարտի 23-ին Շահր-ե Ղադիմի այգու գնման ու Մուղնու վանքին *վակֆ* արվելու փաստաթղթերում է[71]:

Պահպանվել է *վակֆնամե* գրված 1704 թ., որով Կավակերտ գյուղի համայնքն է վակֆ անում իր 30 *թաղարի* ցանքատարածությունը Էջմիածնի վանքին[72]:

---

[65] **Папазян А.,** նշվ. աշխ., էջ 118:

[66] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 48, 52, 53:

[67] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 46, 50:

[68] Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 523:

[69] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, էջ 11:

[70] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 142:

[71] Տե՛ս ստորև վավերագրեր հ. 12, 13:

[72] Տե՛ս ստորև վավերագիր հ. 17:

XVII- XVIII դարերի *վակֆնամեների* հիմնական մասը արձանագրել են մասնավոր անձանց հատկապես նախկին պաշտոնյաների ու վաճառականների նվիրատվությունները հայոց վանքերին:

XVII դարում գրված որոշ կարևոր *վակֆնամեներում* պահպանվում է ընդարձակ արաբերեն նախաբանը, որը փառաբանում է Ալլահին, *վակֆ* անողին, ինչպես օրինակ 1658 թ. Նախիջևանի *շարʻի* դատարանում գրված փաստաթղթում, որով Երևանցի Խոջա Հակոբը Նորագեղ գյուղն ամբողջությամբ և Եղվարդի 4.5 *դանգը վակֆ* է անում Էջմիածնին[73]:

Սակայն երբեմն նախաբանը շատ կարճ էր՝ սահմանափակվելով ընդամենը փառաբանման մասին հիշատակությամբ (Ալլահի փառաբանումից հետո - بعد الحمد والبسمله والتصليه)[74]:

Որոշ դեպքերում, երբ կալվածքը փոքր էր, *վակֆ* արվելու մասին նշվում է կալվածքի առքուվաճառքից հետո լուսանցքում արված գրությամբ, ինչպես օրինակ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1655 թ. Օշականի կես *դանգի* գնման կալվածագրում[75]:

Երբ *վակֆ* էր արվում փոքր կալվածք, ասենք մեկ կտոր այգի, բավարար էր լինում ընդամենը *վակֆի* ձևակերպումը մեկ փաստաթղթով[76]:

Մաջլես (مجلس) – Դատական արձանագրություն

Սեֆյան գրագրության ուղեցույցում ***մաջլես*** եզրույթն է օգտագործվում դատական վիճաբանությունների մասին արձանագրություններն ու կայացած համաձայնագրերը գրանցող փաստաթղթերն անվանելու համար[77]: Մատենադարանի XVII- XVIII դարերի փաստաթղթերի մեջ քիչ չեն նաև հայերի ու մահմեդականների միջև ծագած բազում վեճերն արձանագրող այս փաստաթղթերի նմուշները: Այս կարգի փաստաթղթերում ներկայացվում են ծագած խնդրի էությունը, ապա որոշման համար հիմք հանդիսացող փաստարկները, հաշվի առնված փաստաթղթերը կամ իրավական նորմերը և վերջում *շարʻի* ատյանի կայացրած որոշումը: Սովորաբար նման փաստաթղթերը կրում են մի շարք

---

73 Տե՛ս ստորև վավերագիր h. 10:

74 Տե՛ս ստորև վավերագիր h. 12:

75 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 123:

76 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 151, 153:

77 Տես մաջլես կոչված փաստաթղթի նմուշները منشآت سليمانى، ص. 163-162

վկաների կնիքներով վկայությունները տեղի ունեցած նիստին ներկա գտնվելու ու փաստաթղթի համապատասխանությունը շարադրանքին հաստատելու վերաբերյալ:

Այս սխեմայով գրված *շար'ի* արձանագրություններից հետաքրքրության է արժանի 1671 թ. մի փաստաթուղթ, ըստ որի Վերին Ագուլիսի մահմեդականները բողոք են ներկայացնում՝ պնդելով, թե Ագուլիսի վանահայրը վանքի շուրջն ապօրինաբար բարձր պարիսպ ու այլ շինություններ է կառուցել: Տեղի հայերն իրենց հերթին նշում են, որ այդ պարիսպը վանքի վակֆային տարածքում է և վանքի հյուրերի ու ուխտավորների պաշտպանության համար է: Ըստ այդմ, Մուհամմադ Ղասեմ Բեկին կարգադրվում է քննություն անցկացնել, թե արդյոք այդ շինությունները հնում եղե՞լ են և թե՞ ապօրինաբար են կառուցվել: Քննության արդյունքում որոշվում է, որ քանի որ այդ շինությունները պաշտպանության համար են և դրանք ոչ ոքի չեն խանգարում, ուստի նրանց կառուցումը օրենքին հակառակ չէ[78]: Նշված փաստաթուղթը հաստատված է 25 վկաների արաբատառ կնիքներով:

Կաթողիկոսական դիվանում բազմաթիվ են Էջմիածնի կալվածքների շուրջ տեղի ունեցած վեճերն արձանագրող փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի դժվարությունների առաջ էին կանգնում Հայոց կաթողիկոսներն ու բարձրաստիճան հոգևորականները Մայր Աթոռի ու մյուս վանքերի ունեցվածքը պաշտպանելու ճանապարհին: Փաստաթղթերի մի մասի բովանդակությունը փաստում է, որ հաճախ հավակնորդների անհիմն ճանաչվող պահանջները շարունակում էին ձգձգել դատը և լուծվում էին միայն հայ հոգևորականներից որոշ գումար կորզելուց հետո: Ինչպես փաստում է, օրինակ, *շար'ի* դատական նիստի արձանագրությունը բովանդակող 1683 թ. փաստաթուղթը, ըստ որի Վելի Բեկ Սա'ադլուի որդի Օսթադ Ալին բողոք էր ներկայացրել Էջմիածնի *մութավալլիի* դեմ, թե նա ապօրինաբար զավթել է իր պապենական ժառանգություն հանդիսացող Օշականի 6 *դանգ մուլքը*, բայց չի կարողանում հստակ ապացույցով այն վերադարձնել: Վեճը երկարում է և ի վերջո վճիռ է կայացվում, որ Էջմիածինը պետք է 4 *թուման* վճարի հայցվորին, որպեսզի վերջինս այլևս պահանջներ չներկայացնի[79]:

---

[78] Տե՛ս ստորև վավերագիր 16:

[79] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 179:

Էջարենամե (اجارہ نامہ) – Վարձակալագիր

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան ոչ մեծ քանակով վարձակալագրերը՝ հիմնականում գրված XVIII-XIX դարերում: Այս կարգի փաստաթղթերի սակավության պատճառը թերևս այն է, որ հայ սեփականատերերը գերադասում էին իրենց գույքը վարձակալության տալ հայերին և ոչ այլազգիների՝ հետագա խնդիրներից խուսափելու համար, իսկ հայերի միջև նման գործարքները կնքվում էին հայերեն[80]: Ինչպես երևում է այս կարգի որոշ գործարքներ արտացոլող մի քանի փաստաթղթերի բովանդակությունից, եթե որոշ կալվածքներ էլ վարձակալության են տրվել մահմեդականների կամ հակառակը, ապա դա տեղի է ունեցել կամ անհրաժեշտությունից դրդված կամ հանգամանքների բերմամբ:

Այսպես, 1678 թ. կնքված մի *շարի՛աթական* նոտարական փաստաթղթի բովանդակության համաձայն Ուրմիացի Գրիգորի որդի Սահակը վաճառում է Հաջի Վելի Բեկի որդի Ռոսթամին իր մի կտոր 15 *ման* հացահատիկ ցանելու հողը 12000 *դինար* գումարով, որի կեսն է վճարում գնորդը, պայմանով, որ եթե մեկ տարի անց ամբողջ գումարը վաճառողը վերադարձնի, ապա վաճառքը չեղյալ կհամարվի, հակառակ դեպքում վաճառողն այն պետք է վարձակալի տարեկան 2400 *դինար* գումարով[81]: Փաստաթուղթը ցույց է տալիս, որ սեփականատերը գումարի անհրաժեշտության պատճառով էր իր գույքը վաճառել՝ ստանալով արժեքի կեսը և պայման դրել, որ եթե չկարողանա այդ գումարը վերադարձնել, որոշակի գումարով այն վարձակալի:

XVIII դարի երեք պարսկերեն վավերագրերի տվյալները փաստեր են պարունակում Էջմիածնի Թավրիզում գտնվող կալվածքի վարձակալության գործարքի վերաբերյալ: Մուհամմադ Շաֆի'ի (1766/7 թ.) նամակից հայտնի է դառնում, որ վերջինս Նոր Ջուղայի հայ հոգևոր առաջնորդից իմացել էր, որ Թավրիզում գտնվող իր այգուն կից մեկ կտոր այգին Էջմիածնի *վակֆային* կալվածքն է, որի պատերը վնասված լինելով, այդ հողից ոչ մի բերք չէր ստացվում, ուստի առաջարկում է այն 99 տարով իր վարձակալությանը հանձնել՝ վարձակալագիր ուղարկելով: Այդ դեպքում նա այդ հողատարածքն իր այգուն էր միացնելու, պատերը վերանորոգելու էր և տարեկան վարձավճար պետք է հանձներ Թավրի-

---

[80] Տե'ս մասնավորապես Դեհխուդայում գտնվող այգու կապալագիրը (Հ. Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 80-1):

[81] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1092:

զի հայ հոգևորականներից նրանց, ում որ կաթողիկոսը կհանձնարարեր[82]: Համապատասխանաբար, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հավանություն է տալիս այս առաջարկությանը, և գրել տալիս նրա վարձակալագիրը, որով 99 տարով Մուհամմադ Շաֆի'ին վարձով է տրվում Թավրիզի Շամբ-ե Ղազանում գտնվող Էջմիածնի վանական կալվածքը՝ պայմանով, որ վարձակալողն ամեն տարի 1 *խարվար* ցորենով վարձահատույց լինի[83]: Կաթողիկոսական դիվանում այս վավերագրին հաջորդող մյուս վավերագրի բովանդակությունից հայտնի է դառնում, որ այս վարձակալության պայմանագիրը կազմում է Սիմեոն կաթողիկոսը և ուղարկում Մուհամմադ Շաֆիին այն հաստատելու[84]: Այսպիսով, վարձակալագրի վրա դրված Մուհամմադ Շաֆի'ի կնքադրոշմով և *շար'ի* պաշտոնյայի հաստատմամբ կնքվում է Էջմիածնի վերոհիշյալ կալվածքի վարձակալության պայմանագիրը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի վարձակալագրերի հազվագյուտ նմուշների հիմնական մասը վերաբերում է ցանքատարածությունների, այգիների վարձակալությանը, կա նաև մեկը, որով 1733 թ. վարձակալության է հանձնվում Օրդուբադում գտնվող մի քարվանսարա և չիթ պատրաստողների արհեստանոց[85]:

Այս վարձակալագրերը գրված են առանց նախաբանի, նրանցում հիմնականում նշված է վարձակալության տվողի ու վարձակալողի անունները, վարձակալության տրվող գույքը, ժամկետը, վարձի չափը և թե ինչպես պետք է վճարվեր:

Վարձակալման պայմանագրում հնարավոր էր նաև վարձակալման գումարի մի մասի հատկացում վարձակալվող գույքի վիճակի բարելավմանը, ինչպես օրինակ, 1766 թ. կնքված մի պայմանագրում, որտեղ վարձավճարի մի մասը զեղչվում է՝ այգու բարեկարգման համար[86]:

Մռավեզե-նամե (معاوضه نامه) - Փոխանակման համաձայնագիր

Մատենադարանի արխիվում պահվող մի քանի փոխանակման համաձայնագրերը հիմնականում գրվել են XVIII-XIX դարերում հետևյալ պարզ սխեմայով՝ փոխանակողներ (անունները և պաշտոնները),

---

82 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 457:
83 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 458:
84 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 459:
85 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1164:
86 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1365:

փոխանակվող գույքը՝ յուրաքանչյուրինը իր անվան տակ և փաստաթղթի վավերացումը շարի'աթական ոճին համապատասխան ձևակերպումներով:

Այս շարքի հետաքրքրական վավերագրերից է 1769 թ. ապրիլի 20-ին գրված փոխանակման փաստաթուղթը, որով Երևանի Հուսեյն Ալի խանը փոխանակում է Քյուլթափա գյուղի 6 *դանգ մուլքը*, Ֆրանկանոց գյուղի 3 *դանգի* հետ: Գործարքը հաստատված է 26 անձանց՝ *դազիի, շար'ի* սպասավորների ու վկաների կնիքներով[87]: Այս կարգի փաստաթղթերի տվյալները ցույց են տալիս, որ փոխանակվող գույքերը կարող էին լինել տարբեր տեսակի, ինչպես օրինակ 1739 թ. գրված փաստաթղթում, որով Վանանդի Մուհամմադ Նաղիի դուստր Զեյնաբը փոխանակում է իր ժառանգական *մուլքը* հանդիսացող Վանանդում գտնվող 800 *ման* ցանքատարածությունը Խոջա Ավանեսի Վանանդ գյուղի Դերազ թաղամասում գտնվող մեկ ձեռք տան ու այգու հետ[88]: Հնարավոր էր նաև համաձայնության գալ հավելավճարով փոխանակման շուրջ[89]:

Վասիաթնամե (وصیت نامه) - Կտակ

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան նաև քիչ քանակի կտակագրեր: Այս փաստաթղթերը հիմնականում գրված են կարճ նախաբանով կամ առանց նախաբանի: Նշվում է նախ կտակ անողի և ժառանգողի անունները, ապա կտակվող գույքը, որից հետո լուսանցքում հաստատվում էր վկաների կնիքներով: Կտակը սովորաբար կազմվում էր, երբ այն նախատեսում էր որևէ մեկի ժառանգելը, որին գործող ժառանգության օրենքներով այն կարող էր չհասնել: Ինչպես օրինակ, ավելի հեռու ազգականի որդեգրման դեպքում: Նման մի փաստաթուղթ *շար'ի* դատարանում կազմվել է 1761թ., որում նշվում է, որ Կոստանի դուստր Ջավահիրը, որը Քանաքեռցի Ավետիսի կինն էր, ուներ երկու որդիներ՝ Սիմեոն և Խաչատուր անուններով, որոնք նրա ամուսնու մահից հետո մահանում են, մնում է մեկ հիվանդ դուստր և Ջավահիրը իր եղբորորդի Մարգարին որդեգրում է և իր ողջ ունեցվածքը նրան կտակում[90]: Այս կտակը հաստատված է 15 կնիքներով:

Կտակ կարող էր կազմվել նաև հարստությունը *ջադիդ օլ-իսլամնե-*

---

[87] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1375:
[88] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1234:
[89] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1զ, վավ. 1003:
[90] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 440:

ղի ոտնձգություններից պաշտպանելու նպատակով: Այս նպատակով գրված կտակում ձևակերպվում էր նաև *սղի* կամ *սղինամե*, որն ինչպես վերը նշվեց, այն անձեռնմխելի էր դարձնում նոր մահմեդականացած ազգականների ոտնձգությունների համար: Նման կտակ կազմվել է Նոր ջուղայեցի Հովհաննես Թոփչիի կողմից 1669 թ., որում նշվում է, որ վերջինիս ողջ հարստությունը, որը մանրամասն թվարկվում է, ներառյալ նրա կալվածքներն ու գործատները, նա կտակում է իր կնոջը՝ Դադքամին և այդ առթիվ նաև 200 դրամ գումարով *սղի* է կնքում՝ ամրագրելով վերջինիս ժառանգության իրավունքը[91]:

Թամասոք (تمسک) **– Պարտամուրհակ**

Մատենադարանի XVII – XVIII դարերի պարսկերեն վավերագրերի մեջ կան զգալի թվով պարտամուրհակներ: Պարտամուրհակները ևս գրվում էին որոշակի կաղապարով՝ նախ նշվում էր գումարը, ապա նրա կեսը (շփոթմունքից խուսափելու համար), պարտք վերցնողը և թե ումից է վերցնում և որքան ժամանակով: Որոշ պարտամուրհակներում գումարից հետո նախ նշվում է, թե ումից է պարտք արվել, հետո պարտք անողի անունը, ապա ժամկետը: Երբ գումարը մեծ էր, փոխարենը գրավ էր հանձնվում որևէ մի գույք, ինչպես օրինակ 1644 թ. գրված մի մուրհակում, որի համաձայն Թահմասպ Ղուլի Բեկ Սա'ադլուի որդիներ Մեջնուն Բեկն ու Սեֆի Ղուլի Բեկը 1 տարով Փիլիպոս կաթողիկոսից պարտք են վերցնում Թավրիզի 6 *թուման* գումար և որպես գրավ նրան հանձնում Օշականի իրենց պատկանող մեկ *դանգ մուլքը*[92]:

Պարտամուրհակները սովորաբար հաստատված են *շար'ի* ատյանի մեկ պաշտոնյայի ու վկաների կնիքներով:

Ղաբզ (قبض) **– Ստացական**

Ստացականները տրվում էին ամենատարբեր տիպի վճարումները հավաստելու առիթով: Դա կարող էր լինել առքուվաճառքի գործարքով նախատեսվող գումարի կամ պարտքի մարում[93], հարկերի վճարում, որպես ռոճիկ (մավաջիբ, թանխահ) տրվող գումար: Ստացականում բնականաբար նշվում է, թե ում կողմից էր այն տրված, որ տարվա և

---

[91] Տե՛ս ստորև վավերագիր h. 14:

[92] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 66:

[93] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 461, 509, թղթ. 1է, վավ. 1106, 1132, 1150:

ինչի համար, այնուհետև նշվում էր, թե ումից էր այն ստացվել և գումարի չափը՝ հիմնականում *սիաղ* թվային համակարգով, կամ և՝ *սիաղով* և՝ սովորական արաբական թվերով: Ստացականում նշված վճարը կարող էր կատարված լինել նաև բնամթերքով՝ ինչպես օրինակ մետաքսով[94]: Փաստաթղթի ստորին հատվածում նշվում էր ստացականի տրման ամիսը և թվականը, որից հետո փաստաթուղթը հաստատվում էր *շար'ի* պաշտոնյայի կնիքով:

Վեքալաթ-նամ[չ]ե (وکالت نامچه) - Լիազորագիր:

Առքուվաճառքի, դատական վեճերի ու այլևայլ գործարքների գործընթացը հաճախ տեղի էին ունենում վաքիլների՝ լիազոր անձանց մասնակցությամբ: Վեքալաթ-նամեները կազմվում էին դատական ատյանի առաջ լիազոր անձանց իրավունքները հաստատելու նպատակով: Ժողովածուի մեջ ընդգրկված Քաշաթաղի հայկական գյուղերի ավագանու անունից տրված վեքալաթ-նամեն[95] ցույց է տալիս մահմեդական պաշտոնյաների հետ փոխհարաբերությունների կարգավորման եղանակներից մեկը: Այն է լիազոր անձանց տրված հանձնարարականով իրենց խնդիրները նրանց ներկայացնելն ու լուծում ակնկալելը: Այն նաև արձանագրում է տվյալ ժամանակաշրջանում Քաշաթաղի հայկական գյուղերից մի քանիսի՝ իրենց օտարահունչ անվանումներով ու հայ մելիքների ու գեղջավագների անուններով, որոնք հաստատվում են նաև ժամանակաշրջանի այլ աղբյուրներով[96]:

Մահզար (محضر)- Համախոսական (կամ ընդհանրական վկայագիր)

Մահզար էին կոչվում որևէ իրողություն հաստատելու համար կազմված ընդհանրական համախոսական վկայագրերը[97]: Շահական հրովարտակներում հաճախ է նշվում այս փաստաթղթերի հիման վրա նրանց հրապարակված լինելու մասին[98]:

---

[94] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 514:

[95] Տե՛ս ստորև վավերագիր 16:

[96] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ք. Կոստիկյան, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, էջ 168-169:

[97] منشآت سلیمانی، ص. 163

[98] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 11, 14, 57, 65, էջ 419, 430, 606, 639:

Այս փաստաթղթերը գրվում էին հետևյալ պարզ սխեմայով: Առանց նախաբանի շարադրվում էր նրա գրության նպատակը և բուն նյութը: Համախոսական վկայագրերի ստորին և աջ լուսանցքում մեծ տեղ էր հատկացվում վկաների կողմից արված նշումներին նրանց վկա լինելու մասին՝ հաստատված լինելով նրանց կնիքներով կամ մատնահետքերով: Համախոսական-վկայագրի վերին հատվածներում սովորաբար դրվում էին *շարժ* անդամ(ներ)ի ու տեղի մահմեդական պաշտոնյաների ու կառավարիչների հաստատումը՝ նրանց կնիքներով: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան այս կարգի մի քանի փաստաթղթերը, որոնք կազմվել են Աղվանից կաթողիկոսների ու հայ մելիքների այլևայլ իրավունքների հաստատմանը տրված ընդհանուր համաձայնությունը հավաստելու առիթով: Այդ փաստաթղթերն արտացոլում են Աղվանից եկեղեցու ներքին խնդիրները, հայկական բնակավայրերից գանձվող հարկերի բաշխման ու գանձման հարցերը, որոնց վերաբերող որոշումներում կարևոր դեր էին խաղում հայ մելիքները: Նման փաստաթղթերի պատմական բարձր արժեքը պայմանավորված է նաև նրանցում մեծ թվով հայկական բնակավայրերի օտար անվանումների հիշատակմամբ, որը հաստատում է նրանց էթնիկ կազմի հայկական լինելը, ինչպես նաև բովանդակում տվյալներ նրանց աշխարհիկ ու հոգևոր վերնախավի անդամների մասին:

Արցախի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի բազմաթիվ հայկական բնակավայրերի անուններն են նշվում Աղվանից կաթողիկոսներ Եսայու, Հովհաննեսի ու Սարգսի[99] կաթողիկոսական իրավունքների հաստատման նպատակով կազմված համախոսականներում:

Ուշագրավ են նշված համախոսական վկայագրերից վերջինի (վավ. 25) ստեղծման հանգամանքները: Աղվանից կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի սպանությունից (1786 թ.) հետո կարճ ժամանակ անց Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմից ու հայ մելիքներ Աբովի, Մեջլումի և Շահնազարի աջակցությամբ Աղվանից կաթողիկոս է հաստատվում Իսրայելը[100]: Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1787 թ. վերահաստատում է Իսրայել կաթողիկոսին որպես «միահեծան հայրապետ ի

---

[99] Տե՛ս ստորև վավերագրեր 19, 24, 25:

[100] Այս մասին մանրամասն տե՛ս **Լ. Մկրտումյան**, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX, դարերում, Երևան, 2006, էջ 174-176, նաև **Ղուկաս Կարնեցի**, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Բ, Երևան, 1984, էջ 220:

վերայ տանդ Աղուանից» և հորդորում Շամախու և Նուխու թեմերին ենթարկվել նրան[101]:

Ղարաբաղի խանը միաժամանակ ազատ է արձակում Հովհաննեսի եղբայր Սարգսին և հաստատում նրան Խաչենի առաջնորդի դիրքում[102]:

Սարգիս Հասան-Ջալալյանը չէր վախենում Իբրահիմ խանին դիմադրություն ցուցաբերել, մասնավորապես հոգևոր հարցերում: Այնուամենայնիվ, 1791թ. Սարգիս եպիսկոպոսը ապահովություն չտեսնելով Գանձասարում՝ փախչում է Գանձակ[103]:

1787թ. Հերակլ Բ-ի դեպի Ղարաբաղ կատարած անհաջող ռազմարշավին վրացիների կողմում հանդես գալուց հետո Մելիք Աբովն ու Մելիք Մեջլումը ստիպված տարագրվել էին Ղարաբաղից[104]: Նրանք ու նրանց հյուրընկալած Ջավադ խանը ձգտում էին վերացնել Գանձակի խանության տարածքի թեմերի նույնիսկ անվանական ենթակայությունը Ղարաբաղի խանի դրածո Իսրայել կաթողիկոսին:

Այս պատճառով կազմվում է ստորև ներկայացվող 1794 թ. *մահզարը* (վավ. 25)՝ ստանալու համար Գանձակի խանի հրովարտակը նրա կաթողիկոսական իրավունքների հաստատմամբ: Այդ հրովարտակը պատճենի տեսքով առկա է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի մեջ[105]:

Համախոսականում նշվում է Էջմիածնի կողմից Աղվանից կաթողիկոսի հաստատման անկարևորությունը և որ այդ ժամանակ Աղվանից կաթողիկոսության աթոռը թափուր էր. հանգամանքներ, որոնք իրականությանը չեն համապատասխանում[106]:

1794թ. Գանձակի խանի ու այնտեղ հաստատված վերոհիշյալ հայ մելիքների գործուն աջակցությամբ Սարգիս եպիսկոպոսն օծվեց Աղվանից կաթողիկոս[107]:

Սարգիս կաթողիկոսը 1798թ. «սաստկացած խռովության» պատճա-

---

101 **Ղուկաս Կարնեցի**, Դիվան Հայոց պատմութեան, հ. Բ, էջ 241- 252:

102 **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 177:

103 **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 178:

104 Նույն տեղում:

105 Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 238:

106 Այդ շրջանում Աղվանից կաթողիկոսն էր Իսրայել Ջրաբերդցին, որի մահվան մասին Գանձակ տեղափոխված հայ մելիքները Սարգսին կաթողիկոս հաստատելու նպատակով կեղծ լուրեր էին տարածում (Այս մասին մանրամասն տե՛ս **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ. էջ 181-183):

107 **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 180-1:

ռով փախչում է Թիֆլիզ[107]: Այնուհետև որոշ ժամանակով հաստատվում է Հաղպատում որպես այնտեղի արքեպիսկոպոս: Ռուսաստանի կողմից Գանձակի ու Ղարաբաղի խանությունների նվաճումից հետո Սարգիսը վերադառնում է Գանձասար և զբաղեցնում կաթողիկոսի աթոռը: Պահպանված վավերագրերի բովանդակությունից հայտնի է դառնում, որ Սարգսի կաթողիկոսական իրավունքները հաստատվել էին Ղարաբաղի Մեհդի Ղուլի խանի 1812, 1813 և 1815 թվականների հրամանագրերով[108]: Այնուամենայնիվ, 1815թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է և Սարգիսը պաշտոնապես հռչակվում է որպես միայն արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի[109]:

XVII-XVIII դարերում Շիրվանի թեմի համար Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների միջև ընթացող պայքարն է արտացոլվել Եսայի կաթողիկոսի օրոք գրված ստորև ներկայացված համախոսական վկայագրում (վավ. 19):

Շիրվանի շրջանում հայեր բնակվել են դեռևս վաղնջական ժամանակներից, որոնք զգալի քանակ կազմելով հատկապես XVII-XVIII դարերում, բաշխված էին շուրջ 60 հայաբնակ գյուղերում[110]:

1606 թ. շահ Աբբաս Ա-ի հրովարտակի բովանդակությունից պարզ է դառնում, որ Գանձասարի (կամ Աղվանից) իրավունքները տարածվում էին միայն Խաչենի ու Գանձակի շրջանների վրա[111]: Նույն շահից 1617 թ. ստացած Էջմիածնի Մելքիսեթ կաթողիկոսի հրովարտակում Գանձակի թեմը ևս նշվում է էջմիածնապատկան թեմերի շարքում[112]: Մինչդեռ 1634 թ. շահ Սեֆիի հրովարտակում շեշտվում է, որ Գրիգոր կաթողիկոսի ենթակայության տակ են գտնվում «Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Շամախիի ու Զարուզիբիլի» հայ համայնքները[113]:

Ինչպես հայտնի է դառնում շահ Աբբաս Բ-ի 1650թ. հրովարտակի բովանդակությունից, դեռ շահ Սեֆիի 1634թ. մեկ այլ հրովարտակով

---

[107] **Երիցեանց Ա. Դ.**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մաս Ա (1800 - 1832), Թիֆլիզ, 1894, էջ 251:

[108] Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 160, 248, 249, 258

[109] **Ալ. Երիցեանց**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 252:

[110] Շիրվանի հայության պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս **Գ. Ստեփանյան**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 19-34

[111] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, էջ 44:

[112] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 12:

[113] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 23:

Շիրվանի թեմը հաստատվել էր Էջմիածնի ենթակայության տակ և այդ հրովարտակը վերահաստատվում է շահ Աբբաս Բ-ի հիշյալ հրովարտակով[114]: Միաժամանակ շահ Սեֆիի 1634թ. մի հրովարտակով նաև Քաշաթաղի թեմ հաստատվում է Էջմիածնի ենթակայության տակ[115]:

Աղվանից Պետրոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին[116] Շիրվանի թեմը վերահաստատվում է որպես Աղվանից կաթողիկոսության պատկանող թեմերից մեկը[117]: 1663 թ. շահ Աբբաս Բ-ից ձեռքբերած հրովարտակով Պետրոսը հաստատվում է որպես Գանձակի, Ղարաբաղի և Շիրվանի հայության կաթողիկոս[118]: Այս հրովարտակի հակառակ կողմում նշումներ կան շահ Սեֆիի ու Աբբաս Բ-ի վերը նշված հրովարտակների մասին, նաև նույն Պետրոս կաթողիկոսի կողմից իր որպես Գանձակի, Ղարաբաղի և Շիրվանի հայության կաթողիկոսի իրավունքները 1655 թ. ձեռք բերված հրովարտակով հաստատելու մասին[119]:

Պայքարը Շիրվանի թեմի ենթակայության հարցի շուրջ շարունակվում է նաև Պետրոս Խանձքեցու մահից հետո, Երեմիա Հասան-Ջալալյանի կաթողիկոսության շրջանում (1676-1700 թթ.): Վերջինիս կաթողիկոսական իրավունքները հաստատող 1675 թ. շահ Սուլեյմանի հրովարտակում նշվում է, որ նա հաստատվում է որպես Գանձակ - Ղարաբաղի ու Շիրվան – Շամախու հայերի կաթողիկոս[120]:

Ինչպես հայտնի է, զուգահեռ այլ աղբյուրների տվյալներից Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու միջնորդությամբ Երեմիա Հասան-Ջալալյանի աթոռակալության տարիներին Շիրվանի ու Գանձակի թեմերը դրվել էին նրան հակաթոռ Սիմեոն Խոտորաշենցի կաթողիկոսի ենթակայության տակ[121]: Հետագայում Ամենայն Հայոց կաթողի-

---

[114] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 42:

[115] **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 22:

[116] Ըստ Մ. Սմբատյանցի Պետրոս Գ Խանձկեցին Աղվանից կաթողիկոս է եղել 1653-1675թթ. (Մ. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանացն Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ՚ի Շամախւոյ թեմի, Տփխիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 237):

[117] **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 20-21:

[118] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14:

[119] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 14, էջ 50:

[120] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 43:

[121] **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 20:

կոս դարձած Եղիազար Այնթապցին այդ թեմը ենթարկում է Էջմիածնին[122]:

Շիրվանի թեմը Աղվանից կաթողիկոսությանը ենթարկելու ուղղությամբ ավելի վճռական քայլեր է ձեռնարկում Եսայի Հասան-Ջալալյանը[123]: Վերջինիս նախաձեռնությամբ կազմվում են նաև համախոսականներ, որոնցում Շամախու, Շիրվանի ու Շաքիի հայերը իրենց ենթակա են համարում Աղվանից կաթողիկոսին: Այդ համախոսականներից մեկը հայերեն է և հաստատված Շիրվանի ու Շաքիի 14 գեղջավագների, հոգևորականների կնիքներով ու բազմաթիվ մատնադրոշմներով[124], մյուսը՝ պարսկերեն և հաստատված 100-ից ավելի վկաների՝ Շաքի, Շիրվանի ու նաև Ղարաբաղի գեղջավագների, մելիքների ու հոգևորականների կնիքներով ու ստորագրություններով[125]:

1700 թ. հրապարակվում է շահ Սուլթան Հուսեյնի հրամանագիրը, որով հանձնարարվում էր Շիրվանի, Կախեթի ու Ղարաբաղի տեղական իշխանություններին օգնություն ցուցաբերել Աղվանից կաթողիկոսին՝ իրեն ենթակա Շիրվանի հայերից եկեղեցական հարկերը հավաքելու հարցում[126]: Նույն շրջանում Շիրվանի հայությանն ուղղված կոնդակ է գրում Նահապետ Եդեսացի կաթողիկոսը՝ պատվիրելով նրանց կաթողիկոս ճանաչել ու հնազանդվել Եսայիին[127]:

Աղվանից Եսայի Հասան-Ջալալյանին հաջողվում է այս հարցի կապակցությամբ Աղվանից կաթողիկոսությանը ձեռնտու պայմաններով համաձայնության գալ նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու հետ: Վերջինիս 1708 թ. կոնդակով Շիրվանի թեմը հանձնվում է Աղվանից կաթողիկոսությանը[128]: Սակայն, որքան էլ տարօրինակ է, նույն Ալեքսանդր կաթողիկոսի կողմից ձեռքբերված շահ Սուլթան Հուսեյնի 1712թ. հրովարտակով Շիրվանի թեմը նորից ճանաչվում է Էջմիածնի անմիջական ենթակայության տակ[129]: Ամենայն հավանականությամբ հենց այս պատճառով Եսայի Աղվանից կաթողիկոսը չի

---

[122] **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 21:

[123] Եսայի Հասան-Ջալալյանը Գանձասարի կաթողիկոս է եղել 1701-1728 թթ.:

[124] Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 3:

[125] Տե՛ս ստորև վավերագիր 19:

[126] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 63:

[127] **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 22:

[128] Նույն տեղում

[129] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 82:

ներկայանում Աստվածատուր Համադանցի կաթողիկոսին, որը 1715թ. հաջորդել էր մահացած Ալեքսանդրին: Ինչպես իրավացի կերպով նկատում է Լ. Մկրտումյանը, Շիրվանի թեմի կարգավիճակը օգտագործում էին Աղվանից կաթողիկոսության գործերի վրա ներազդելու ու կաթողիկոսներին իրենց հնազանդ պահելու համար[130]: Դա երևում է Աստվածատուր Համադանցու դիրքորոշումից, որը բարկանալով Եսայու չներկայանալու պատճառով «նորից տերունի է առնում Շամախին, Շաքին, Շիրվանը և սրանց ենթակա մասերը»[131]: Հետագայում, 1719թ. երբ Եսայի կաթողիկոսը աղքատությունից դրդված ներկայանում է Սուրբ Աթոռ, Աստվածատուր կաթողիկոսը կոնդակ է գրում՝ հորդորելով Շամախու և շրջակա շրջանների հայությանը նվիրակական գումարները հանձնել Աղվանից կաթողիկոսին[132]:

Հետագայում Ղարաբաղի խանի 1812 թ., Շաքիի Ջա'ֆար խանի 1813 թ. և Շամախու Մուսթովֆի խանի 1814 թ. հրամանագրերով Շիրվանի թեմը հաստատվում է Գանձասարի Սարգիս կաթողիկոսի ենթակայության տակ[133]:

Հայոց վանքերի ու բնակավայրերի անվանումները պարսկերեն վավերագրերում

Պարսկերեն *շարիաթական* - նոտարական վավերագրերում ևս ինչպես պարսկական մյուս աղբյուրներում Արևելյան Հայաստանի բնակավայրերն ու շրջանները, ինչպես նաև նրանցում գտնվող հայոց վանքերն ու եկեղեցիները հիմնականում նշվում են իրանականացված ու թյուրքացված օտար տարբերակներով[134], որոնք դժվարություններ են ստեղծում ուսումնասիրողների համար դրանք հայկական անվանումների հետ նույնացման հարցում, ինչպես նաև առիթ են տալիս դրանց հիման վրա բնակչության էթնիկ կազմի հետ կապված անհիմն շահարկումների համար: Այնուամենայնիվ վավերագրերի բովանդակությունը

---

130 **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 22:

131 **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 117:

132 Նույն տեղում:

133 Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 247, 255ա, 256ա:

134 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները պարսկերեն վավերագրերում, Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2017 հ. 37, էջ 123-153:

կասկած չի թողնում այդ բնակավայրերի հայկական լինելու հարցում և ինքնին հերքում նման բոլոր կեղծիքները:

Հայկական բնակավայրերի օտարահունչ անունների մի մասը տրվել են XII դարից ի վեր նրանց հարևանությամբ հաստատվող թյուրքական ծագում ունեցող քոչվոր ցեղերի ու իշխող վերնախավի կողմից: Հարկ է հիշել, որ թյուրքական ցեղերը և նրանց ավագանին գերիշխող դիրք էին զբաղեցնում պատմական Հայաստանի շրջանները իրենց պետության մեջ ներառած Ակ Կոյունլուների և Կարա Կոյունլուների տիրապետության շրջանում: Սեֆյան պետության ժամանակաշրջանում նրանց փոխարինում են ղզլբաշ ցեղերի առաջնորդները, որոնք կառավարում էին ոչ միայն Հարավային Կովկասի այլև ողջ Իրանի նահանգների մեծ մասը[135]: Բացի այդ Սեֆյան գահակալները շարունակաբար բնակեցնում էին իրենց երկրի սահմանային վարչական միավորների մեջ ընդգրկված Արևելյան Հայաստանի շրջանները թյուրքական ղզլբաշ ցեղերով, որոնք նրանց ռազմական հենարանն էին Օսմանյան կայսրության դեմ պայքարում: Այդ քաղաքականությունը բնորոշ էր ինչպես Սեֆյան վաղ շրջանի շահերին, այնպես էլ շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանին[136]: Սեֆյան պետության մեջ ընդգրկված Արևելյան Հայաստանի շրջանները կառավարող թյուրք ղզլբաշ ցեղերի ավագանուն ժառանգական տիրույթներ էին տրվում այդ տարածքներում, ինչպես օրինակ Ղարաբաղի շրջանը, որը կառավարում էին ղաջարական զիադօղլի ցեղից սերող *բեկլարբեկները* և որտեղ ստեղծվել էին «իգիրմիդորտ» (24) և «օթուզիքի» (36) կոչված արհեստական ցեղային միությունները, Նախիջևանի շրջանը, որը ուսթաջլու ցեղի ճյուղ հանդիսացող քենգերլու ցեղի ժառանգական *օլքան* էր[137]: Ուստին պարսկերեն փաստաթղթերում նշվող հայկական տեղանունների ու հայոց վանքերի անվանումների փոփոխությունները հիմնականում կապված են այդ ցեղերի խոսակցական ու իրանական պետության պաշտոնական լեզուների՝ թուրքերենի ու պարսկերենի հնչյունական և տառային համա-

---

135 The Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), edited by P. Jackson, Cambridge-London-New York-New Rochelle-Melbourne Sydney, p. 358.

136 H. Maeda, Exploitation of the Frontier: The Caucasus Policy of Shah 'Abbas I, Iran and the World in the Safavid Age, London, New York, 2012, p. 477.

137 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, 1949, сс. 132-136.

կարգերի, նաև լեզվամտածողության որոշ առանձնահատկությունների հետ:

Հայոց վանքերի անվանումները

Հայկական վանքերն ու եկեղեցիները Մատենադարանի պարսկերեն վավերագրերում սովորաբար նշվում են այն բնակավայրերի անուններով, որոնցում դրանք գտնվում են. ինչպես օրինակ Ագուլիսի վանք, Դարաշամբի վանք, Շոռոթի, Բիստի[138], Մեյսարիի ու Մուղնու վանք: Եկեղեցիների անունները (Ս. Ստեփաննոս Նախավկա, Ս. Թովմա Առաքյալ, Ս. Աստվածածին, Ս. Թադեի և այլն) սովորաբար չեն նշվում: Դրանք նշվում են միայն այն դեպքում, երբ հրամանագիրը հրապարակվել է տվյալ եկեղեցու վերանորոգումը թույլատրելու համար, ինչպես օրինակ Արցախի Քոչիզ շրջանի Հիրհեր գյուղի Ս. Գրիգորիս և Երևանի նահանգի Կարբի շրջանի Մուղնի գյուղի Ս. Գևորգ եկեղեցիների վերանորոգումը թույլատրող հրովարտակներում[139]: Կամ էլ երբ մեկ վայրի անվան հետ էին կապվում մեկից ավելի վանքերի անուններ, ինչպես օրինակ Քասաղի ձորում գտնվող Օհանավանքն ու Սաղմոսավանքը[140]:

Երբեմն օտար անվան հիմքում տվյալ վայրում առկա եկեղեցիների թիվն էր, ինչպես օրինակ Էջմիածնի վանքի անվանումն է՝ «Ուչքիլիսա», որը թուրքերեն նշանակում է «երեք վանք»՝ մեկ անվան մեջ ընդգրկելով նաև Էջմիածնին մոտ գտնվող Ս. Գայանեի ու Ս. Հռիփսիմեի վանքերը: Ուչքիլիսա են կոչվել նաև պատմական Հայաստանի մի քանի այլ հայկական վանքեր ու գյուղեր[141], այնուամենայնիվ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերում նշվող «Ուչքիլիսա» անվանումը վերաբերում է միայն Էջմիածնի վանքին: Եդիքիլիսե անվամբ է հայտնի Վարագավանքը (կամ Վարագի Ս. Խաչ) Վանում[142], որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է 7 վանք և նկատի ունի այդ վանական համալիրի մեջ ընդգրկված եկեղեցիների քանակը:

---

[138] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 15:

[139] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 16, 19:

[140] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9:

[141] **Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 198:

[142] **L. Sahakyan**, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal-Arod Books, 2010, p. 29.

Գունանունները[143] լայնորեն օգտագործվում են հայոց վանքերի օտար անվանումներում՝ ելնելով այն քարերի գույնից, որոնցով կառուցվել են, ինչպես օրինակ Ղարաքիլիսա[144] և Ղըզըլքիլիսա կամ Ղըզըլվանք անվանումները, որոնցից առաջինը թուրքերենից թարգմանաբար նշանակում է «սև վանք», մյուսը՝ «կարմիր վանք»: Ընդ որում հայտնի են մի քանի հայկական վանքեր, որոնք պարսկերեն վավերագրերում հանդես են գալիս այդ անվանումներով:

1489 թ. մի կալվածագրում Ղըզըլվանք է կոչվում Չոխուր Սա'ադի վիլայեթի մեջ մտնող Գառնիի շրջանի մի գյուղ, որ պատկանում էր Հավուցթառի Զաքարիա վարդապետին, իսկ վանքը նշվում է հենց այդպես՝ «Հավուսթառ – هوستار»[145]: Ինչպես հայտնի է դառնում որոշ ժամանակ անց՝ 1505 և 1526 թթ. գրված վավերագրերից, այդ անունը գործածվում էր նաև Հավուցթառի վանքի վերաբերությամբ[146]: Ղըզըլվանք էր կոչվում նաև Սյունիքի վանքերից մեկը, որի վերանորոգման համար հրովարտակ է ձեռքբերվում 1669 թ.[147]: Դա ամենայն հավանականությամբ Ղ. Ալիշանի կողմից նշվող Վաղադին գյուղի եկեղեցին է, որը կոչվել է Ս. Ստեփաննոս Նախավկա և հայտնի է նաև Կարմիր Վանք անվամբ[148]: Նույն անվամբ է կոչվել նաև Աստապատ գյուղի Ս. Ստեփաննոս վանքը[149]: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կան այս երեք վանքերին էլ վերաբերող փաստաթղթեր: Աստապատի Ղըզըլվանքին են վերաբերում 19-րդ դարի սկզբի մի քանի պարսկերեն վավերագրեր, որոնք փաստում են վանքի ծանր դրության ու այդ կապակցությամբ Նախիջևանի խանի հետ նամակագրության, նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ ու Իրանի թագաժառանգ

---

[143] Հայկական տեղանուններում գունանունների կիրառության մասին տե'ս **Ս. Գ. Ասատրյան,** Արցախի տեղանունների դասակարգման հարցի շուրջ, Արցախ. ժողովրդագրության և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 34:

[144] Ղարաքիլիսաների վերաբերյալ տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 125:

[145] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, Երևան, 1968, վավ. 8:

[146] **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 16, Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 9:

[147] **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 34:

[148] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 219:

[149] **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 511:

Աբբաս Միրզայի հաստատմամբ կատարված վանքի առաջնորդի դիրքում Խաչատուր եպիսկոպոսի նշանակման ու որոշ հարկերի կրճատման մասին[150]:

Ստորև ներկայացվող վավերագրերից երկուսը (վավերագրեր 12, 13) մատնանշում են, որ Ղըզըլվանք է կոչվել նաև Մուղնու Ս. Գևորգ վանքը, որը կառուցվել էր սև և կարմիր տուֆ քարերով[151]:

«Ղարաբաղ» և «Չոխուր Սա'ադ» անվանումների ծագումը

Պատմական Հայաստանի և մասնավորապես Հայոց արևելից կողմանց վարչա-տարածքային միավորների՝ գավառների առավել վաղ շերտը ձևավորվել ու զարգացել է հայկական միջավայրում[152]: XIII-XIV դարերից գործածության մեջ են մտնում հայկական բնակավայրերի հարևանությամբ հաստատված քոչվոր ցեղերի ու տարածաշրջանում իշխող դիրք զբաղեցնող նրանց վերնախավի շրջանակներում օգտագործվող մի շարք անվանումներ, որոնք մուտք են գործում պարսկալեզու գրագրության լեզվի մեջ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «Ղարաբաղ» անվան պատմությունը, որն առաջին անգամ հիշատակում է իրանցի պատմագիր Ռաշիդ ալ -Դինն (1247-1318) իր «Տարեգրությունների ժողովածու» կոչված պատմական աշխատության մեջ, որպես Առանում գտնվող ձմեռանոցի անվանում: Նրա առաջին հիշատակությունը կապված է Ահմադ Իլխանի օրոք Կոնկուրտայի դեմ տարվող դատի հետ, որը տեղի է ունենում «Առանի Ղարաբաղում» 1284 թ.[153]: Այս հեղինակի մյուս հիշատակությունները կապվում են Ղազան խանի 1295 թ. պաշտոնական թագադրության և 1301թ. այդ վայրում իր ձմեռանոցը

---

150 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ե, վավ. 782, 836, թղթ. 1ը, վավ. 1486, 1530, 1684:

151 **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 890:

152 Այդ մասին մանրամասն տե'ս **Գ. Մ. Բադալյան,** Հայոց արևելից կողմերի տեղանուններն ըստ հայկական սկզբնաղբյուրների, Արցախ. ժողովրդագրության և տեղանվանակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում (կոլեկտիվ մենագրություն), Աշխատանքային տետրեր 3-4 (31-32). 2014, էջ 36-44:

153 Տե'ս **Рашид-ад-Дин,** Сборник летописей, т. III. Москва-Ленинград, 1946, с. 104:

հաստատելու հետ[154]: Ընդ որում, ամեն անգամ «Ղարաբաղ» անվանումը հիշատակելիս պատմագիրը շեշտում է, որ այն գտնվում է Առանում:

Հարկ է նշել նաև, որ «Ղարաբաղ» անվանումը չի հիշատակվում Ռաշիդ ալ-Դինից մի փոքր վաղ հանդես եկած պարսկալեզու մեկ այլ պատմագրի՝ Ալա ալ-Դին Ջուվեյնիի «Աշխարհի նվաճումը» երկում: Ջուվեյնին, որ մահացել է 1283 թ., Կուր-Արաքսյան միջագետքի մասին խոսելիս այն նշում է «Առան» անվամբ: ՈՒստին կարելի է ենթադրել, որ նրա կենդանության օրոք գործածական չէր «Ղարաբաղ» անվանումը:

XVI դարի առաջին կեսին անհայտ հեղինակի պարսկալեզու պատմագրական երկում որպես Ղարաբաղի մեջ մտնող վայր երկու անգամ հիշատակվում է Սուլթանբուդը[155], որն ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Կուրի և Խաչենագետի աջ և Գարգառի ձախ ափերի ու դաշտաբերանի մեջ ընկած Արցախի Տուչքատակ կամ Տիգրանակերտ գավառի ստորին մասում գտնվող «մի հողե բերդ էր»[156]: Ամենայն հավանականությամբ՝ Ղարաբաղն այդ ժամանակաշրջանում ընդգրկում էր հիշյալ հայկական գավառը, և ձմեռանոցային հարմար վայր էր պատմական Հայաստանի արևելյան շրջաններն իրենց տիրապետությանը ենթարկած մոնղոլ տիրակալների, այնուհետև նրանց փոխարինած Ակ Կոյունլու, Կարա Կոյունլու և Սեֆյան իշխանությունների համար: ՈՒստի այդ տեղանունը շարունակաբար օգտագործվում է հետագա պարսկալեզու պատմագրության մեջ ու փաստա-վավերագրական նյութերում՝ կիրառվելով ավելի ու ավելի հաճախ և ժամանակի ընթացքում տարածվելով շրջակա ավելի ընդարձակ տարածքի վրա[157]:

«Ղարաբաղ» անվանումը Գանձակի բեկլարբեկության վրա տարածվել է ուշ Սեֆյան տիրապետության ժամանակաշրջանում և ավելի հաճախ սկսում է գործածվել XVII դարում[158]: XVII դարի երկրորդ կեսից այս անվանումը պարսկական վավերագրերում ավելի ու ավելի հաճախ է գործածվում Գանձակի բեկլարբեկության իմաստով «Գանձակի» փո-

---

154 Տե՛ս նույն տեղում, էջ 166, 188, **Рашид-ад-Дин,** Переписка. Москва, 1971, с. 231:

155 جهانگشای خاقان (تاریخ شاه اسماعیل) تالیف در 948، اسلاماباد، مرکز تحقیقات تارسی ایران و پاکستان، ص. 76، 313.

156 Տե՛ս **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, Երևան, 1996, էջ 174:

157 Այս մասին ավելի մանրամասն տես՝ **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 127-129:

158 Տե՛ս **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ: Ե., 1959, էջ 100, 110, 125:

խարեն կամ նրա հետ միաժամանակ[159]: XVII դարի երկրորդ կեսին, պարսկերեն աշխարհագրական երկում Ղարաբաղը նշվում է որպես մի «շրջան, որտեղ կան քաղաքներ, մեծ բնակավայրեր ու ամրոցներ, և այնտեղ էր գտնվում զորք ունեցող հզոր ու անկախ *բեկլարբեկների* ամրացված նստավայրը: Ըստ պատմագիրների՝ դա մի երկիր է, որ գտնվում է Շիրվանի ու Ատրպատականի միջև»[160]:

Այրարատյան նահանգի և Երևանի խանություն անվան հետ զուգահեռ պարսկերեն վավերագրերում սկսած XV դարից գործածական էր Չոխուր (Չուխուր) Սա'ադ անվանումը, որը հանդես է գալիս նաև որպես Սեֆյան պետության վարչական միավոր՝ «Չոխուր Սա'ադի վիլայեթ» ձևով: Այդ անվան ծագումը ուսումնասիրած Հ. Փափազյանը այն կապում է XIV դարի վերջերին Երասխաձորում, Սուրմալիի ու մերձակա այլ վայրերում բնակվող թուրքմենական ցեղերն իր իշխանության ներքո միավորած Ամիր Սա'ադի անվան հետ[161]: Այդ շրջանները սկսում են կոչվել «Չոխուր Սա'ադ – چخور سعد» (Սա'ադի փոս), հայկական աղբյուրներում՝ «Սահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթու»[162]: Չոխուր Սա'ադ անվան առաջին հիշատակությունը գտնում ենք 1428 թ. Վաղարշապատին վերաբերող կալվածագրում, որտեղ այդ գյուղը նշվում է «Վրաստանի շրջաններից Ազերբայջանի երկրին ենթակա Չոխուր Սա'ադի վիլայեթում»[163]: Ընդ որում նույն տարածքի վերաբերությամբ XV դարի պատմագիր Աբու Բեքր Թեհրանին իր «Դիարբեքրի պատմություն» երկում օգտագործում է նաև «Չոխուր-ե Սուրմալու», այսինքն «Սուրմալուի փոս» անվանումը[164]:

«Չոխուր Սա'ադ» անվանումը հաճախ է հանդիպում պարսկերեն վավերագրերում ու այլ աղբյուրներում՝ գործածվելով ընդհուպ մինչև նրա միացումը Ռուսաստանին 1828թ.:

---

159 Տե'ս **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3, 14, 26, 33, 55, 59, 60, 63:

160 Տե'ս مختصر مفید، جغرافیای ایران زمین در عصر صفوی، بکوشش ایرج افشار، با همکاری محمد رضا ایویی مهریزی، تهران 1390، ص. 168.

161 **Հ. Փափազյան**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դար), Տեղեկագիր 1960, h. 7-8, էջ 25:

162 Տե'ս **Առ. Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 104, 201, 474:

163 **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 4, էջ 60:

164 طهرانی ابو بکر، کتاب دیاربکریه تاریخ حسن بیک آق قوینلو و اسلاف او، جزو اول ، جزو ثانی، انکری، 1356، ص.

Հայկական անվանումների օտար աղավաղումները

Արևելյան Հայաստանի շրջանների ու բնակավայրերի հայկական անվանումների հետ զուգահեռաբար գործածվող օտար անվանումները, որոնք տրվել են այլազգի հարևանների կամ տիրապետողների կողմից, ըստ իրենց բնույթի կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում կառանձնացնեինք աղավաղումների հետևանքով ի հայտ եկած տարբերակները: Այս աղավաղումները հիմնականում պայմանավորված էին տեղանքի նկատմամբ գերիշխանություն ձեռքբերած ժողովրդի լեզվական առանձնահատկություններով և հարմարեցնում էին դրանք տվյալ լեզվի հնչյունական ու տառային համակարգին, երբ որոշ հայերեն հնչյուններ որոնք պարսկերենում չկան օրինակ ց-ն հանդես է գալիս ս-س կամ թս - تس տառերով՝ Աղվերց-Աղվերս اقورس[165], Հավուցթառ – Հավուսթառ – هوستار[166], Մանկանոց – Մանկանուս منكانوس, Ֆրանկանոց-Ֆրանկանուս - فرنكانوس [167], Կից –كيس [168], Աղջոց –اقچوتس[169]: Հնչյունական ձևափոխությունները առանձին դեպքերում լինում էին կամայական բնույթի, երբեմն ի հայտ գալով բառի գրության սխալ ընթերցման հետևանքով, որոնք մեկ անգամ այդպես հանդես գալուց հետո կրկնվում էին հետագա վավերագրերում. ինչպես օրինակ Շոռոթ անվան փոխարեն հիմնականում հանդես է գալիս Շոռլութ տարբերակը[170], Անգեղակոթի փոխարեն՝ Անգելակոթը[171], Սաղմոսավանքի փոխարեն Սարմոսավանք[172]: Տեղի էին ունենում անվանումների կրճատումներ թե՛ սկզբից, թե՛ վերջից: Վավերագրերից մի քանիսում կրճատվել էր, օրինակ, Ֆրանկանոցի- «անոց» ածանցը՝ մնալով միայն «Ֆրանկ - فرنک»[173], իսկ Մանկանոց գյուղը դարձել է «Մանկուս -منكوس»[174]: Հիմնականում առանց

---

165 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 32, 34:
166 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 41:
167 Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 1է, վավ. 1180:
168 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, էջ 48, 67, 68, 107, 113, 122:
169 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9, էջ 36, 228:
170 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 2, 68:
171 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 32:
172 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9:
173 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 19, 22:
174 **Հ. Փափազյան**, կալվածագրեր, պրակ Ա, վավ. 27, Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 19, Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1գ, վավ. 328:

Խոր բաղադրիչի է հանդես գալիս Խորվիրապ անվանումը՝ «վիրաբ – ویر اب» ձևով[175]:

Երբեմն Արևելյան Հայաստանի տեղանունների աղավաղման պատճառ էին դառնում տառերի բնագրային սխալ ընթերցումները, որոնք հաճախակի էին տեղի ունենում կետերի բացակայության ու ավելացման հետևանքով և հանգեցնում սխալ տարբերակների ամրագրմանը: Նման տեքստային աղավաղման ու սխալ ընթերցման հետևանք կարելի է համարել հ-խ, թ-ս, ն-լ անցումները Հունան (حنان) – Խունան (خنان), Վարդան[ակերտ] (ورتان) –Վարսան (ورثان)[176], Չավնդուր (چوندور) – Չուլդուր (կամ Չըլդըր) (چولدور) տարբերակներում[177]:

Արաբական այբուբենում որոշ ձայնավորների չգրվելն էլ ավելի դժվարացնում էր հայերեն տեղանունների գրությունն այդ տառերով, ինչպես օրինակ, Աղավնատուն տեղանունը, որի գրությունը տարբեր վավերագրերում տարբեր է (Աղունադուն -آقوندون[178], Աղոնադին - آغنه دين[179], Աղոնադան - آغندن[180]):

Նման աղավաղման հետևանքով հայկական աղբյուրներում հիշատակվող Ճարաբերդ կամ Չարաբերդի (ներկայիս՝ Ջրաբերդի)[181] փոխարեն պարսկական վավերագրերում ու այլ աղբյուրներում հանդիպում են «Ջալբերդ (Ջալփերդ) կամ Չելեբերդ - جلبرد» տարբերակները[182]:

---

175 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 9, էջ 36, նաև Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1դ, վավ. 534, 535, 542:

176 Տե՛ս **Հ. Թ. Նալբանդյան**, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 61, 120:

177 Սյունիքի Չավնդուր գավառի իրանականացված տարբերակն է, որը ըստ հին ցուցակների Տաթևի թեմի մեջ մտնող գավառներից էր (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 242, 272): **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 49, նաև Միրզա Յուսուֆ Ներսեսով, Թարիխ-ե Սաֆի, աշխ. Ք. Կոստիկյանի, Երևան, 2000, էջ 44, 46; چهل سند فارسی از جمهوری آذربایجان، تیمور مناف اوغلی موسوی، ترجمه: از پرویز زارع شاهمرسی، مرکز اسناد و تاریخ دیپلوماسی، تهران 1386، ص. 121، 122،

178 **Հ. Փափազյան**, կալվածագրերը պրակ Ա, վավ. 5, էջ 71:

179 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1372:

180 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1385:

181 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 258, **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 316, **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 157, 355:

182 Տե՛ս ստորև վավերագրեր 19, 22, 25, նաև **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 4, էջ 211: امیر صدرالدین ابراهیم امینی هروی، فتوحات شاهی، تاریخ صفوی از آغاز تا سال 920ه.ق.، تهران، 1383، ص. 411.

Էլ ավելի ձևափոխված տարբերակ է Չորման տեղանունը, որը որոշ հետազոտողների կարծիքով հանդիսանում է հայկական Շիրմանանց բնակավայրի անվանումը[183]: Չորման բնակավայրի հիշատակությունը պարսկերեն վավերագրերում կապվում է Արցախի Քոլատակ ու Առաջաձոր բնակավայրերի միջև ծագած խնդիրների հետ[184]: Իսկ այն հանգամանքը, որ Չորմանի տանուտերը Խաչենի Ղազանչի, Ներքին Քոլատակ, Բազարքենդ և մի քանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների հետ հիշատակվում է XVIII դարի առաջին կեսում Առաջաձոր գյուղի ավագերեց Դավթի մելիքությանը համաձայնություն տրված համախոսականում[185], խոսում է բնակավայրի էթնիկ կազմի հայկական լինելու մասին:

Աղավաղված տարբերակները, ստանում էին նաև իմաստային որոշ երանգավորումներ, մի երևույթ, որ բնորոշ է ժողովրդական ստուգաբանությունը: Թե՛ պատմագիրները և թե՛ հասարակ ժողովուրդը իմաստային բացատրություններ էին փնտրում հատուկ անուններում[186]: Որպես օրինակ կարելի է հիշել XI դարի բանաստեղծ Նասիր Խոսրովի «Սաֆարնամե» ուղեգրության այն հատվածը, որտեղ հեղինակը բացատրում է «Խլաթ» անունը այն հանգամանքով, որ այնտեղ երեք լեզուներով էին խոսում՝ հայերեն, պարսկերեն ու արաբերեն («Ախլաթ» արաբերեն «խառնուրդ» է նշանակում)[187]:

Հայկական տեղանունների աղավաղումների ու ձևափոխումները ակնհայտ են ստորև ներկայացվող Քաշաթաղի պատմությանը վերաբերող լիազորագրում (վավերագիր 16), որով 1691 թ. այնտեղի մի շարք հայկական գյուղերի ավագներն ու տանուտերերն իրենց համաձայնությունն էին տալիս Մելիք Հախնազարի որդի Իլիասին որպես իրենց լիազոր ներկայացուցիչը հաստատելու հարցում: Այդ փաստաթղթում Քաշաթաղի շրջանը նշվում է Քոշթասֆ ձևով, Հոչանց գյուղը՝ Հոչաս, իսկ Աղբաթխերտ (նաև Ալպատխիր, Աղվատխէր, Ալբադխիռ) գյուղը, որ գտնվում է Աղավնո գետակի վերնահովտում, հիշատակվում է Աֆաթ-

---

183 **Ս. Սարգսյան**, Արցախ. Պատմա- աշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 79:

184 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 119, 125, 362,

185 Վավերագիրը տե՛ս ստորև h. 21:

186 Այս մասին մանրամասն տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 132-133:

187 سفرنامهٔ ناصر خسرو قبادیانی، از انتشارات آیینهٔ هنر محمد سلحشور 1368، ص. 8

խար (آفتَخر) ձևով[188]: Եթե փորձենք իմաստային վերլուծության ենթարկել «աֆաթխար» բառը, ապա այն պարսկերենից թարգմանաբար կարելի է ընկալել որպես «մեծ աղետ կամ վնաս»: Քաշաթաղ գավառը այլ վավերագրերում ևս նշվում է Քոշթասֆ ձևով[189], որը, սակայն, չպետք է շփոթել Կուրից մինչև Կասպից ծով ձգվող նույնանուն շրջանի հետ[190]: Այս դեպքում ևս տեղանունը ստացել է իմաստային երանգավորում: «Քոշթ-ե ասաֆ կամ ասաֆի -کشت اسفی» - բառակապակցությունը պարսկերեն կարելի է հասկանալ «զուր սպանություն» իմաստով:

«Քենդ» բաղադրիչը հայկական բնակավայրերի անվանումներում

Հայկական բնակավայրերի օտարահունչ անունների շարքում մեծ թիվ են կազմում «քենդ» բաղադրիչով անվանումները: Իրանական ծագում ունեցող «քենդ» բաղադրիչը իրանական լեզուներում հանդես գալով որպես բայանուն՝ (kanta-katha – kat-katha) ունի «քաղաք, տուն» իմաստը[191]: Այս քենդ-քեթ-ղանդ բայանունն ունեցող տեղանունները տարածված են հատկապես Միջին Ասիայում՝ Ախսիքեթ, Բայքենդ, Բունջիքեթ, Վաբքենդ, Կոկանդ, Շութուրքենդ և այլն[192]:

Այս բաղադրիչը հաճախ պարզապես կցվել է հայկական անվանումներին՝ հաղորդելով դրանց հայերենին օտար հնչողություն, ինչպես օրինակ Քարվաճառի Մոզքենդ գյուղի դեպքում է: Մոզքենդի «քենդ» բաղադրիչը ավելացել է Մոս կամ Մոզ տեղանվանը XVIII դարից հետո[193]: Մոզը (կամ Մոս) որպես Սյունիքին կից շրջանի անվանում հիշվում է հայ պատմիչների երկերում VII դարից[194]: Պահպանվել է 1653-1654թթ. Ծարի Մոս գյուղում Մարտիրոս Խնձորեսկցու կողմից ընդօրինակված մի Ավետարան[195]: Այդ գյուղը Մոս ձևով հիշատակվում է նաև XVIII

---

188 Տե՛ս ստորև վավերագիր 16:

189 Տե՛ս **Հ. Փափազյան**, հրովարտակներ, պրակ Բ, էջ 89, 100, 124:

190 Տե՛ս **Ս. Ջալալեան**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ: Տփխիս, 1858, էջ 361: حمدالله قزوینی، نزهة القلوب، تهران، 1336، ص. 106-107.

191 Տե՛ս **В. И. Абаев**, Этимологические заметки, т. VI. M., 1956, с. 448:

192 Տե՛ս **В. И. Абаев**, նշվ. աշխ., էջ 448:

193 Տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 73:

194 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 321, 322, Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 64:

195 Տե՛ս Ցուցակ Ձեռագրաց, հ. Ա, Երևան, 1965, ձեռ. 3647:

դարի կեսին Խութավանքի (կամ Դադի վանքի) կալվածացուցակում[196]: Նույն կերպ է թերևս առաջ եկել Մինքենդ անվանումը, որը ստորև ներկայացվող վավերագիր 16-ում հիշատակվում է Քաշաթաղի հայկական բնակավայրերի շարքում: Ղ. Ալիշանն իրավամբ այն նույնացնում է հայկական Մննի բնակավայրի հետ[197]:

Որպես կանոն՝ տեղանունների մեջ «քենդ» վերջավորությունը մատնացույց է անում տվյալ բնակավայրի բնակչության նստակյաց լինելը, ուստին տրվել է հիմնականում հայկական բնակավայրերին: Այս փաստը հստակ կերպով արտացոլվել է 1823 թ. Ղարաբաղում ռուսական իշխանությունների կողմից անցկացված վիճակագրական նկարագրության մեջ, որտեղ որպես հայկական բնակավայրեր նշվում են Մխիթար-քենդը, Աղքենդը, Քեշիշքենդը, Մեհդիքենդը (Մեյտիշեն) Խաչեն գավառում, որ հիմնվել է 1828 թ., Մադաթքենդը Վարանդայում, Աղջեքենդը Դիզակում և այլն[198]: Այս երևույթն արտացոլվել է նաև Դարաշամբի Օրթաքենդ, Դիբքենդ ու Բաշքենդ[199], Երևանի նահանգի Դարաքենդ (Զորագյուղ)[200], Ղրխբուլաղի Չելեբի[քենդ] (նաև Քեշիշքենդ կամ Այդինդարվիշ)[201], Սյունիքի Աղաքենդ[202], Դիզակի Աղջաքենդ[203], Շաքիի ու Շիրվանի Հաթամքենդ[204] հայկական գյուղերի պատմությանը վերաբերող Մատենադարանի պարսկերեն վավերագրերում:

Քենդ- բաղադրիչով առանձին անվանումները երբեմն մատնանշում են նաև որևէ մեծ բնակավայրի առանձին թաղամասերը, ինչպես, օրինակ, Գանձակի հայկական թաղամասերից երկուսը՝ Քիլիսաքենդը (Եկեղեցու թաղամաս) և Ենիքենդը (Նորաշեն): Քիլիսաքենդը Գանձակ

---

196 Տե՛ս **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, էջ 396:

197 **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 267:

198 Տե՛ս «Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющаго в Грузии Ермоловым, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м». Тифлис, 1866, сс. 42, 91, 107, 215, 222:

199 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 48, թղթ. 1բ, վավ. 103, թղթ. 1է, վավ. 678, թղթ. 4, վավ. 112 և այլն:

200 Տե՛ս ստորև վավերագրեր 2, 4-6, 10, 11, նաև Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1ա, վավ. 50, 54, 69, 71 և այլն:

201 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 158:

202 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, էջ 66, 68, 107, 113, 122:

203 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 138, 140, 165, 178 և այլն:

204 Տե՛ս ստորև վավերագիր 19:

քաղաքի հայկական թաղամասերից ամենամեծն էր, որը գտնվում էր Գանձակ գետի ձախափնյակում և ավելի բարձր դիրք էր զբաղեցնում մահմեդական թաղամասերի համեմատությամբ: Ենիքենդը[205] գտնվում էր Գանձակի թրքաբնակ հատվածում՝ նշանավոր «մեյդանից» (հրապարակ) դեպի հյուսիս - արևմուտք: Գանձակի այս երկու հայկական թաղամասերի հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների անուններն ու ստորագրությունները նշվում են 1794 թ. կազմված պարսկերեն մի համախոսականում, որով հայ բարձրաստիճան հոգևորականների, հայ մելիքների ու Աղվանից կաթողիկոսությանը հպատակ հայության անունից ընդհանուր համաձայնություն էր տրվում Սարգիս Հասան Ջալալյանի՝ Աղվանից կաթողիկոս հաստատվելուն[206]:

Հայկական տեղանունների թարգմանական տարբերակները

Մեծ խումբ են կազմում այն օտար անվանումները, որոնք հայկական տեղանունների թարգմանական տարբերակներն են, ընդ որում բառի առաջին բաղադրիչի թարգմանական տարբերակը երբեմն կարող էր զուգակցվել «քենդ» բայանվան հետ՝ երբեմն փոխարինելով հայերեն «շեն-գյուղ» բառին (Վաճառ-Բազարքենդը, Գետաշեն-Չայքենդ[207], Երիցուշեն-Քեշիշքենդ և այլն): Խաչենի Քարագլուխ կամ Շիկաքար կոչված բնակավայրի անվանումների շարքում հիշատակվում են նաև Դաշուշեն ու Դաշքենդ («դաշ» թուրքերեն նշանակում է «քար») տարբերակները[208]:

Հայկական Գետաշեն անվանումը հիշատակվում է XVII դարից: Մասնավորապես 1621 թ. այն նշվում է նրա վրա վրացական զորքի հարձակման կապակցությամբ[209]: Գյուղը Գետաշեն է կոչվում XVIII դարի երկրորդ կեսին այնտեղ այցելած Հովսեփ Էմինի գրքում[210]: Պարսկական վավերագրերում, որոնք վերաբերում են Գետաշենի Մելիք Մնացականյանների պատմությանը, XVIII դարից գյուղի անվանումը հիշատակվում է «Չայքենդ» ձևով, որը «Գետաշեն» անվան առաջին

---

[205] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 35:

[206] Տե՛ս ստորև վավերագիր 25:

[207] Տե՛ս ստորև վավերագրեր 19, 25:

[208] Տե՛ս **С. Лисицян**, Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, с. 25:

[209] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 321:

[210] Տե՛ս **Emin Jozeph**, Life and Adventures of Joseph Emin. Calcutta, 1918, p. 306:

մասի բառացի թյուրքական թարգմանությունն է կցված «քենդ» բաղադրիչի հետ[211]:

Խաչենի Առաջաձոր գյուղից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող հայկական Վաճառ գյուղը[212], որը Մ. Բարխուդարյանցի վկայությամբ Ծմակահող գյուղի հին անվանումն էր, ունի օտար «Բազարքենդ» տեղանվանական տարբերակը[213]: Այս բնակավայրը, գտնվելով քոչվոր անասնապահների հարթավայրային շրջաններից դեպի լեռնային արոտավայր քոչելու ճանապարհին, զարգանում էր հայ գյուղացիների ու արհեստավորների հետ առևտրի շնորհիվ[214]: Բնակավայրը XIX դարի երկրորդ կեսին ուներ 40 ծուխ հայ բնակիչ և XIII դարի արձանագրություններ ունեցող Ս. Ստեփանոս եկեղեցի[215]: Խաչենի «Բազարքենդ- بازارکند» անվամբ հայկական գյուղը հիշատակվում է Մատենադարանի XVII դարի պարսկական վավերագրերում, որոնք կազմվել են գյուղին վերաբերող զանազան խնդիրների կապակցությամբ և բովանդակում են այդ խնդիրների լուծման նպատակով Գանձակի *բեկլարբեկի* հրահանգներն՝ ուղղված իր պաշտոնյաներին[216]:

Տեղանունների թարգմանության և այդ կերպ յուրացման գործընթացն առավել բնորոշ էր հայաբնակ վայրերի հարևանությամբ հաստատված թյուրքական ցեղերին[217] և ընդունելի պատմական Հայաստանի տարածքում հաստատված Կարա-Կոյունլու ու Ակ-Կոյունլու, Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական մահմեդական իշխանությունների համար, որոնք թեև իրանական պետականության շարունակողներն էին, սակայն թյուրքազգի էին և Արևելյան Հայաստանի տարածքում հենվում էին հիմնականում թյուրքական ցեղերի ու նրանց ավազանու վրա:

Արդյունքում չնայած որպես գրագրության լեզու շրջանառվող պարսկերենին՝ վավերագրերում հայկական բնակավայրերն ու շրջանները հանդես են գալիս թուրքերեն թարգմանական տարբերակներով,

---

211 Տե՛ս **Ք. Կոստիկյան**, Ղարաբաղի հայ մելիքները Նադիր շահի իշխանության տարիներին: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 260:

212 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Արցախ, Երևան, 2003, էջ 80:

213 Տե՛ս ստորև վավերագիր հ. 20:

214 Տե՛ս **С. Лисицян**, նշվ. աշխ., էջ 69:

215 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 118:

216 Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2ա, 92, թղթ. 2բ, վավ. 124ա:

217 **L. Sahakyan**, նշվ. աշխ., էջ 28:

կամ պարսկերեն բառերի թյուրքացված հնչողությամբ, ինչպես օրինակ «Դարաչիչաք - دره چیچک» անվանումն[218] է հայոց Ծաղկունիք, Ծաղկունեաց Ձոր (Վարաժնունիք) գավառի փոխարեն, բաղկացած պարսկերեն «Դարա - دره» ու թուրքերեն «չիչաք - چیچک» թարգմանական տարբերակների կցումից[219]:

Երբեմն օտար թարգմանական տարբերակով օգտագործվում էին տեղանվանը կից «Վերին», «Ներքին», «Մեծ», «Փոքր», «Հարավային» և «Հյուսիսային» բառերը[220]: Այս բաղադրիչները օգտագործվում են Արցախի կրկնվող տեղանունների հետ: Վարանդայի Հարավային կամ Արեգդեմ Ճարտար (թյուրք. Գյունի Ճարտար) և Հյուսիսային Ճարտար (թյուրք. Ղուզի Ճարտար) գյուղերի անվանումները կապված են այդ բնակավայրերի՝ մի սարի հյուսիսային ու հարավային լանջերին գտնվելու հետ[221]: Պարսկական վավերագրերում հանդիպում են «Սաֆլա (պարսկ. سفلی – سفله) - Ստորին (կամ Ներքին)» և «Ալիյյա (պարսկ. علیا) - Վերին» բառերը մասնավորապես՝ Քոլատակ տեղանվան հետ[222]: Այս բաղադրիչները օգտագործվում են նաև Ագուլիս անվան հետ՝ տարբերակելով Վերին Ագուլիսը (Ագուլիս-ե Ալիյյա –علیا اگلیس) և Ներքին Ագուլիսը (Ագուլիս-ե Սաֆլա – سفلی اگلیس)[223]:

Տեղանքի առանձնահատկությունների ու պատմության հետ կապվող անվանումները

Օտարալեզու հարևանները բնակավայրերին նոր անվանումներ էին տալիս՝ ելնելով նաև այն հանգամանքից, թե ինչպես էին նրանք ընկալում տվյալ բնակավայրն ու նրա բնակիչներին[224]: Ընդ որում, հնարավոր էր, որ տեղի հայկական անվանումը նույնպես կապված լիներ

---

218 Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1զ, վավ. 955, թղթ. 1է, վավ. 1076:

219 **Առ. Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ 87, 104: Ըստ Ալիշանի դա նախկին Վարաժնունիք աշխարհն է (Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 277):

220 Այս մասին ավելի մանրամաս տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 135-137:

221 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 220-1:

222 Տե՛ս **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3, 55:

223 Տե՛ս ստորև վավերագիր 15, նաև Մատենադարան, կաթողիկոս. դիվան, 1ա, վավ. 29, 1դ, վավ. 545, թղթ. 1ե, վավ. 688, թղթ. 1է, վավ. 1108, 1171 և այլն:

224 Այս մասին ավելի մանրամաս տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 137-140:

բնակավայրի առանձնահատկությունների հետ, բայց չհամընկներ օտարների կողմից նրա ընկալման ձևի հետ:

Գեղարքունիքի գավառը հիշատակվում է «Գյոքչա - كوكجه» անվամբ[225], որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է «երկնագույն, կապույտ» և հանդիսանում Սևանա լճի օտար գունանունը: Իհարկե, երբ նկատի է առնվում հենց լիճը, Գյոքչա անվան հետ միաժամանակ նշվում է նաև «ծով – թուրք. դենիզ - دنگیز» բաղադրիչը[226]:

Տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված է հանդես գալիս նաև Ղըրխբուլաղ (քառասուն աղբյուր – թուրք. قرخبلاغ) տեղանունը որպես Կոտայքի շրջանի անվանում՝ ինչպես պարսկերեն վավերագրերում[227], այնպես էլ հետագայում ռուսական իշխանությունների կողմից կազմած վիճակագրական ուսումնասիրություններում[228]:

Տեղանքի առանձնահատկությունների հետ էր կապված նաև հայկական Կեչան (կամ Կիչան) գյուղի «Բալլուղայա» (թուրք. – بالوقايه - մեղրոտ լեռ) անվանումը: Խաչենի շրջանում նշվող այս հայկական գյուղը XIX դարում ուներ 15 ծուխ բնակիչ և Ս. Աստվածածին եկեղեցի[229]:

«Բալլուղայա» ձևով այս բնակավայրը պարսկական վավերագրերում հիշատակվում է XVIII դարի առաջին կեսից: Այդ տեղանունը նշվում է Խաչենի Առաջաձոր (Դովշանլու) գյուղի ավագերեց Դավթի մելիքությանը[230] համաձայնություն տված հայկական գյուղերի կողմից կազմված համախոսականում[231]: Ըստ պարսկալեզու պատմագիր Ներսեսովի՝ XVIII դարի կեսին «Խաչենի *մահալում* Ուլուբաբի թոռը ըմբոստանալով՝ տարբեր գյուղերից մարդ է հավաքում ու ամրանալով Բալլուղայայում, սկսում կռվել Փանահ խանի դեմ»[232]: Այդպես է նշվում գյուղը XIX դարի առաջին կեսին Ղարաբաղի դատարանում գրված մի

---

225 **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Գ, էջ 115, 137, 158, Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 1բ, վավ. 161, թղթ. 1է, վավ. 1076, թղթ. 1ը, վավ. 1585ա և այլն:

226 Տե՛ս ստորև վավերագիր 11:

227 Տե՛ս ստորև վավերագիր 17: **Ք. Կոստիկյան**, հրովարտակներ, պրակ Դ, վավ. 8:

228 **И. Шопен**, Исторический памятник состояния Армянской области въ эпоху ея присоединения къ Российской империи, Санктпетербург, 1852, сс. 509-510.

229 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 247:

230 Նրա մասին տե՛ս **Ք. Կոստիկյան**, Ղարաբաղի հայ մելիքները, էջ 259:

231 Տե՛ս ստորև վավերագիր 20:

232 Տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, նշվ. աշխ., էջ 50:

փաստաթղթում, ըստ որի Աղվանից կաթողիկոսությունը կալվածքներ ուներ Բալլուղայա գյուղում[233]:

Տեղանքի առանձնատկությունների հետ է կապվում Առաջաձոր գյուղի հայկական անվանումը: Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Առաջաձոր (կամ Առջաձոր, Արջաձոր) գյուղը գտնվում է Արցախի Խաչեն գավառում, դեպի Արծաթասար ձգվող լեռնաշղթայի հարավային ստորոտում, անդնդախոր ձորի եզրին[234]: Իսկ գյուղի օտար անվանումը՝ «Դուշանլու կամ Դոշանլու - لوشان»[235] հավանաբար ծագում է արաբերեն «պատվավոր, պատվարժան, մեծատուն-դուշան- نشو» արաբերեն բառից և նրան կցված որակը կամ ծագումը ցույց տվող لو - լու թյուրքական վերջավորությունից: Այդ պարագայում նման անվանումը կապվում է նրա՝ Խաչենի Հասան-Ջալալյանների իշխանական տոհմին պատկանելու և նրա ճյուղի ներկայացուցիչների՝ այնտեղ բնակվելու հանգամանքի հետ, որի մասին նշվել է այդ գյուղին տրված սկզբնական այլալեզու փաստաթղթերում: Քանի որ յուրաքանչյուր փաստաթուղթ կազմվում էր՝ հենվելով նախկին փաստաթղթերի վրա, այդ բառը սկսել է ընկալվել որպես գյուղի անվանում և օգտագործվել «Առաջաձոր» անվանը զուգահեռ: Իսկ կետերի կորուստը (لوشان -لوشو) և համապատասխան հնչյունափոխությունը հաճախակի երևույթ էր արաբատառ այբուբենն օգտագործող լեզուներում:

Առաջաձորը եղել է Խաչենի Հասան-Ջալալյան տոհմի ժառանգների հայրենական կալվածքներից: Հիշյալ բնակավայրի արևելքում Անապատ կոչվող կիսաժայռափոր մատուռների առջևի ժայռաբեկորի վրա պահպանվել է XIII դարի մի արձանագրություն, որտեղ հիշատակվում են Խաչենի իշխան Ջալալ Դոլայի և նրա որդի Աթաբեկի անունները[236]: Իսկ նույն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում հնում պահվում էին երկու ձեռագիր մատյաններ՝ Ավետարան ու Աստվածաշունչ, որոնք ունեին կարևոր հիշատակարաններ գյուղի Խաչենի Հասան-Ջալալյաններին պատկանելու ու նրանց հետնորդների միջև տեղի ունեցած վեճի մասին[237]: Հետագայում ևս Հասան-Ջալալյանների տոհմի մի ճյուղի ներկա-

---

233 Տե՛ս Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2բ, վավ. 286:

234 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 257:

235 Տե՛ս ստորև վավերագիր 22:

236 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 88:

237 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 257:

յացուցիչները բնակվում էին Առաջաձոր գյուղում՝ վարելով այնտեղի հոգևոր իշխանությունը և անգամ երբեմն զբաղեցնելով Աղվանից կաթողիկոսության աթոռը, ինչպես, օրինակ, 1554թ. Դավիթ Առաջաձորեցին[238] և Եսայի Հասան-Ջալալյանը (1700-1728 թթ.)[239]:

Արհեստների ու գյուղերի այլ մասնագիտացման հետ կապվող օտար անվանումները

Հետաքրքրական են հայկական տեղանուններին զուգահեռ օգտագործվող այն օտար անունները, որոնք մատնանշում են արհեստներ: Այդ կարգի տեղանունները հիմնականում վերջանում են թյուրքական «چی- չի» վերջածանցով, և զարմանալի չէ, որ դրանք հաճախ կրկնվում են նաև հարևան շրջաններում:

Հայկական գյուղերի բնակիչները բացի հողագործությունից զբաղվում էին նաև արհեստներով: Ընդ որում, եթե թե' հայ, թե' թյուրք ու քուրդ կանայք զբաղվում էին գորգագործությամբ ու կարպետագործությամբ, ապա արհեստավորներ լինում էին հիմնականում հայ տղամարդիկ: Ուստի այդ օտար տեղանունները ևս մատնանշում են բնակավայրի հայկական լինելը, եթե ոչ ներկայումս, ապա գոնե անցյալում: Արցախի ու Զանգեզուրի հայկական գյուղերի բնակիչները զբաղվում էին կավագործությամբ (բրուտներ), քարտաշությամբ, դարբնագործությամբ, արծաթագործությամբ, կոշկակարությամբ և այլ արհեստներով[240]:

Օտար տեղանունների այս խումբը, ամենայն հավանականությամբ տեղի բնակչության բնորոշման հարցում շատ ավելի մեծ կարևորություն ունենալով Արևելյան Հայաստանի հայ և օտարազգի բնակիչների շրջանում, հաճախ գործածությունից գրեթե լիովին դուրս է մղել բնակավայրի հին հայկական տարբերակը: Այսպիսին է իրավիճակը Արցախում և Սյունիքում եղած մի քանի «Ղազանչիների» (թյուրք. Կաթսայագործ - قزانچی، قزغانچی) դեպքում: Ղազանչի է կոչվել Հյուսիսային Արցախի Կասում-Իսմայլովի շրջանի բնակավայրերից մեկը, որ XIX դարի վերջին պատկանել է Ոսկանապատցի կալվածատերեր Նազար

---

238 Տե՛ս **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 219:

239 Տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 377:

240 Տե՛ս **С. П. Зелинский**, Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде Елисаветпольской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, ч. I. Тифлис, 1886, сс. 103, 117:

Մելիք-Շահնազարյանին և Լազար Էմմանուելյան Լազարյանցին[241]: Նույն անվամբ մեկ այլ հայկական բնակավայր էլ կա Հյուսիսային Արցախի Գետաբեկի շրջանում: Մինչև 1770-ական թվականները հայաբնակ այդ բնակավայրի անվան հայկական տարբերակը ևս մոռացվել է[242]: Հայտնի է Ղազանչի – Շահկերտ բնակավայրը[243] նաև Սիսականի Երնջակ գավառում, որի բնակիչները հայտնի էին որպես պղնձագործներ (կամ կաթսայագործներ)[244]: Այստեղից գաղթած բնակիչների մի առանձին թաղամաս է եղել Շուշի քաղաքում, որոնք նույնպես հմուտ կաթսայագործներ էին[245]: Ղազանչի անունով բնակավայրերից մեկը, ըստ Մ. Բարխուդարյանցի գտնվում էր Ջրաբերդ գավառում, Կիչանի արևելահյուսիսային կողմում, Խաչեն և Ջրաբերդ գավառների սահմանագլխի սարի հյուսիսային կողմում[246]: Ղազանչի անվամբ մեծ թվով բնակավայրեր կան ոչ միայն Արցախում, այլև Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ, Սուրմալու գավառներում[247]:

Արցախի Ջրաբերդ գավառում նշվող Ղազանչի հայկական բնակավայրի պատմությանը վերաբերող տվյալներ պահպանվել են ինչպես տեղի արձանագրություններում, այնպես էլ Մատենադարանի XVIII դարի պարսկերեն վավերագրերում[248]:

Տեղանունների այս խմբի մեջ կարելի է դիտարկել նաև «Ղուշչի - قوشچی» անվամբ հայտնի մի քանի տեղանուններ, որ հիշատակվում են պատմական Հայաստանի տարբեր շրջաններում: Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները Արևելքում հայտնի էին որսի թռչունների և նրանց տեսակների առատությամբ[249]: Որսը Սեֆյան արքունիքի սիրելի զբաղմունքներից էր և մի ամբողջ վարչություն *ամիր շիքարի* գլխավորությամբ զբաղվում էր որսի կենդանիների, այդ թվում բազե-

---

241 Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 427:

242 Տե՛ս նույն տեղում, էջ 66:

243 Շահկերտ ձևով տե՛ս **Առ. Դավրիժեցի**, նշվ. Աշխ., էջ 286:

244 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 362:

245 Տե՛ս **С. Лисицян**, նշվ. աշխ., էջ 70:

246 Տե՛ս **Մ. Բարխուդարյանց**, նշվ. աշխ., էջ 271:

247 Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան՝ հ. III, Երևան, 1991, էջ 497–498:

248 Տե՛ս ստորև վավերագիր 20, նաև Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 2, վավ. 49, 2բ, վավ. 190, նաև Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 3:

249 A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, translated from the Latin and annotaded by Collette Ouahes and Willem Floor, Washington, 2014, pp. 298-299.

ների ու այլ թռչունների խնամքով[250]: Սեֆյան վարչական համակարգում կային «*դուշչի*» կոչվող պաշտոնյաներ[251]: Ըստ երևույթին, բազեների մատակարարումը պալատին ապահովում էին առանձին բնակավայրեր, որոնք բացի հողի մշակությունից, զբաղվում էին բազեների բուծմամբ ու բազմացմամբ, իսկ բազեներ որպես *փիշքաշ* շահի *խաասե-ե շարիֆեին* մատակարարում էին սահմանային շրջանների *հաքիմներն* ու *ամիրները*[252]: Կային անգամ ուղեցույցներ (Գիրք բազեների մասին -Բազնամե - بازنامه), որոնցում տրվում էին նրանց բուծման ու բազմացման, նաև բուժման եղանակները[253]:

Ղուշչի անվամբ բնակավայրերից մեկը նշվում է Քաշաթաղի շրջանում, Մերիկ գյուղից 2կմ հարավ-արևելք, Աղավնագետի աջ կողմում, որի մոտակայքում պահպանվել է «Մկնատամի խաչ» կոչված XII-XIII դարերի եկեղեցին[254]: Նրա գեղջավագը ևս նշվում է 1691թ. Քաշաթաղի Մելիք Հախնազարի որդու՝ Իլիասի անունով տրված լիազորագրում[255]: Նույնանուն բնակավայր գտնվել է նաև Սյունիքում, որը հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» Տաթևի թեմի հարկացուցակում[256]: Ղուշչի անվամբ մեկ այլ բնակավայր է նշվում Գանձակի գավառում, որի հայկական անվանումը Խաչակապ կամ Խաչափակ է[257], իսկ նրա Ղուշչի անվանումը կապվում է շահ Աբբաս Ա-ի ժամանակներին վերաբերող մի ավանդության հետ: Ըստ այդ ավանդության՝ շահ Աբբասի արշավանքների ժամանակ Գրիգոր անունով մեկը ցանկանում է բազե բռնել շահին ընծայելու համար, բայց ժայռից ընկ-

---

250 Նույն տեղում, էջ 299-301.

251 Ղուշչիների մասին բազմիցս հիշատակվում է Սեֆյան պետության վարչաքաղաքական կառուցվածքին վերաբերող Դասթուր ալ-մոլուք աշխատության մեջ دستور الملوک میرزا رفیعا، به کوشش وتصحیح محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردابادی، تهران،1385، ص. 55-57, 229, 238, 239, 268:

252 القاب و مواجب دورهٔ سلاطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص. 69.

253 Բազեների բուծման ու խնամքին նվիրված աշխատություններից մեկի ձեռագիր օրինակ կա նաև Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում և գրանցված է որպես ձեռ. h. 183: Նկարագիրը տե՛ս **K. Kostikyan**, Catalogue of Persian Manuscripts, Yerevan, 2017, m. N 110, pp. 84-85.

254 Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 138:

255 Տե՛ս ստորև վավերագիր 16:

256 Տե՛ս Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, 1942, էջ 42:

257 Տե՛ս **Ե. Լալայեան**, Գանձակի գավառ, Ա հատոր, Թիֆլիս, 1901, էջ 105:

նում ու մահանում է: Շահ Աբբասն էլ գյուղը նվիրում է տեղի համայնքին և այն անվանում Ղուշչի[258]:

Ռուսական տիրապետության շրջանում Զանգեզուրի շրջանում նշվում են երկու տեղանուններ, որոնց հիմքում Ղուշչի բառն է. մեկը Ղուշչիլուն է, որն ուներ թյուրքալեզու բնակչություն, և մյուսը՝ հայաբնակ Ղուշչի Թազաքենդը՝ իր 74 ծուխ հայ բնակչությամբ[259]: Ղուշչի անվամբ բնակավայր է նշվում նաև Այրարատ նահանգի Նիգ (Ապարան) գավառում, որն ըստ Ղ. Ալիշանի ուներ Աստուածածին եկեղեցի[260] և XIX դարի սկզբի տվյալներով 72 շունչ հայ բնակչություն[261]:

Ղուշչի բառի բովանդակային նշանակության հետ են կապվում Հյուսիսային Արցախի Ոսկանապատ գյուղի Սկնապատ-Սոնղորաբադ տարբերակները: Հայկական բարբառներում այն հիշատակվում է Սկնապատ ձևով[262], իսկ պարսկական աղբյուրներում՝ «Սոնղորա բադ - سنقرآباد» ձևով: «Սոնղորաբադ» տեղանունը պարսկական վավերագրերում հիշատակվում է XVII դարի սկզբից: Մասնավորապես՝ շահ Աբբաս Ա-ի 1607 թ. հրամանագրով քրիստոնյա Մելիք Նազարը նշանակվում է Ղարաբաղի Սոնղորաբադի մելիք և առաջնորդ[263]: Մելիք Սարուխանը և նրա եղբայր Նազարն այն հայ մելիքներից էին, որոնց շահ Աբբաս Ա-ն իր հետ տանում է Սպահան[264]:

1637թ. շահ Սեֆի Ա-ի հրովարտակով նախկինում Մելիք Նազարին ու Մելիք Սարուխանին շնորհված Սոնղորաբադ ու Ղարաքեշիշ (Բրաջուր) գյուղերի *համեսալեն* շնորհվում է «Սաֆար Ղուլիին և այլ *ղուշչի ղուլամներին* (բազեապան ծառաներին)»[265]: «Սոնղոր - سنقر، سنقور» բառը պարսկերեն նշանակում է «որսորդական բազեի տեսակ», իսկ «աբադը - آباد» նույն «շեն, բնակավայր» ցույց տվող բաղադրիչն է, որը հաճախակի է հանդիպում թե՛ հայկական և թե՛ իրանական տեղանուններում: «Սոնղորաբադ» անվան թարգմանությունը և այն, որ նրա հարկերից բաժին է

---

258 Տե՛ս նույն տեղում, էջ 106:

259 Տե՛ս **С. П. Зелинский**, Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде Елисаветпольской губернии, т. IV, ч. I, с. 158:

260 **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 254:

261 **И. Шопен**, նշվ. աշխ., էջ 587.

262 Տե՛ս **Ս. Զալալեան**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 22:

263 Տե՛ս Тбилисская коллекция персидских фирманов, т. I, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, 1995, с. 20.

264 **Առ. Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, էջ 63:

265 Տե՛ս Тбилисская коллекция персидских фирманов, т. I, с. 37.

հատկացվում արքունի բազեապաններին, հուշում են, որ այդ բնակավայրում, հավանաբար, զբաղվում էին բազեների կամ որսի այլ թռչուննե րի բուծմամբ: Այստեղից էլ, ամենայն հավանականությամբ, ծագում է հայկական անվանումը, որը սկզբնապես պետք է որ եղած լինի Որսկանապատ՝ կապվելով այնտեղ բազեների կամ որսականների[266] բուծման հետ և ոչ Ոսկանապատ, որտեղ «որսկանը» պետք է հասկանալ «որսի թռչուն» իմաստով:

Հետագայում ևս, օրինակ, 1794 թ. Սարգիս կաթողիկոսի ընտրության կապակցությամբ կազմված պարսկերեն համախոսական գրության մեջ նշվում է Սոնղորաբադի Մելիք Յուսուֆի անունը[267], որը հուշում է, որ այդ շրջանում ևս գյուղը հայաբնակ էր և ուներ իր մելիքը: Ընդ որում, հայ ազգագրագետ Ե. Լալայանի ուսումնասիրության համապատասխան՝ Ոսկանապատը, ինչպես նաև Միրզիկ, Մուռութ և Բրաջուր գյուղերը պատկանում էին Մելիք Շահնազարյաններին, որոնցից Մելիք Յուսուֆ Գ-ը մահացել էր 1826 թ.[268]:

Ք. Կոստիկյան

---

[266] «Որսական» բառն ըստ Հայկազյան բառարանի ունեցել է «որսի թռչուն», «բազե» իմաստը (Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Երևան, 1981, էջ 538):

[267] Տե՛ս ստորև վավերագիր 25:

[268] Տե՛ս Ե. Լալայեան, Գանձակի գավառ, էջ 58:

1

Երևանցի Մուրադի դուստր Հադիեից Էջմիածնի Մովսես կաթողիկոսի կողմից 1630 թ. գնված Աշտարակում գտնվող մեկ կտոր այգու կեսի ղաբալեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 51, նոտարական պատճեն (նորոգված), մեծ. 18.2 x 41 սմ, գիր՝ շիքասթե, նասխ:

Նա է Գերագույն Տերը

Փառք Ալլահին, որն ընդունելի դարձրեց առքուվաճառքը և արգելեց կողոպուտն ու վաշխառությունը և փառք Մուհամմադին՝ անբիծ բարեպաշտների հովանավորին, ընտրյալին՝ Ալիին ու բոլոր բարեպաշտներին: Այս օրինական և ընդունելի խոսքերի գրության նպատակն այն է, որ Իրավանի ու Թուման-ե Նախիջևանի պարտադիր ու աներկբա հպատակություն պահանջող, գերագույն *շարֆ* բարձր ատյանը, թող Բարձրյալը պահպանի այն մոլորության աղետից, ներկայացան Իրավանցի Մուրադի դուստր Հադիե անվանյալի պատվարժան լիազոր Մուհամմադ Ռաբի'ն, թող Բարձրյալը նրան օգնական լինի, և վաճառեց [նրա] հոժար կամքով ու առողջ մտքով, առանց բռնության ու պարտադրանքի, քրիստոնյաներից լավագույն ու իմաստնագույն Ուչքիլիսայի Մովսես կաթողիկոսին այն ամենն ամբողջովին, որ նրան օրինական ժառանգությամբ հիշյալ լիազորի միջոցով փոխանցվել էր: Եվ այն է Աշտարակ գյուղում գտնվող մեկ կտոր այգու ամբողջ կեսը, որի սահմաններն են Օշական [տանող] ճանապարհը, Գասպարի ու Շահնազարի այգիները և դաշտը, հայտնի ու նշված գումարով, որն է Սեֆյան նոր հատված ու շրջանառվող 5 թավրիզի արծաթ *թուման*: Այդ գումարի հաստատված կեսը 2 *թուման* 5000 *դինար* է նշված դրամով: Գումարի վճարմամբ ու գնվածի հանձնմամբ այս օրինական, անթերի ու արդար առքուվաճառքի գործարքով, լիազոր անձը, որը տեղյակ էր գնվող առարկայի իր ժամանակի իրական արժեքին համապատասխանությանը, հրաժարվեց բոլոր օրինական իրավունքներից, այնպես, որ վաճառողը տուգանվելու է բացահայտ խաբեության և կեղծիքի դեպքում, որովհետև [գույքի] օտարումից և գումարի վճարումից հետո այս *շարիաթական* առքուվաճառքի գործարքով նրա նկատմամբ օրինական ու բացառիկ սեփականատիրական իրավունքը հիշյալ գնորդինն է և նրա տնօրինության տակ է նրա *մալիքանեն*, ինչպես, որ սեփականատերերին է պատկանում իրենց օրինական սեփականությունը: Առքու-

վաճառքի գործարքը տեղի ունեցավ 1040 թ. ջումադի Ա. ամսի 2-ին[269]:

[Լուսանցքում]

Օրինական առքուվաճառքը տեղի ունեցավ այնպես, ինչպես, որ կից շարադրեցի [կնիք].///: Սույն բովանդակությամբ պատճենը նոտարական գրասենյակում գրվեց [կնիք].///

2

Ջուղայեցի Խոջա Սաֆարի որդի Խոջա Միքայելի կողմից Չոխուր Սա'ադի բեկլարբեկի պաշտոնյա Ալի Բեկից 1631 թ. գնված Դարաքենդում (Զորագյուղ) գտնվող տների, բացօթյա կացարանների (էյվան) ու մեկ կտոր այգու ղաբալեն և մուսալեհեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 54, բնագիր, մեծ. 26.3 x 75 սմ, գիր՝ շիքասթե, նասխ:

Նա է լիիրավ Տերը

Փառք ու պատիվ Բարձրյալ Տիրոջը, որը միաստվածության ծաղկանոցի հավատի վարդին [Մուհամմադ մարգարեի] հակադրվող հայրերին ու հեթանոսներին հակառակ, հաստատուն հավատի վկաների վիճաբանության այգում գարնանային լուսաբացի զեփյուռով թարմություն ու խինդ տվեց և Խեզրի[270] նման հավատի ճշմարիտ ուղով, որպես հավատի առաջնորդության ծաղկի ցողուն, իսլամի բոլոր բարեպաշտներին առաջնորդեց՝ ազատելով քրիստոնեության կամ հուդայականության ստորացուցիչ մոլորության համար հատուցումից, իրավունքի մասին գիտելիքներում խելքի ու ապրուստի հողը շնորհ արեց հասցնել յուրաքանչյուրին, փառք Բարձրյալին և թող նրա կամքը կատարվի և թող փառավորվի կյանքը, որ չի մոտենում բժշկման հոգեպարար հանդիսությանը, որովհետև պաշտամունքի ընդունելի լինելը կախված է ու կապված նրա աղոթքի անկեղծությունից, և նախկին ժողովուրդների ու հավատքների վերացումը Նրա արեգակնային ճշմարտությունից է. Փառք Նրան ու Նրա հետևորդներին:

Այս օրինական և ընդունելի, վճռորոշ խոսքերի գրության պատճառն այն է, որ սահմանային նահանգ Իրավանի ու Թուման-ե Նախիջևանի պարտադիր հպատակություն պահանջող *շար'ի* գերագույն ատ-

---

269 1630 թ. դեկտեմբերի 7-ին:

270 Մահմեդական ավանդապատումների մարգարե, որը գտնում է կենարար ջրի ակունքը:

յան, թող Բարձրյալը պահպանի այն մոլորության աղետից, ներկայացավ վսեմաշուք ու փառահեղ, մեծ *ամիր ալ-ումարա*, վստահելի *խաների* հովանավոր, *սուլթանների* բարեբախտ հանգրվան, Չոխուր Սա'աղի *բեկլարբեկի*, թող Ալլահը նրան երջանկության ու փառքի մեջ պահի, պաշտոնյա բարձրաստիճան պահապան *յասավուլ-ե սոհբաթ* Մողիմ Բեկը, որպես իր հոր՝ գերապատիվ ազնվական, բարձրաստիճան ու պատվարժան պահապան Ալի Բեկի լիիրավ լիազոր ու վստահված անձ և իր հոժար կամքով ու ցանկությամբ, առանց տհաճության ու պարտադրանքի վաճառեց ամբողջովին իրեն օրենքով պատկանող, իր կողմից ձեռք բերած *մուլքը*՝ բաղկացած 10 տներից, մեկ կտոր ծառաշատ այգով 2 բացօթյա կացարաններից, որ գտնվում է Դարաքենդի վերին մասում, որի սահմաններն են. հյուսիսից՝ Նորին Գերազանցություն *շեյխ ուլ-իսլամի*, թող Ալլահի օրհնությունը նրա վրա լինի, սպասավորների այգին, արևմուտքից՝ Զանգի գետը, արևելքից՝ իրար կից Դարաքենդի, Դամլաքենդի այգիների նրբանցքն ու եկեղեցին, նաև մեկ ախոռ մեկ վերնատնով, որ կպած է հիշյալ տներին և այլ անհրաժեշտ շինություններ՝ իրենց վերաբերող ամեն ինչով, որ մտնում է սեփականության մեջ, քրիստոնյաների ընտրյալ ու հավատակիներից լավագույն Ջուղայեցի Խոջա Սաֆարի որդի Խոջա Միքայելին: Հիշյալ գնորդը գնեց հիշյալ վաճառողից նշված վաճառքի առարկան հստակ որոշված գումարով, որի չափը 55 թավրիզի Սեֆյան նոր շրջանառության *թուման* է, որի հաստատված կեսը 27 *թուման* 5000 *դինար* է: *Շարիաթի* օրինական առքուվաճառքի և ընդունելի գործարքի պայմանագիրը, որի բոլոր կետերն ու դրույթները՝ [ներառյալ] գումարի ընդունելի ու անհրաժեշտ լինել, նրա ստացումն ու հանձնումը, պայմանագրի համապատասխան նրա ընթացքը գումարի բաժանման ու վճարման հարցում, անթերի ու ճիշտ են, գործադրվեց Մուհամմադ Մարգարեի, հազար ողջույն ու օրհնանք նրան, ազնվագույն *շարիաթին* համապատասխան: Վերոհիշյալ վաճառողը այն ժամանակ, երբ վաճառքի առարկայի գինը համապատասխանում էր իր օրվա արժեքին, հրաժարվեց բոլոր օրինական իրավունքներից, և հատուկ *մուսալեհե* կնքեց նենգությունից ու հետագա խարդախ արարքներից հրաժարման մասին մասնակի ու ամբողջական 5 թավրիզի սեֆյան *թուման* գումարով, որի կեսը 2 *թուման* 5000 *դինար* է, որից հետո ամբողջ գումարը համաձայնագրի գումարի հետ 60 թավրիզի *թուման* է լինում: Տուգանքը հիշյալ վաճառողի վրա կլինի գնի ամբողջովին վճարմամբ վաճառքի առարկայի նկատմամբ լիիրավ իրավունքները այլի փոխանցելուց հետո: Այժմ այս *շարիա-*

թական գործարքով վերը նկարագրված վաճառքի առարկան դառնում է հիշյալ գնորդի օրինական ու բացառիկ ունեցվածքը և նրա կամքն է, որ գնվածի *խումսը* բարեգութ *սեիդների* օգտին, թող հարատևի նրանց տոհմը մինչև Ահեղ Դատաստանի օրը, վճարելուց հետո ինչպես, որ կամենա, այն տնօրինի, ինչպես, որ սեփականատերն է տնօրինում իր օրինական սեփականությունը: /// Գործադրվեց 1041 թ. ռաբի Բ. ամսին:

[Լուսանցքում]՝

Ընդունեց վաճառողը առքուվաճառքի *շարՙի* օրենքով օրինական գործարքի համապատասխանությունը բառ առ բառ՝ սկզբից մինչև վերջ [կնիք].///

1. Ինչպես, որ շարադրված է, ընդունում եմ, պալատի ծառա Ալի Ղուլիի որդի Մողիմ [կնիք].///

2. Ինչպես, որ վերը գրվեց, ընդունելի է, Աստծո ծառա Ալի [կնիք].///

Նիստի ներկաներ՝

3. Կատարելության ձգտող Մոուլանա Մոհի ալ-Դին Մուհամմադ և Մոուլանա Մուհամմադ Ռեզա, Մոուլանա Արաբի, բարձրաստիճան *նաեբ* բարեբախտ Մորադ Աղա Իրավանի, իսլամին հպատակ Սիմեոնի որդի Ալլահվերդի քահանա, Ջուղայեցի Թասա'իի որդի Մասում, Ջուղայեցի Ելազարի որդի Յաղուբ, Արչեջանի որդի Գրիգոր, Յահիաարչեի որդի Մաթոս և այլոք՝ Ավետիսի որդի Վամի, նրա եղբայր Վարդանը, Մերվաբադցի Ամրի որդի Բախշին, Գևորգի որդի Կարապետ:

4. Ավետիսի որդի Վահի և նրա եղբայր Օհանը, Մերվաբադի Բախշի բ. Ամրը, Գևորգի որդի Կարապետը,

5. [Հայերեն]՝ Ես Սեթի տղա Ակոբս վկ[այ] եմ, [կնիք]. ///

6. [Հայերեն]՝ Ես Կարապետս ըխտիս վկ[այ] եմ, [կնիք]. ///

7. [Հայերեն]՝Ես Ախիջանի որդի Ալայդուլիս Էս *դաբալիս* վկ[այ] եմ, [արաբատառ կնիք]. Աստծո ծառա Ալլահդուլի,

8. Պալատի ծառա *յասավուլ-ե դուտ* Սեֆի Ղուլիի ներկայությամբ [կնիք].///

9. Նվաստիս՝ *խասսեի դուրչի* Ալլահվելիի ներկայությամբ [կնիք]./// Ալլահվելի,

10. Վկա եմ նվաստս՝ Մելիք Նե'մաթ Ալիի որդի Մուսթովֆի, [կնիք]. Մուհամմադ տոհմի ծառա Մուսթովֆի,

11. Սույն գրությանը վկա եմ Մուհամմադ Մո'մեն Թաբիբ, [կնիք]. Աստծո ծառա Մուհամմադ Մո'մեն,

12. Սույնի վկա եմ Շահվերդի, [կնիք].///

13. Ներկաներ՝ Ռեզա Բեկ բ. Հաջի Բիգլու [կնիք]. Հավատի շահի ծառա Ռեզա Ղուլի,

14. *Նազեր-ե բոյութաթ* Նազար Բեկ [կնիք]. *Վելայաթի շահի*[271] ծառա ///,

15. Սույն գրությանը վկա ամենանվաստ ծառա Գորգին, խրոխտագույն ու քաջահաղթ Թահմաս Խանի [մարդկանցից]. [կնիք]./// Գորգին,

16. Հաղվերդի բեկ [կնիք]. *Վելայաթի շահի* ծառա, ///

17. Նորին Գերազանցության *խասսեի դուլամ* Բահրամ Բեկ [կնիք]. *Վելայաթի շահի* ծառա Բահրամ,

18. Այնպես է, ինչպես շարադրանքում գրված է և որևէ սխալ բան չկա, Նորին Գերազանցության *միրախորբաշի* Օղուրլու Բեկ [կնիք].///,

19. Ինչպես, որ գրված է, այդպես է և սխալմունք չկա, նվաստ ծառա Ահմադ Զու ալ-Ղադար [կնիք].///,

20. Գրության վկա Բեհզադ [կնիք]. ///Բեհզադ,

21. Գրությունը համապատասխանում է իրականությանը և սխալ չկա, նվաստ ծառա ///,

22. Վկա եմ բովանդակության [իսկությանը], Ասլան, [կնիք]. ///1043

23. Սույնի վկա Աստծո ծառա [կնիք].///

24. Վկա եմ բովանդակության [իսկությանը], Աստծո ծառա [կնիք]. ///,

25. Ինչպես, որ շարադրանքում գրված է, ճիշտ է և սխալմունք չկա, պալատի ծառա Մուրադի ներկայությամբ գրանցվեց, [կնիք]. *Վելայաթի շահի* ծառա Մուրադ,

26. Սույնի վկա, ամենանվաստ ծառա Մուհամմադ Մոհսեն բ. /// *քալանթար* [կնիք]. /// Մուհամմադի տոհմի ծառա Մոհսեն,

27. Սույնի վկա Մուհամմադ Շարիֆի *սարքար* [կնիք].///,

28. Սույն շարադրանքը, ինչպես որ տեքստում է, *մահզարում* գրվեց [կնիք].///,

29. Սույնի վկա Յադգար Մուհամմադ [կնիք].///,

30. Շարադրանքը այնպես է, ինչպես, որ այստեղ գրի է առնվել ծառաների ներկայությամբ [կնիք].///,

31. Ինչպես, որ գրված է, ճիշտ է և սխալ չկա Խոյի Շահվերդի *Խան* [կնիք].///,

32. Ինչպես, որ շարադրանքում գրված է, այդպես է և սխալ չկա [կնիք].///,

---

[271] Իմամ Ալիին բնորոշող անվանում:

33. Տեղի ունեցավ անհրաժեշտ, խելամիտ *մուսալեհե,*
Հակառակ կողմում գործարքը հաստատված է Մովսես կաթողիկոսի ու հայ հոգևորականների հայերեն գրառումներով ու կնիքներով:

3

Էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսի կողմից Սուլթան Բեկ Սա'ադլուից 1640 թ. գնված Օշական գյուղի մեկ դանգի կեսի ղաբալեն ու մուսալեհեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 61ա, բնագիր,
մեծ. 20 x 32.2սմ, գիր՝ շիքասթե - նասխ:

Նա է
Կենդանի է
Եվ ճիշտ է սույնը իր բովանդակությամբ ու իմաստով

Այս *շարՙիաթական* կարգով ընդունելի ձևակերպմամբ համաձայնագրի գրության պատճառն այն է, որ հեռավոր սահմանային շրջան Իրավանի ու Թուման-ե Նախիջևանի պարտադիր հպատակություն պահանջող *շարՙի* գերագույն ատյան, թող Բարձրյալը պահպանի այն մոլորության աղետից, ներկայացավ պատվարժան իրավանաբնակ Սուլթան Բեկ բ. Ալի *Խան* Բեկ Սաադլուն և *շարՙի* առքուվաճառքի պայմանագրով իր հոժար կամքով, առանց դժգոհության ու պարտադրանքի, լսելով բոլոր *շարիաթական* պայմաններն ու ծանուցումները, վաճառեց այն ամենը, ինչ իր խոսքով վաճառողի հորից իրեն որպես ժառանգություն փոխանցվել էր ու գտնվում էր նրա տնօրինության տակ մինչ այդ գործարքի մեջ մտնելը: Եվ այն բաղկացած է Չոխուր Սա'ադի Կարբի *նահիեի* գյուղերից Օշականի վեց *դանգերից* կես *դանգից՝* նրա մեջ մտնող և նրան վերաբերող ամեն ինչով: Հիշյալ վաճառողից գնեց վաճառքի առարկան ամբողջությամբ Ուչքիլիսայի վանքի հոգևոր առաջնորդ, իսլամին հպատակ, իր նմանների ու հավատակիցների մեջ լավագույն Փիլիբոս կաթողիկոս *զիմմին* նշված և հստակեցված գումարով, որ է [շահ] Աբբասի օրոք շրջանառվող 4 թավրիզի *թուման,* որի ուղիղ կեսը 2 *թուման* է: Նշված կողմերի միջև *շարիաթական* այս գործարքը ուժի մեջ մտավ համաձայնագրի կնքման ժամանակ անհրաժեշտության, ընդունման, ստացման ու հանձնման ընթացակարգի հայտնի ձևով, որով [սեփականության] օտարումն ու մասնատումը ընդմիշտ են: Վերոհիշյալ վաճառողը տեղյակ լինելով վաճառվածի օրվա արժեքին՝ նույն օրը կեղծիքի [դեմ] *մուսալեհե* կնքեց մեկ թավրիզի *թուման*ով, որի կեսը 5000 *դինար* է, հրաժարվելով գործարքը չեղյալ դարձ-

նող այլ իրավունքներից և *շարʼին* երաշխավորելով, որ գումարի լրիվ վճարումից հետո վաճառքի առարկայի նկատմամբ ամբողջ իրավունքը ներկայիս այլ անձինն է: Այժմ սույն գործարքով գնորդի կամքն ու իրավունքն է, որ ինչպես, որ կամենա, գնվածը տնօրինի՝ այնպես, ինչպես սեփականատիրոջն է պատկանում նրա օրինական սեփականությունը: Սա տեղի ունեցավ մարգարեի փախուստի 1050 թ. ջումադի Ա. ամսի 8-ին[272]:

[Լուսանցքում]

Սույնի վկա Իմադի որդի Մուհամմադ Բաղեր [կնիք].///, Սույնի վկա Միր Հաշեմ Իրավանի [կնիք].///, Սույնի վկա ///ի որդի Մուհամմադ Բաղեր [կնիք].///, Սույն գրության վկա Հաջի Իսմայիլ *Խան* [կնիք].///, Սույն գրության վկա /// Թաբրիզի, [կնիք].///, Սույն գրության վկա Օսթադ Ղարիման Սաբաք [կնիք].///, Սույն գրության վկա Մուհամմադ Թաղի Հարիֆ [կնիք].///, Սույն գրության վկա Թաղի Բեկ [կնիք].///, Սույնի վկա Հաղնազար Բիգլու [կնիք].///, Սույն գրության վկա Մուհամմադ Քազեմ [կնիք].///, Սույն գրության վկա Ալի Նաղի Բեկ [կնիք].///, Սույն գրության վկա Օսթադ Քենարալլահ, Սույն գրության վկա Մուհամմադ Հուսեյն Հարիֆ [կնիք]. Մուհամմադի տոհմի ծառա Հուսեյն, Սույն գրության վկա /// Իրավանիի որդի Ալլահվերդի [կնիք].///, Սույնի վկա Իսհակ [կնիք]. /// Իսհակ, Սույնի վկա Բեհզադի որդի Մուսթաֆա [կնիք].///:

Հակառակ կողմում գործարքը հաստատված է Սեթի որդի Գրիգորի ու մի շարք այլ ազդեցիկ անձանց հայերեն գրառումներով ու կնիքներով

4

Դարաքենդում գտնվող ջրաղացի 4 դանգի վակֆնամեն, որով Երևանցի Խոջա Գրիգորի դուստրեր Մուրիդադն ու Աղինան այդ ջրաղացի իրենց բաժինը 1644 թ. վակֆ են անում Ս. Անանիայի վանքին

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 71, բնագիր,
մեծ. 25.2 x 76սմ, գիր՝ խառը:

[Ալլահի] փառաբանումից հետո հստակ ապացույցների շարք ներկայացնող օրինական խոսքերի գրության պատճառն այն է, որ անվանի ու պատվարժան, իմաստնագույն ու բարեկիրթ, մարգարեների ուսմունքին լավատեղյակ ու արդարադատ *դազիի* կեցությունը կարգավորող, գերագույն ու արժանապատիվ հեղինակավոր *շարʼի* ատյան ներկայա-

---

[272] 1640 թ. օգոստոսի 26:

ցան Իրավանի հայ Խոջա Գրիգորի դուստրեր Մուրիդադն ու Աղինան և իրենց հոժար կամքով առանց բռնության ու երկմտանքի Անանիա Առաքյալի վանքին *վակֆ* արեցին ու ամրացրին Իրավանին ենթակա Դարաքենդ գյուղում գտնվող մեկ դռնով, երեք պտտվող քարով ջրաղացի 6 *դանգ մուլքերից* ամբողջ 4-ը, որի սահմաններն են Մելիք Սելահ Ալի Բեկի ջրաղաց անունով հայտնի *խաասեի* ջրաղացը, մեծ ճանապարհը, Խոջա Հակոբի ջրաղացը, իր բոլոր ենթակա և կից, հավելյալ ու նրան վերաբերող սարքերով, քարերով, տարածքով, շինություններով և այլ, նշված ու չնշված ամեն ինչով և նրա տնօրինումը հանձնեցին քրիստոնյաներից լավագույն ու նմաններից ընտրյալ Ուչքիլիսայի Փիլիպոս կաթողիկոսին և նրանից հետո հաջորդներին: Եվ պայման դրեցին հիշյալ *վակիֆները*, որ բացի հիշյալ *մութավալլին* ու նրա նշանակած անձը, որը նրան կհաջորդի, ոչ ոք, ոչ մի դեպքում, կաթողիկոսից, վանահորից ու մյուսներից չպետք է բաժին ունենա հիշյալ ջրաղացից և *մութավալլից* հաշիվ պահանջի: Հիշյալ *մութավալլին* պետք է նրա եկամուտը տնօրինի, անհրաժեշտ *խխրաջաթը* հանելուց հետո, քարի ու շինության արժեքից այն, ինչ կմնա, ծախսի վանքի ու նրա միաբանների ապրուստի կարիքների վրա: Նաև հիշյալ *վակիֆները* պայման դրեցին, որ հիշյալ ջրաղացի բաժինը չգնվի ու չվաճառվի, *սոլհ* կամ նվիրատվություն չարվի, երկարատև վարձակալության ու որևէ այլ գործարքի առարկա չդառնա, միայն մեկ համաձայնագրով ու երեք տարվանից ոչ ավելի վարձակալության տրվի: Վերը նշված անձանց *վակֆի* բոլոր պայմանների օրինականությունն ու անթերի լինելը հաստատող *շար'իաթական սիղե* ընթերցվեց վստահելի վկաների ներկայությամբ: Այս գրվեց մարգարեի փախուստի 1054 թ. սրբազան մուհարրամ ամսի 14-ին[273]:

[Լուսանցքում]

Նա է լիիրավ Դատավորը

Սույն գրությունն ու նրա հաստատումը մեկ վստահելի անձի կողմից է, [կնիք].///: Մեր ձեռքով հաստատեցինք սույն գրությունը [կնիք].///: Մահմեդականների *շեյխ ուլ-իսլամ* ///:

Սույնի գովելի վկաներ Իրավանի հայ Խոջա Սեթի որդի Հակոբ, Պողոսի որդի Մուղդուսի Խաչիկ, Մարտիրոսի որդի Ղազար, Անդրիասի որդի Միրիջան, Առաքելի որդի Գրիգոր, Ասատուրի որդի Առաքել, բոլորը Իրավանի հայեր են:

[Հայերեն]՝

---

[273] 1644 թ. մարտի 24:

Տ[ի]րիճանի տղ[այ] Ոհաննես վկ[ա]յ, Գրիգորի տղ[ա]յ Մ[ա]հակս վկ[ա]յ [կնիք]. /// ՍԱՀԱԿ, Վարդայպետք Սիմեոն/// վկայ,

Թորոս վկ[ա]յ [կնիք]. ///, Մ[ու]ղդ[ուսի] Կոստանդն վկ[ա]յ [արաբատառ կնիք]. Աստծո ծառա Կոստանդ, Հուրմուզս վկայ [կնիք]. ՕԱՌԱՅ ԱՍՏՕՈՅ Հ[Ո]ՐՄ[Ո]Զ, Տանտեր Մկրտիչն վկ[ա]յ [հայատառ և արաբատառ կնիք]. ՄԿՐՏԻՉ Մկրտիչ, Առաքելի տղ[ա]յ Գրիգորս վկ[ա]յ [կնիք]. Ծ[Ա]Ռ[Ա] Ա[ՍՏԾ]Ո ԳՐԻԳՈՐ, Մարտիրոսի տղ[ա]յ Ղազար վկ[ա]յ [կնիք]. Ծ[Ա]Ռ[ԱՅ] Ա[ՍՏԾ]Ո ՂԱԶԱՐ, Տանուտէր Էվազն վկ[ա]յ [կնիք]. ///ԱՅՎԱԶ, Ասապովի տղ[այ] Սարգիսն վկ[այ] [կնիք]. ՍԱՐԳԻՍ, Ղազարի տղ[ա]յ Կարապետն վկ[ա]յ, Բուլութի տղ[ա]յ Ուլուխանս վկ[ա]յ, Ասապովի տղ[ա]յ Աւետիքս վկ[ա]յ, Աւետիսի տղ[ա]յ Մանուկն վկ[ա]յ, Եսանղուլի տղայ Ամիր Ղուլին վկ[ա]յ, Ես մահդասի Խեչում վկ[ա]յ, Ակոբի տղ[ա]յ Բաղդասարն վկ[ա]յ, [կնիք]. ///, Զուրհապի տղ[այ] Նիկեղոսն վկ[ա]յ, Գրիգորի տղ[այ] Սիմէոյն վկ[ա]յ, [կնիք]. ///, Մարտիրոս թօփչի Մանշուր, Խ[ո]ջ[այ] Միրիճանս վկ[ա]յ, [կնիք]. ///ՄԻՐԻՃԱՆ, Աղայջանն վկ[ա]յ, Բաղրդուլու տղ[այ] Զաքարէս վկ[ա]յ, [կնիք]. ///, Խ[ո]ջ[այ] Առաքելս վկ[ա]յ, [կնիք]. ///ԱՌ[Ա]Ք[Ե]Լ, Խաչ[ա]տուր վ[ա]րդ[ա]պ[ե]տս վկ[ա]յ [կնիք]. Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա] ԽԱՉԱՏ[ՈՒ]Ր ՎԱՐԴԱՊԵՏ, Սարֆրազս վկ[ա]յ [կնիք]. Ա[ՍՏՕՈ]Յ Ծ[Ա]Ռ[Ա] ՍԱՐՖՐԱԶ:

5

1644 թ. Խոջա Գրիգորի դուստր Շահզամանի ու Փիլիպոս կաթողիկոսի միջև կնքված մուսալեհենամեն, որով Դարաքենդի ջրաղացի 2 դանգ մուլքը փոխանցվում է կաթողիկոսին

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 73, նոտարական պատճեն, մեծ. 24.2 x 96սմ, գիր՝ նասթա՛ալիղ, նասխ

Փառք Ալլահին՝ երկրային և երկնային կյանքի տիրոջը և թող փառավորվի նրա մարգարեն: Այս բարեբախտ ավարտ ունեցող գրության պատճառն այն է, որ մարգարեների ու առաքյալների տիտղոսակիր ու պատվարժան *շեյխ ուլ-իսլամի* և մահմեդականների լիիրավ, արդարադատ *դազիի* ու արժանապատիվ *շարի՛ֆ* բարձր ատյան ներկայացավ Իրավանի հայ Խոջա Գրիգորի դուստր Շահզամանը և *շարի՛ֆ* արդար ու կեղծիքից զուրկ *մուսալեհե* կնքեց արժանավորներից ու իր կարգակիցներից լավագույն Ուչքիլիսայի կաթողիկոս, հայ Մելիքսեթի որդի Փիլիպոս կաթողիկոսի հետ, ըստ որի նա ինչ իրավունքի պահանջ ու

բաժին էլ, որ ունենա Իրավանի մեջ մտնող Դարաքենդում գտնվող մեկ դռնով, երեք քարով գործող ջրաղացի 6 դանգերից 2-ի ու նրան օրինական կերպով պատկանող ու նրա մեջ մտնող նշված ու չնշված սարքերի, կենդանիների ու շինությունների նկատմամբ, որի սահմաններն են *խաստեի* ջրաղացը, որը հայտնի է Ալի Բեկ Սելահի ջրաղացը, ընդհանուր ճանապարհը և Խոջա Հակոբի ջրաղացը, Վան քաղաքում շրջանառվող 8 թավրիզի *թուման* ոսկի դրամով դրանցից հրաժարվում է: *Շարիաթական մուսալեհեն*, որ ուներ բոլոր անհրաժեշտ կրոնական պայմանները և զերծ էր կեղծիքից, ու 4 *թումանը* այդ *սոլհի* օրինականության, նրա որակական ու քանակական հատկանիշների [համար էր], այնուհետև կնքեցին ու ստորագրեցին՝ *շարիաթով* ընդունելի երաշխիք [տալով]: Այս *մուսալեհեից* հետո մի վերջին անգամ ևս *շարիաթական մուսալեհե* կնքվեց գործարքի մասնակցի հետ՝ հրաժարվելու համար նրան մնացած բոլոր այլ իրավունքներից, հավակնություններից ու բաժիններից, որ որևէ *շարիաթական* հիմքով ու իսլամական պատճառով [կարող էր ունենալ գործարքը] բացահայտ խաբեություն ու անօրինական [հայտարարելու համար]: Այս կետերը 2 թավրիզի *թումանով* բոլոր վստահելի պայմանները բովանդակող *շարիաթական մուսալեհեում* ամրագրելով արաբերեն ու պարսկերեն *շարիաթական սիղեով* գործադրվեց: Ամեն տեսակի անհամաձայնությունները [հարթող] սույն *մուսալեհների*, որոնք վերը նշվեցին, այս 2 թավրիզի *թուման* գումարը *մուսալեհե* կնքողի ձեռքից *շար'ով* ստացվեց, և այժմ դադարեց պատկանել մյուս կողմին, որը դրանից զրկվեց: Վերջինիս ոչ մի դեպքում, ոչ մի պատճառով և ոչ մի կերպ այլև իրավունք կամ պահանջ չմնաց ու չկա նշված ջրաղացի երկու *դանգի* նկատմամբ: [Նրա նկատմամբ] օրինական ու բացառիկ իրավունքը համաձայնության եկած Փիլիպոս կաթողիկոսինն է և նրանն է այնտեղի *մալիքանեն* տնօրինելու իրավունքը, որը կարող է օգտագործել ըստ իր կամքի, ինչպես, որ սեփականատերը կարող է տնօրինել իր սեփականությունը: Այսպիսով, եթե սրանից հետո սույն *մուսալեհեին* ու գրվածին հակառակ որևէ մեկը՝ լիազորված լինի, թե ժառանգներից, վեճ սկսի, պետք է չեղյալ համարվի ու վստահության չարժանանա: Տեղի ունեցավ այս մարգարեի, փառք նրան, փախստյան 1054 թ. սրբազան մուհարրամ ամսի 14-ին:

[Լուսանցքում]

Նա է լիիրավ Դատավորը

Սույն *'ուրֆի* օրենքով օրինական գրությունը հաստատված է, և գրեց մարգարեների ու առաքյալների գիտության ժառանգորդ, Նորին

Գերազանցություն մեծապատիվ ու բարեկիրթ, իսլամի աստվածաբաններից ու իրավագետներից առավել գիտակ, նրա մեկնաբանողներից վերջինը՝ մահմեդականների *շեյխ ուլ-իսլամը,*

Համեմատվեց և համապատասխանում է գրված բնօրինակին: Գրեց [կնիք].///,

Համապատասխանում է գրված ազնվագույն բնօրինակին: Գրեց [կնիք].///,

Նա է: Անհրաժեշտ պայմանների կատարումից և նշված գումարի ստացվելուց համաձայնագիրը ստորև շարադրանքին համապատասխան կնքվեց, ինչպես, որ գրվեց ինձ մոտ,

Մեկնության ու *շարի'աթի* ուղեցույց, իմաստնագույն ու բարեբախտ Մոուլանա Սուլթան Մուրադի կնիքը,

Բարձրաստիճան իմաստուն ու սեիդության ապավեն Միր Սեիդ Մուհամմադի կնիքը.

Վկաներ ///՝

Հայ Խոջա Սեթի որդի Խոջա Հակոբ, Պողոսի որդի Մուղդուսի Խաչիկ, Մարտիրոսի որդի Ղազար, Անդրիասի որդի Միրիջան, Առաքելի որդի Գրիգոր, Ասատուրի որդի Առաքել, բոլորը Իրավանի հայեր, նաև Իրավանի հայ Գրիգորի որդի Իսահակ, Իրավանի քահանա Միքայելի որդի Սարգիս քահանա, Գանջայից Փիրհամզայի որդի Կիրակոս քահանա, Իրավանցի ///ի որդի Նիկողոս, Թաթոս քահանայի որդի ///

20 վկաներ հաստատել են գործարքը կնիքներով:

6

Ս. Աննիայի վանքին 1644 թ. Փիլիպոս կաթողիկոսի կողմից վակֆ արված Երևանի Դարաքենդում գտնվող մեկ ջրաղացի 2 դանգի վակֆնամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 72, բնագիր, մեծ. 25 x 77սմ, գիր՝ նասթա'լիղ, նասխ:

[Ալլահի] փառաբանումից հետո այս *շարիաթական* խոսքերի գրության պատճառն այն է, որ մարգարեների ու առաքյալների միջոցով ավանդված գիտության ժառանգորդ, իսլամի աստվածաբաններից ու իրավագետներից իմաստնագույն ու պատվելի *շեյխ ուլ-իսլամի* և իրավագիտության հենարան, արդարադատ ու պատվարժան *ղազիի* կեցություն կարգավորող *շարի'ի* բարձր ատյան ներկայացավ քրիստոնյաներից լավագույն, հայ Մելիքսեթի որդի Ուչքիլիսայի Փիլիպոս կաթողի-

կոսը և իր հոժար կամքով ու առանց պարտադրանքի Իրավանի Անանիա առաքյալի վանքի մշտնջենական *վակֆը* դարձրեց մեկ դոնով ջրաղացը, որը գտնվում է Իրավանի բերդի մոտակայքում և որի սահմաններն են Զանգիչայ գետը, Զարքուդե ջրանցքը, ընդհանուր ճանապարհը, Իրավանի բերդը, և որի ընդհանուր վեց *դանգից* գնված է ամբողջ երկու *դանգը*՝ բաղկացած Դարաքենդում գտնվող երեք քարով գործող մեկ դոնով *խասսե* ջրաղացից՝ իրեն օրինավոր կերպով պատկանող ու նրա մեջ մտնող, նշված ու չնշված քարե ու աղյուսե, մետաղե շինություններով, սարքերով, կենդանիներով, տարածքային և եկամտային ամեն ինչով: Դրա սահմաններն են Մելիք Սելահ Ալի Բեկի ջրաղաց անվամբ հայտնի *խասսեի* ջրաղացը, կից ընդհանուր ճանապարհը, ու Խոջա Յաղուբի ջրաղացը: *Շարիաթական* ճշմարիտ *վակֆ* անելով՝ նրա տնօրինությունը իր վրա դրեց քանի դեռ նա կենդանի է, իսկ դրանից հետո ով, որ իր կողմից կնշանակվի: Որոշվեց ու պայման դրվեց, որ այն, ինչ իր բաժնից կստացվի, *իխրաջաթը* հանելուց, շինության նորոգման ու քարի վրա անհրաժեշտ ծախսերը կատարելուց հետո մնացածն ամբողջովին ծախսի հիշյալ եկեղեցու ու նրա սպասավորների ապրուստի վրա: Վանահայրերից, վարդապետներից, քահանաներից ու մյուս հոգևորականներից ոչ ոք չպետք է յուրացնի: *Շար'իաթական սիղեով* այս բոլոր պայմանները ընթերցվեցին: Սա տեղի ունեցավ մարգարեի, հազար փառք նրան, փախստյան 1054 թ. սրբազան մուհարրամ ամսի 15-ին[274]:

[Լուսանցքում]

Նա է լիիրավ Դատավորը

Սույն Բարձրյալի ուղղորդմամբ շարադրված գրությունը գրեց [կնիք]. Ով դազի ///ամենանվաստ ծառա///,

Հաստատում եմ իմ ձեռքով [կնիք]. ///Աստծո ծառա Սուլթան Մուրադ,

[կնիք]. Չկա Աստված բացի Ալլահից///

Գրանցվեց [կնիք].///, [կնիք]. ///Աստծո ծառա Սուլթան Մուրադ,

Գովելի վկաներ, որ ստորև նշված են. Իրավանի հայ Խոջա Սեթի որդի Խոջա Յա'ղուբ, Իրավանի հայ Պողոսի որդի Մուղդուսի Խաչիկ, հայ Մարտիրոսի որդի Ղազարը, Անդրիասի որդի Միրիջանը, Առաքելի որդի Գրիգորը, Ասատուրի որդի Առաքելը, բոլորը Իրավանի հայեր:

[Հայերեն]

---

[274] 1644 թ. մարտի 25:

Հուրմուզս վկ[ա]յ [կնիք]. Հ[ՈՒ]ՐՄ[ՈՒ]Զ Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[Ա]Յ, Առաքելի տղ[ա]յ Գրիգորս վկ[ա]յ կնիք].///, Մարտիրոսի տղ[ա]յ Ղազարս վկ[ա]յ [կնիք].Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[Ա] ՂԱԶԱՐ, Բուլութի տղ[այ] ես Ուլուխանս վկ[այ] [կնիք].///, Ես Մահդասի Խէչումս վկ[ա]յ [կնիք].///, Խ[ո]ջ[այ] Միրիճանս վկ[ա]յ [կնիք].///, Խ[ո]ջ[այ] Առաքելս վկ[ա]յ [կնիք].///, Խաչատուր վ[ա]րդ[ա]պ[ե]տս վկ[ա]յ [կնիք].Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա] Վ[Ա]ՐԴ[ԱՊԵՏ] ԽԱՉԱՏ[ՈՒ]Ր, Սարֆրազս վկ[ա]յ [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ ՍԱՐՖՐ[Ա]Զ, վարդապետի տղ[այ] Սիմէոյնս վկ[ա]յ [կնիք]. Ս[Ի]ՄԷՈՆ, Էսանղուլու տղ[այ] Ամիր Ղուլիս վկ[ա]յ [կնիք]. Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[Ա] ԱՄԻՐՂՈՒԼԻ, Թորոսն վկ[ա]յ [արաբատառ կնիք]. Աստծո ծառա Իսա, Մ[ու]ղդ[ուսի] Կոստանդն վկ[ա]յ [արաբատառ կնիք]. Աստծո ծառա Հաջի Կոստանդ, տանտէր Մկրտիչս վկ[ա]յ [արաբատառ և հայատառ կնիք]. ՄԿՐՏ[ԻՉ] Մկրտիչ, Տանտէր Էվազն վկ[ա]յ [կնիք]. ԱՅՎԱԶ, Աղայջանս վկ[ա]յ, Բաղրդուլու տղ[ա]յ Զաքարէս վկ[ա]յ [կնիք].///, Զուրհապի տղ[ա]յ Նիկեղուսս վկ[ա]յ [կնիք].///, Ասապովի տղ[ա]յ Սարգիսս վկ[ա]յ [կնիք]., Աւետիսի տղ[ա]յ Մանուկս վկ[ա]յ [կնիք].///, Ասապովի տղ[ա] Աւետիքս վկ[ա]յ, Գրիգորի տղ[ա]յ Սիմեոյնս վկ[ա]յ [կնիք].///, Ակոբի տղ[այ] Բաղդասարս վկ[ա]յ [կնիք].///, Մարտիրոս թօփչի Մանշուրս [կնիք]. Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[Ա]Յ Մ[Ա]ՐՏ[Ի]Ր[Ո]Ս:

7

Քրիստոնյաներ Դիար Բեկի ու Աստվածատուրի կողմից 1649 թ. գնված Դեհխարղանում գտնվող 100 ման ցանքատարածության ղաբալեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 83, բնագիր,
մեծ. 16 x 38.5սմ, գիր՝ շիքասթե:

Փառք աշխարհականների տիրոջը, թող փառավորվի նրա Մարգարե Մուհամմադը: Այս *շարիաթական* խոսքերի գրության պատճառն այն է, որ բարի քաղաք Դեհխարղանի իսլամական դատարան ներկայանալով Մուհամմադ Քազեմ Դեհխարղանիի որդի պատվարժան Հաջի ///՝ իր ծնողի կողմից տրված լիազորությամբ և ողորմած Մելիք Մուհամմադի Մազրա'ի որդի Հաջի Դուսթ Մուհամմադը՝ վաճառեցին 100 *ման* ցանքատարածությունը, որի սահմաններն են Ֆանոսի և նշված վաճառողի լիազոր անձանց հողերը, ճանապարհը, Հունաբ անվամբ հայտնի հովիտը, նաև մեկ կտոր հողը որի սահմաններն են Ֆուլադի այգին, ճանապարհը, Հունաբը, Աստվածատուրի այգին, որ գտնվում է

Նողշինում, Միրզայի որդի Դիարբեկին և Ավանեսի որդի Ասվատուրին, որոնք բոլորը քրիստոնյա են: Եվ նրանք գնեցին հիշյալ գույքը նշված վաճառողից 6 *թուման* 4000 թավրիզի *դինար* գումարով, որի հաստատված կեսն է 3 *թուման* 2000 թավրիզի արծաթ *դինար*՝ հետևյալ կերպ՝ Դիար Բեկ – 5 *թուման*, 4000 *դինար*, Ասվատուր՝ 1 *թուման*: Կողմերի միջև բոլոր կանոններով *շարիաթական* ճշմարիտ ու որևէ թերությունից կամ կեղծիքից զերծ առքուվաճառքի գործարք տեղի ունեցավ և գործադրվեց ամենաառջունելի ու ընդունելի, մարդկանցից լավագույն [Մուհամմադ մարգարեի] *շարիաթի* ձևերով՝ գումարի ստացմամբ և գնվածի հանձնմամբ առանց *շար'ի* պաշտոնական [ձևակերպման]: Վաճառողը պարտավորվեց ու երաշխավորեց, որ իր [սեփականատիրությունից] դուրս գալուց հետո այն ուրիշին է այսուհետև պատկանելու և հրաժարվեց կեղծ պահանջներից ու իրավունքներից, որոնք կոպիտ խախտում են: Այնուհետև վաճառողը *շար'ով* երաշխավորեց, որ գործարքի կնքման օրից հրաժարվում է գնվածի նկատմամբ բոլոր իրավունքներից և այն, որ արոտավայր է, որի սահմաններն են Ֆանոսի ու վաճառողի լիազոր անձանց հողերը, ճանապարհը և Հունաբը Դիար Բեկինն են, [իսկ] Ասվատուրի հողի սահմաններն են Ֆուլադի այգին, ճանապարհը, Հունաբը և Ասվատուրի այգին, հիշյալ գնորդների սեփականությունն է, որի հետ [կարող են վարվել] ինչպես կկամենան: Սույն խոսքերը որպես փաստաթուղթ գրի առնվեցին 1059 թ. զի ղա'ադե ամսի 12-ին[275]:

[Լուսանցքում]

1. Այն, ինչ սույն էջին գրված է, հետևյալ կերպ ընդունելի է՝ Աստծո ծառա Դուսթ Մուհամմադ,

2. Վերը նշվածին վկա եմ, Աստծո ծառա Մուհամմադ Ալի [կնիք]. Աստծո ծառա Մուհամմադ Ալի,

3. Ինչպես, որ գրվեց, ընդունելի է, Աստծո ծառա Հաջի Քազեմ,

4. Վաճառեց վերոհիշյալ վաճառողը նախապես լիազորությամբ վերոհիշյալ 13 *ման* [հացահատիկի] ցանքատարածությունը, որ հայտնի է արոտավայրի տարածք, վերը նշված Միրզա Յահիայի որդի Դիար Բեկին 6500 թավրիզի *դինար* գումարով, որի կեսն է 3250 արծաթ *դինար*, և կողմերի միջև կնքվեց *շար'իաթական* օրինական գործարք: Գրվեց 1059 թ. զի ղա'ադե ամսի 15-ին:

---

[275] 1649 թ. նոյեմբերի 17:

5. Գործադրվեց նկարագրված օրինական գործարքը՝ գրված իմ ձեռքով Աստծո ամենանվաստ ծառա [կնիք]. Աստծո ծառա Մուհամմադ Ռեզա:

8

Խոջա Գրիգորի դուստրերի՝ Աղունանի, Մուրիդադի և Ջամանի միջև ժառանգության բաժանման կապակցությամբ 1650 թ. գրված մուսալեհենամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 92, բնագիր, մեծ. 27.5 x 133 սմ, գիր՝ նասխ:

Փառք Ալլահին, որ *մուսալեհեն* էր դարձրել բարեպաշտների վիճաբանությունների ու տարաձայնությունների հարթման միջոց և փառք ու խաղաղություն նրա ստեղծած մարդկանցից լավագույնին ու նրա բարեհաճության մարմնացում, *սեիդների սեիդ*, երջանկության աղբյուր, մեղավորին սատարող և պատահարներից պաշտպանող Մուհամմադին: Նա է սիրելի ու հարատևող երկրի վրա և երկնքում: Փառք նրան բազում անգամ մինչև Ահեղ Դատաստանի օրը: Այս *շարիաթական* ակնհայտ փաստարկներով հիմնավորված գրության իրական պատճառն ու նպատակն այն է, որ Խոջա Գրիգորի ու նրա կին Բարան Խաթունի մահից հետո նրանց ունեցած երեք դուստրերից, որոնք են Աղունան՝ Ջուղայի հայոց *քալանթար* Խոջա Սարաֆրազի կինը, Մուրիդադը և Ջամանը, վերջինը վեճ սկսեց վերը նշված Խոջա Սարաֆրազի դեմ: [Ջամանի] պահանջի իմաստը հետևյալն էր. «Վերոհիշյալ Մուրադջանից[276] ինձ որպես ժառանգություն փոխանցված կանխիկ գումարը, ապրանքն ու սպասքը, պղնձյա ու արծաթյա, ոսկեջուր ու ոսկյա իրերն ու նման այլ բաները, ինչպես նաև *մուլքերը*, տները, այգիներն ու աղացները նա ապօրինաբար զավթել է: Եվ պետք է, որ իմ բաժին ժառանգական ունեցվածքը ինձ հանձնի, որպեսզի տնօրինեմ»: Խոջա Սարաֆրազը ժխտեց այդ և նրան պարտադրվեց մինչև վեճի ավարտը *շարʻով* ընդունելի երդում տալ: Վերոհիշյալ խոջան պատրաստակամ էր երդում տալ մինչև նշված վեճի ավարտը: Թագավորանիստ Սպահանի *շարʻի* մշտապես հպատակություն պահանջող, կեցությունը կարգադրող ու պարտադիր գերագույն ատյան ներկայացավ ապահովության ու բարօրրու-

---

276 Մուրադջանը Մուրիդադի ամուսինն էր (տես Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 85):

թյան մեջ գտնվող վերոհիշյալ հայցորդ Զամանը և իր լիահոժար կամքով, առանց հնարավոր բռնության ու պարտադրանքի *շար'ի* ճշմարիտ ծանուցում տվեց ու հստակ կերպով ընդունեց, որ իրեն որպես ժառանգություն փոխանցված ունեցվածքի ու գույքի ամբողջ բաժինը իր տնօրինության տակ է և իր ծնողներից ժառանգություն ստացած իր բաժնի ոչ մի մաս վերը նշված Խոջա Սարաֆրազը չի վերցրել: Դրա հետ մեկտեղ, ինչ իրավունք ու պահանջ էլ, որ նրան մնացած լինի [Խոջա Սաֆրազից] *շար'իաթի* ու իսլամի պատճառներից և հիմունքներից որևէ եղանակով, պետք է իմանան ու հասկանան, որ հայցորդը *շարիաթով* ճշմարիտ *մուսալեհե* կնքեց ու ամեն տեսակի կեղծիքից ու նենգությունից զերծ պարզ և ըմբռնելի պայմանագիր կնքեց Խոջա Սարաֆրազի հետ որոշակի 200 թավրիզի *դինար* գումարով, որը հաստատեց ու ստորագրեց: Որից հետո *շար'ին* ծանուցում տվեցին Խոջա Սարաֆրազը, նրա որդիներ Վարդանն ու Բաբան, Մուրիդադը և վերը նշված Զամանը, որ ստորև նշված բաժիններն ամբողջությամբ՝ ժառանգություն ստացած լինեն նրանք վերոհիշյալ հանգուցյալներից կամ *շար'ի* ժառանգության օրենքով նրանց փոխանցված լինեն, նրանց պնդման համաձայն, միմյանց փոխհամաձայնությամբ օրինական կերպով բաժանեցին այնպես, ինչպես գրված է յուրաքանչյուրի անվան տակ ու ընդունեցին, որ կդադարեցնեն հավակնությունները մյուսին հատկացված բաժնի նկատմամբ, ինչ իրավունք, պահանջ, բաժին, գրություն ու մաս էլ այն լինի:

Բաժին Խոջա Սարաֆրազի և նրա որդիներ Վարդանի ու Բաբայի

- մեկ խաղողի այգի Իրավանում՝ ամբողջությամբ և հետևյալ սահմաններով՝ /// ճանապարհը, Միրիջանի ու Միքայելի այգիները,

- Իրավանում գտնվող մեկ այլ՝ Փիլիպոսի այգին, որի սահմաններն են Հայրապետի այգին, Օսթադ Թումանի այգին, ճանապարհը և Նորքի՝ դաշտը,

- Իրավանում գտնվող հայտնի ջրաղացը, որ գործում է և որի սահմաններն են Փիլիպոսի և մեկ այլ այգիները, դաշտ,

- Իրավանում գտնվող ավերակ ջրաղացը, որի սահմաններն են դաշտը, վերոհիշյալ ջրաղացը և Փիլիպոսի այգին,

- Իրավանում գտնվող տունը նրան կից ծառաշատ այգով, որին կից են Ստեփան քահանայի ու Փանոսի տները, նրբանցքը և Գրիգորի տունն՝ ամբողջությամբ,

Բաժին վերոհիշյալ Մուրիդադի

- Իրավանում գտնվող մեկդուռ խաղողի այգին ամբողջությամբ՝ նրան օրենքով պատկանող, նրա մեջ մտնող ու այլ ամեն ինչով, որի

սահմաններն են Աբու ալ-Մուսայի այգին, Տեր Աբդալի այգին, ճանապարհը, Սահմ ալ-Դինի ու Թումանի այգիները,

Բաժին վերոհիշյալ Զամանի

Իրավանում գտնվող մեկդուտ Ղարաքաշ կոչվող խաղողի այգին ամբողջությամբ՝ նրան օրենքով պատկանող ու նրա մեջ մտնող ամեն ինչով ու ջրերով, որի սահմաններն են հայերի գերեզմանոցը, Թաթոսի այգին, ընդհանուր ճանապարհը, Մարգարայի այգին:

Միմյանց միջև թավրիզի 200 *դինար* գումարով *շարիաթական* ճշմարիտ *մուսալեհե* կնքեցին ու բոլոր ընդունելի և խաբեության գաղտնի միջոցներին լավատեղյակ անձանց համար ըմբռնելի ու ընդունելի, կեղծիքից ու խարդավանքից զերծ պայմանները բովանդակող համաձայնագիրը այդ տարեթվով հրապարակեցին, ամրացրին ու հաստատեցին և կրկին *շարՙին* ճշմարիտ ծանուցում տվեց վերը նշված Զամանը, որ նրան ոչ մի դեպքում ու ոչ մի կերպ որևէ իրավունք, պահանջ, բաժին կամ հայց վերոհիշյալ Խոջա Սարաֆրազից ու նրա որդիներից չի մնացել ու չունի՝ իր երկու ծնողներից կանխիկ, ապրանքով և այլ կերպ իրեն հասնող ժառանգության բաժնից, որ լիազոր անձանց ձեռքից ամբողջովին ստացվել է, այնպես որ ոչինչ չի մնացել: Այդուհանդերձ, ինչ իրավունք, բաժին ու պահանջ էլ, որ նրան մնացած լինի Խոջա Սարաֆրազից ու նրա որդիներից, որևէ *շարՙիաթական* հիմքով ու իսլամական պատճառով, պետք է իմանան ու հասկանան, որ *շարիաթական* ճշմարիտ *մուսալեհե* կնքեց Խոջա Սարաֆրազի ու նրա որդիների հետ նրանց անվան տակ գրված մեկդուտ տան ու նրան կից այգու դիմաց, և *շարիաթով* ճշմարիտ ու հստակ այդ *սոլհը* բովանդակում էր անթերի, կեղծիքից ու խաբեությունից զերծ պայմաններ, որից հետո *սոլհը* կեղծ [հայտարարելու իրավունքից] հրաժարվեց 200 թավրիզի *դինար* գումարով կնքված *մուսալեհեով*, և կողմերն իրենց խոսքերը հաստատեցին: Սրանից հետո վերոհիշյալ Մուրիդադը *շարՙի* ճշմարիտ ծանուցում տվեց, որ ոչ ոք, հատկապես Խոջա Սարաֆրազն ու նրա որդիները, նրա ծնողների լիազոր անձիք, ոչինչ նրա ծնողների ժառանգության բաժնից ու գույքից՝ լինի դա կանխիկ դրամ, ապրանք, սպասք, *մուլք*, այգի, ջրաղաց կամ այլ, չեն զավթել և նրան ոչ մի դեպքում ու ոչ մի պատճառով որևէ իրավունք չի մնացել և չկա: Այդուհանդերձ, ինչ իրավունք էլ, որ մնացած լինի որևէ *շարիաթական* հիմքով ու իսլամական օրենքով, *շարիաթական* ճշմարիտ *մուսալեհե* և այն անվավեր դարձնող կեղծիքից ու նենգությունից զերծ, ըմբռնելի ու ընդունելի բոլոր անթերի պայման-

ներով համաձայնագիր կնքեց վերոհիշյալ անձանց հետ 200 թավրիզի *դինարով*: Այդ երկու *մուսալեհեներով* վերոհիշյալ Մուրիդադն ու Զամանը դադարեցնում են իրենց բոլոր պահանջները Խոջա Սարաֆրազից ու նրա որդիներից, և ինչպիսին ու ինչ պատճառով ու օրինական հիմքով էլ դրանք լինեն, հրաժարվում են դրանցից: Եթե այսուհետև որևէ մեկը գրված ու վավերացված շարադրանքին հակառակ մյուսի դեմ վեճ սկսի, այն անվավեր ու չեղյալ կհամարվի և սուրբ *շարիաթի հաքիմները* նրանց գործը հնարավոր չեն համարելու: Այն ամբողջովին՝ վկաներով՝ ապավինելով ու երաշխավորմամբ վավերացվեց: Գրվեց 1060 թ. Սրբազան ռամազան ամսի 15-ին[277]:

[Վերին լուսանցքում]՝

Այն բանից հետո, ինչ Խոջա Գրիգորը և նրա կին Բարան Խաթունը մահացան, քանի որ երեք դուստր [ունեին]. Աղունան, որը իր կարգակիցների մեջ գլխավոր, հայերի *քալանթար* Խոջա Սարաֆրազի կինն է, Մուրիդադը և Զամանը, ներկայացավ հիշյալ Զամանը և տեղեկացրեց, որ իր ծնողներից ստացած գույքի, սպասքի, ապրանքի, կանխիկ գումարի, ոսկեղենի ու արծաթեղենի, այլ *մուլքերի*, այգիների, տների ու ջրաղացների ժառանգության իր բաժնի կապակցությամբ նա այլևս Խոջա Սարաֆրազի՝ իր քրոջ Աղունայի ամուսնու ու նրանց զավակներ և իր գարմիկներ Վարդանի ու Բաբայի դեմ պահանջ ու բողոք չունի: Այս համաձայնությունը հիմնված է իր ու նրանց միջև կնքված և գործադրված *շար'իաթական* ճշմարիտ *մուսալեհեի* վրա, որ որոշակի գումարի գանձմամբ ու *շար'ի* համաձայնությամբ Խոջա Սարաֆրազը, նրա որդիներ Վարդանն ու Բաբան, հիշյալ Զամանն ու Մուրիդադը Մուրադջանի ամբողջ ունեցվածքը և ժառանգությունը փոխհամաձայնությամբ ստորև նշված ձևով բաժանել են ու այդ բաժանման մեջ թերություն չկա: Յուրաքանչյուրը տեր է դարձել իր բաժնին այնպես, ինչպես, որ իր անվան տակ նշված է, և այդուհանդերձ ինչ իրավունք, բաժին ու մաս էլ, որ մնացած լինի միմյանց միջև որոշակի գումարով դատարանում *շարիաթական մուսալեհե* կնքեցին ու հիշյալ Զամանը կրկին *շար'ի* ծանուցում տվեց, որ Խոջա Սարաֆրազից ու նրա որդիներից որևէ պահանջ ու նրանց հետ որևէ անհամաձայնություն չի մնացել ու չունի: Այնուամենայնիվ Խոջա Սարաֆրազի ու նրա որդիների նկատմամբ նրա յուրաքանչյուր իրավունքի ու պահանջի կապակցությամբ, որ իր ծնողների *վաքիլները* կարող են ունենալ նմանների մեջ գլխավոր Խոջա Սաֆրա-

---

277 Համապատասխանում է 1650 թ. սեպտեմբերի 11:

զին և որդիներին հատկացված ու նրա անվան տակ մեկդուտ տնից ու ծառաշատ այգուց, 200 թավրիզի արծաթ *դինարով շարիաթական* ճշմարիտ *մուսալեհե* կնքեցին և ստացմամբ ու ընդունմամբ անթերի *սոլհ* արեցին: Գրվեց 1060 թ. սրբազան զի հեջջե ամսի 26-ին[278]:
[Կնիք]./// Մուհամմադ Սեյֆի: Գրի առնվեց ըստ գրանցված օրինակի:

[Լուսանցքում՝ հայերեն]

Ես Սահակ վարդապետս վկայեմ [կնիք]. Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԻՎԸ ՌՁ.:

Ես Դավիթ վ[ա]րդ[ա]պ[ե]տս վկ[ա]յ եմ որ Մուրիտատն եղրար արաւ թէ մեր հայրենի ինչ որ կայր. Մեք երեք քորքս բաժանեցաք ամեն քոր իւր բաժինն տարաւ այլ միմեանց հետ դաւէ չունիմք, [կնիք]. Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ Ա[ՍՏՈ]Յ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՋՈՂԱՅԵՑՈՅ ԹՎ ՌՁՋ

Ծնթ. *Այս փաստաթղթի գրությունից մեկ տարի անց կազմվում է մեկ այլ փաստաթուղթ (թղթ. 1ա, վավ. 85): 1651 թ. գրված այս փաստաթղթի համաձայն՝ Երևանցի Խոջա Գրիգորի մահից հետո նրա 3 դուստրերից Ջամանը, վկայակոչելով վերը նշված ժառանգության բաժանման համաձայնագիրը՝ նոր առքուվաճառքի գործարք է կնքում իր լիազոր ոմն Հովհաննեսի միջոցով և 70 թումանով Սեթի թոռ, Գրիգորի որդի Չոխուր Սա'ադի զիմմի քալանթար Սահակին վաճառում իր բաժին մեկ կտոր այգին, որից չորսական և մեկական թումանները գնորդն առանձին-առանձին վճարում է վաճառողին սոլհերի համար: Գալվածագիրը գրված է հանգերով և յուրաքանչյուր տող ավարտվում է կարմիրով գրված տառերով, որոնք կազմում են պարսկական այբուբենը:*

9

Մազրա շրջանի Ղարանլուղ-դարա (Մթնաձոր) գյուղի պատկանելությունը Մելիք Քյամալի որդի Մելիք Աստվածաբովին 10 անձանց վկայության հիման վրա հաստատող շար'ի ատյանի 1652 թ. տեղեկանքը

Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 125, բնագիր, մեծ. 20 x 29.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթաալիղ:

Պատվարժան Նորին Գերազանցություն Մուհամմադ Ղուլի

Ինչպես որ իսլամին հպատակ Մազրա' *նահիեի* մելիք Մելիք Քամալի որդի Մելիք Ասաբովը (Աստվածաբով) զեկուցեց, Չոխուր Սա'ադի

---

278 1650 թ. դեկտեմբերի 19:

մեծ *ամիր ալ-ումարա բեկլարբեկին* հիշյալ *նահիեի* գյուղերից Ղարանլըղդարա անվամբ հայտնի Մթնաձոր գյուղը, որը նրա ձեռք բերած ու նրա տնօրինության տակ գտնվող գանձագին օրինական *մուլքն* է և Նորին Գերազանցություն *սարքարի դաֆթարխանեի* գրությամբ *դիվանի դաֆթարներից* իրողությունը պարզ է, որ այդ *մահալը սունքի* մեջ չէ, և բարձրագույն հրամանով կարգադրվել էր, որ նրա իրավունքների վերականգնման համար տեղի պարտադիր հպատակություն պահանջող *շարՙի* դատարանին բացատրություն ներկայացնի: Համապատասխանաբար ամենալուսավոր *շարՙի* պայծառ ատյան ներկայացան Այասլու Ղաջար Սեհաթ Աղայի որդի Դիդար Աղա Վեղարը, Հեյդար Նաջլուի որդի Մահմուդ Աղան նույնպես, Մոլլա Ղարայի որդի Բահադուրը, Դավիդար Աղա Հաջի Բեգլուի որդի Նովրուզ Ալին, Բայանդուր Սահարլուի որդի Շահվերդին, Այդին Քեչիլուի որդի Ղադար Իրավանին, Ալլահվերդի Սահարլու Ղաջարի որդի Վիլիջանը, Յուսեֆ Ենգիջավարլու Ղաջար Յուսեֆի որդի Ղահրաման աղան, Ասլամասի որդի Ավազ Աղան և իսլամի հաստատուն դատարանի վստահելիների ներկայությամբ միասնաբար խոսքով տեղեկացրին ու հավաստեցին, որ այդ ամբողջ գյուղը մինչև բարեկարգվելը գտնվել է վերոհիշյալ Մելիք Ասաբովի տնօրինության տակ և ներկայումս որևէ մեկը նրա նկատմամբ վեճ, թշնամություն ու պահանջ չունի: Այնուամենայնիվ, քանի որ նշված բնակչության վկայության բովանդակությունը գործակալը բարձրագույն *շարՙի* ատյանում շարադրանքի բովանդակությամբ հրապարակվեց, այս մի քանի խոսքը իրողությանը համապատասխան գրի առնվեց: Գրվեց 1062 թ. պաշտելի ռաջաբ ամսի 9-ին[279]: [Կնիք]. …Մահմուդ Իսա:

[Լուսանցքում]

Քանի որ բարձրաստիճան *շեյխ ուլ-իսլամը* շարադրանքի բովանդակությունը հաստատեց, և *դաֆթարից* տեղեկացրեցին, որ հիշյալ *մահալը սունքի ու դունքի* [հողերի] մեջ չէ, Մելքոն խանի *թիուլնամչեի* մեջ ևս չկա, ուստի հիշյալ Մազրա՝ *նահիեի* հարկահավաքները Մելիք Ասաբովին չպետք է անհանգստացնեն 10 *խարվար* 87 *ման* ցորենի պահանջով, քանի որ դա *թումարով* նրանց չի հատկացվել, այլ հանեն այն իրենց *ջամՙի* հաշվից: Այսքանը:

---

[279] 1652 թ. հունիսի 16:

10

Երևանցի Խոջա Հակոբի կողմից 1658 թ. Էջմիածնին վակֆ արված Նորագեղի, Եղվարդի 4.5 դանգի և Դարաքենդում գտնվող որոշ այլ կալվածքների վակֆնամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 108, բնագիր,
մեծ. 27.5 x 119 սմ, գիր՝ նասթա'ալիղ, նասխ:

Փառք Ալլահին, որ վերահսկում է մարդկային խիղճը, տեղյակ է մարդկանց ներաշխարհին, և փառք ու խաղաղություն նրա ստեղծածներից լավագույն Արևելքի ու Արևմուտքի համար ուղարկված անբիծ բարեպաշտ քարոզիչներից սրբազնագույն Մուհամմադ մարգարեին, մեծահոգության արտահայտություն հատկապես հաղթական բարեպաշտների ամիր, հրաշագործ ու մաքրագործող Ալի բ. Աբի Թալեբիին, որը թեև մարմնով չկա, բայց ներկա է, շատ ու շատ փառք նրան հավիտյանս հավիտենից: Այս ճշմարիտ ու հաստատուն, մարգարեից բխող ու նրան ապավինող գրությունը գրվել է միայն տեղեկացնելու, որ մի լավ օր ու ժամի ներկայացավ Իրավանի հայ Խոջա Սեթի որդի քրիստոնյաներից լավագույն Խոջա Հակոբը և իր հոժար կամքով, առանց որևէ դժգոհության ու հարկադրանքի, *շարիաթով* օրինական *վակֆ* արեց Ուչքիլիսային. Իրավանին ենթակա Նորագեղն՝ ամբողջությամբ, Կարբիի գյուղերից Եղվարդի 4,5 *դանգը*՝ նրան պատկանող ու նրա մեջ մտնող հողերով, դաշտերով, պահեստներով ու այլ, նշված կամ չնշված, ամեն ինչով, նաև Իրավանում գտնվող մեկ դուռ խաղողի այգին, որի սահմաններն են ճանապարհը, ամբարտակը, *վակֆ* անողի մյուս այգին և [մի այլ] այգի, որ հայտնի է որպես Ամիրբեկի այգի, Իրավանի Դարաքենդում գտնվող մեկ դուռ խաղողի այգին, որի սահմաններն են հայտնի ջրապատնեշը, Ջանգիի երկու առուները և Դարաքենդի *մուլքերը*, հիշյալ Դարաքենդում գտնվող մեկ դուռ ջրաղացը նրան վերաբերող շինություններով, իրերով, պիտույքներով և նշված ու չնշված այլ ամեն ինչով, որի սահմաններն երկու կողմից առուները, Ղազարի ջրաղացը և ճանապարհը: *Վակֆային* բաժինների տնօրինումը հանձնեց քրիստոնյաների առաջնորդ Ուչքիլիսայի Հակոբ կաթողիկոսին և նրանից հետո ով էլ, որ կաթողիկոս կլինի հաջորդաբար: Վերը նշված *վակիֆը շար'ի* պայման դրեց, որ նշված *վակֆերի* եկամտի մեկ հինգերորդը, *իխրաջաթ, ավարիզաթ* ու *մալոջահաթ* հարկերի հանումից հետո, ծախսվի վանքի գյուղացիների վրա, իսկ 4/5-ը՝ հանձնվի քահանաներին ու վանքի միաբաններին: Վերոհիշյալ *վակիֆը* ծանոթացավ նշված *վակֆի* ստուգության,

վավերացման ու գործադրության պայմաններին, և որ նրան վերոհիշյալ *վակֆերը վակֆային* տնօրինման հանձնելուց հետո ոչ մի դեպքում ու ոչ մի պատճառով որևէ իրավունք կամ հիմք չի մնացել ու չկա: Արաբերեն ու պարսկերեն *շարիաթական սիղե* կարդացվեց: Այսուհետև եթե նա անձամբ, կամ նրա ցեղից որևէ մեկը լիազորագրով կամ ժառանգական իրավունքով գրվածին ու նշվածին հակառակ վեճ սկսի, նրա պահանջը կեղծ, անվավեր ու անհիմն կճանաչվի: Ամբողջությամբ ստորագրվեց, հաստատվեց ու վավերացվեց վկաներով ու հավաստի երաշխիքով: Գրվեց այս 1069 թ. ռաբի Ա ամսի 18-ին[280]:

[Լուսանցքում]

Նա է: Ըստ ստորև գրության ճիշտ է և ես հաստատում եմ այս *վակֆի* պայմանները, որոնք Աստծո կողմից են տրվել և ամբողջությամբ գրեցի 1069 թ. ռաբի' Ա. ամսի 18-ին, [կնիք]. /// Ալի Ռեզա,

Միջիլի թվականը համապատասխանում է գրության թվականին [կնիք]. /// Ալի Ռեզա,

Սույն կնիքով հաստատում եմ մեջբերված գործարքը ինչպես որ նկարագրված է [կնիք]. Աստծո ծառա Ռազի ալ-Դին Մուհամմադ ալ-Հուսեյնի,

Գրվեց ըստ գրանցված օրինակի [կնիք]. …

Վավերացրեցի սույնը ինչպես, որ գրված է [կնիք]. …

Այս կերպ ընդունելի է:

[Լուսանցքում հայերեն]՝

Անուն Ա[ստծո]յ Ես Սեթի որդի սուտանուն Յակոբս իմ կամաւ յոժարութ[եամ]բ տվի : Նոր[ա]յգեղու :զ: դանկ: մուլք///խ[ա]նենց եգին: Թորոսի յեգին: Գառնուկենց ջաղաց զինչ զորս ի գրում չկա: թվ ռճթ: Սբ Եջմիածնայ վախմ մեր ղաւեն յետ Յակոբ տիառն փողո[ա]նակ սբ Լուսաւորչէն ասուած ինքն ամուր ձեռաւք պահայ մինչի իւր վաղջան: ամեն: շաբաթ կիրակի պատարաքումն յիշեն Ակոբն և ուր ընդանիքն եդ նրայ վաղջանու ով որ փողանակ նսդին յիշայ որդոց որդի մինչ ի գալուստն Քրիստոսի մեկ մեկու պատվեր տան թե ըզմեզ մեղայայորս չի յիշեն կամ զրկեն պատարագիցն դատաստանին եմ նեռն եվ չի նրանց յախէն ես մեղայորս մադամ /// գրեց յիշատակ Սեթին, Գրիգորին և մեղայորս ես թե մեր յիշատակն այլևայլ անէ ///Հայրապետաց նզովքի տակ ինլի ի մեղաւոր Դաւութին սբ. Էջմիածնայ կապած լինի, [արաբատառ կնիք]. Հակոբ

---

[280] 1658 թ. դեկտեմբերի 14:

Եղայվարդա Դ. Դանկ ու կես մոլքին ես գրումս գրածա վախմայ
Ես Բաղտ[ա]յսարս վկ[այ] եմ: Ես Սիմոնս վկ[ա]յ, [կնիք].///: Ես Գէրաք որդի Գրիգուրիս վկ[ա]յ, [կնիք].///: Ես Զաքարէս վկ[ա]յ [կնիք].///: Ես Ուբրում աղէս վկ[ա]յ [կնիք].///: Ես Ոսկանս վկ[ա]յ [կնիք].///: Ես յարիվանից Գաբրէլ որդի Նիկուղուս վկ[ա]յ [կնիք].///Ն[Ի]Կ[Ո]ՂՈՒՍ: Ես քալայմայչի խաւջայ զէնիս վկ[ա]յ [կնիք].///: Ես Խոջա Պետրոսի որդի Պողոսն եղր[ա]ր լսեցի վկ[այ] [կնիք].///

11

Չոխուր Սա'ադի նախկին քալանթար Սահակից Էջմիածնի Հակոբ կաթողիկոսի 1661 թ. գնած Յայջի, Ամիրքենդի, Դարաքենդ ու Նորագեղ գյուղերում կալվածքների ղաբալեն ու մուսալեհեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1076, բնագիր,
մեծ. 36,5 –55սմ, գիր՝ նասխ, թա'լիղ

Նա է լիիրավ ու արդար Տերը
Ով հավատում է, նա փրկվում է չարչարանքներից
Փառք Ալլահին, որն ընդունելի դարձրեց առքուվաճառքը և արգելեց կողոպուտն ու վաշխառությունը և փառք Մուհամմադին՝ անբիծ բարեպաշտների հովանավորին: Այս օրինական գրության պատճառն այն է, որ նշված թվականին Իրավանի օրհնյալ բերդի, թող այն ապահով լինի աղետալի իրադարձություններից, պարտադիր հպատակություն պահանջող *շար'ի* ատյան ներկայացան իսլամին հպատակ Չուխուր Սա'ադի նախկին *քալանթար* Իսհակ անվամբ հայտնի Խոջա Սահակ բ. Գրիգոր բ. Սեթ Իրավանին և իր հոժար կամքով ու ցանկությամբ, առանց բռնության ու հարկադրանքի, արթուն ու առողջ մտոք, *շար'ի* համաձայնագրով ու գործադրվող որոշմամբ, մեկ միացյալ պայմանագրով վաճառեց քահանաների ու քրիստոնյա հոգևորականների գլխավոր Ուչքիլիսայի հոգևորական Հակոբ կաթողիկոսին կից ներառված *մուլքերը*, նրանց պատկանող, նրանց մեջ մտնող, նշված կամ չնշված ամեն ինչով, որոշակի հստակ գումարով, որի չափն է Աբբաս Բ-ի օրոք ճշտված և այժմ շրջանառվող լավորակ արծաթի 30 թավրիզի *թուման*, որի կեսն է վերը նկարագրված դրամով 15 *թումանը*: Վերոհիշյալ կողմերի միջև *շար'իաթական* պարտադիր պայմանագիրը գումարի ստացման ու ընդունման և գնվածի հանձնման ու ընդմիշտ օտարման կետերով: Այնուհետև, երբ վաճառողը, որ տեղյակ էր վաճառված գույքի գնին, 8 թավրիզի *թումանով մուսալեհե* կնքեց, որ հրաժարվում է այն բոլոր

պահանջներից, որոնք կարող են վաճառքը չեղյալ դարձնել և կեղծիք են: Նաև 2 *թումանով* հրաժարվեց հետագա բոլոր վեճերից: Ամբողջ գումարը *մուսալեհեների* վճարի հետ միասին բարձր *շար'ի* ատյանում ստացվեց և *շար'ով* երաշխավորվեց, որ գնվածի օտարումից հետո այն պատկանում է գնորդին, այսինքն գումարի վճարումը ենթադրում է գնվածի օտարում: Այժմ առքուվաճառքի այս *շարիաթական* գործարքով գնորդն իր կամքին համապատասխան կարող է գնվածը տնօրինել: Գործադրվեց մարգարեի, թող փառաբանվի նա, փախուստի 1071 թ. ռամազան ամսի 10-ին[281]:

[Լուսանցքում]

Նա է Բարձրյալ Տերը, թող հարատևի նրա պատիվը

Ընդունեց հնազանդ ու լիահոժար վաճառողը առքուվաճառքի տասներկու [իմամականների] իսլամի հավատի *շար'իաթով* օրինական գործարքի իսկությունը, և հաստատվեց բառ առ բառ, սկզբից մինչև վերջ փառահեղ ու հաղթական պետության հարատևման համար աղոթողիս ձեռքով, թող [Աստված] ների, գրեց [կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Մուհամմադ բ. Մոհսեն:

Նա է լույս տվողը և թող նրա լույսը փառավորվի

Վերոհիշյալ օրինական *շար'իաթական* գործարքը սկզբից մինչև վերջ գրվեց ու ստորագրվեց ինձ մոտ և կողմերի գումարը ամբողջությամբ ու անթերի կերպով ստացվեց: Իմ ձեռքով գրեցի Աստծո նվաստ ծառաս [կնիք]. Չկա Աստված բացի Ալլահից և նրանն է հստակ իրավունքը, Աստծո ծառա Սելահ ալ-Դին:

[Հակառակ կողմում]

Նա է արդար

Ճիշտ է բնագրում շարադրված գործարքը: Գրեց [կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Մուհամմադ բ. Մոհսեն:

Վերոհիշյալ առքուվաճառքի գործարքը կողմերի միջև տեղի ունեցավ 1071 թ. օրինյալ ռամազան ամսի 8-ին՝ սուրբ *շարիաթի* ծառայիս միջնորդությամբ, և արաբերեն *սիղե* կարդացվեց: Գրեց [կնիք]. Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու հստակ իրավունքը, Աստծո ծառա Սելահ ալ-Դին:

Գնվածը՝

Չոխուր Սա'ադին ենթակա Դարաչիչաքի *նահիայի* նկարագրված ու գովված Յայջի գյուղը, 6 *դանգ*, ճիշտ է,

---

[281] 1661 թ. մայիսի 9:

Գյոքչա դենիզի *նահիայի* Ամիրքենդի գյուղը, 4,5 *դանգ*, նույնպես ճիշտ է,

Ջրաղաց՝ մեկ քարով ու նրան պատկանող ամեն ինչով Դարաքենդ գյուղում, Զանգի գետի ափին, որի սահմաններն են Զանգի գետը, ջրաղացի առուն, Ավանեսի ու Գրիգորի ջրաղացները,

Տուն՝ մեկ ձեռք՝ իրեն շրջակա տարածքով նկարագրված ու գովված Նորագեղ գյուղում և 40 մեծ կարասներով,

Յայջի գյուղի 6 *դանգը*, Ամիրքենդի գյուղի 4,5 *դանգը*, մեկ քարով ջրաղաց և տուն իր տարածքով՝ ներառյալ կարասները ինչպես, որ կից շարադրվեց, վաճառվեց:

Այն, ինչ կից գրությամբ ու այս երեսին գրվեց, ընդունելի է ու ճիշտ:

[Հայերեն]՝

[Կնիք]. Ծ[Ա]Ռ[Ա]Յ Ա[ՍՏԾ]Ո ՍԱՀԱԿ:

Սէթի թոռն Սահակ *քալանթարի* ծախած մեզ մլքերին և ջաղացներին ղապալէն է 1071 Երևանցիէ ծախեա Ծաղկաձորու

Երևանցի Սէթի թոռն և Գրիգորի որդի Սահակ քեալանթարի տուեալ ղապալայն է, որ ծախեալ է Ջուղայեցի Յակոբ կ[ա]թ[ո]ղ[ի]կոսին երեսուն *թումանով* ‘ի միւս կ[ո]ղմն ղաբալայիս գրեցեալ *մուլքն*: Որք են Եայճի գիւղի շեշդանկ *մուլքն*, որ է ‘ի Ծաղկունեաց ձորն: Ամիրի գիւղի դ. *Դանկ* և կէս *մուլքն*, որ է ‘ի Գեղարքունէ: Ջրաղաց մի ‘ի Զորագեղ, որոյ կ[ո]ղմ[ու]նք են, Զանկին, Ջրաղացի առուն, Յօհաննէսի ջրաղացն և Գրիգորի ջրաղացն: Այլև ա ձեռն տուն ‘ի Նորագէղ, հանդերձ ք[ա]ռ[ա]սուն կար[ա]սով: ‘Ի թուին տաճկաց ռհա (1071):

12

Երևանի նախկին քալանթար Սահակի կողմից Ղըզըլվանքին 1664 թ. վակֆ արված Շահր-ե Ղադիմում գտնվող մեկ կտոր այգու կեսի վակֆնամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 118, բնագիր,
մեծ. 19.5 x 48.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթա՛ալիղ, նասխ:

Բարձրյալ է տերը
Նա է ի սրտե *վակիֆը*
Նրանն է արդարության լույսը
Ով հավատում է, նա փրկվում է աշխարհի ու Ահեղ Դատաստանի չարչարանքներից
Ալլահի փառաբանումից ու օրհնաբանությունից հետո այս *շարիա-*

թական պարտադիր ձևակերպումների շարադրման պատճառն այն է, որ ստորև նշված օրը բարի քաղաք Իրավանի, թող աստված պահպանի այն աղետներից, հպատակություն պահանջող *շար'ի* պայծառ դահլիճ ներկայացավ իսլամին հպատակ Իրավանցի Սեթի որդի Գրիգորի որդի, նախկին *քալանթար* Խոջա Իսհակը և առողջ մարմնոք ու մտոք, մտածելով աշխարհի ունայնության ու հանդերձյալ կյանքի հավերժության մասին, նաև տեղյակ լինելով մարգարեի, փառք ու խաղաղություն նրան, պարզ ու ճշմարիտ *հադիսին*, ըստ որի հավատը Ահեղ Դատաստանի դաշտն է, Շահր-ե Ղադիմում գտնվող մեկ կտոր մասամբ բարեկարգ այգու կեսն՝ իրեն պատկանող ու վերաբերող, նշված ու չնշված ամեն ինչով, որի սահմաններն են նույն այգու մյուս կեսը, որը հիշյալ *վակիֆը* որոշակի գումարով վաճառել էր Մուղնու Ավանիս վարդապետին և վերջինս այն *վակֆ* էր արել Ղզըլվանքի եկեղեցուն, Ավանիս Մուղդուսու այգին, հիշյալ այգու նրբանցքը և Խոջա Ծատուրի *վակֆային* այգին, ընդմիշտ *վակֆ* արեց և հավիտյանս ամրացրեց Ղզըլվանք կոչված եկեղեցուն: *Վակֆի* ձևակերպումը նշված *վակիֆը* իր լեզվով սրբազան *շարիաթի* սպասավորի ներկայությամբ կատարեց ու դուրս բերելով այն իր ենթակայության տակից՝ դրեց հիշյալ վանքի սպասավորների տնօրինության տակ, որպեսզի տարեցտարի այդ *վակֆի* բերքը ծախսի նրա կարիքների, լուսավորման ու եկող-գնացողների վրա, ում որ այն *վակֆ* էր արվել: Թող հակառակ արժանապատիվ *շար'ի վակֆի* նկատմամբ զավթումներ կամ ոտնձգություն չկատարեն: Քանի որ իրերի դրությունը գրվածի պես եղավ, այս մի քանի խոսքերը որպես *վակֆնամէ* գրի առնվեցին: Գրվեց մարգարեի, փառք նրան, փախուստի 1074 թվականի մեծ շա'բան ամսի 4-ին[282]:

[Լուսանցքում]

Տեղի ունեցավ նշված *վակիֆի վակֆը* ստորև նշված ձևով, որն իմ ձեռքով գրի առա, [կնիք]. Չկա Աստված բացի Ալլահից, նրանն են իշխանությունն ու արդար իրավունքը///:

Դատին պատվարժան ներկաներ՝

Շահր-ե Ղադիմի բնակիչ Մոհիբ Ալի Հաջի Բիգլուի որդի Բայրամ Ալի, դատարանի պաշտոնյա Բիքար Վերդի, դատարանի երկու *սարքար*, Իրավանի Մելիքջանի որդի Ավանես [կնիք].///, Ամիրբեկի որդի Ավանես Մուղդուսի, Խոջա ///-ի որդի Հակոբը նույնպես, Ասատուրի որդի Խոջա Իլիասը նույնպես [կնիք]. ԻԼԻԱՍ, ///-ի որդի վարպետ Պետ-

---

[282] 1664 թ. մարտի 3:

րոս, Իրավանի Մարտիրոսի որդի Սարգիս, ///-ի որդի Օթարը նույնպես, Մարուքի որդի *քյաղխոդա* Մարգարան [կնիք]. ՄԱՐԳԱՐԱ///, Հախում մուղդուսիի որդի Պողոսը [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ ՊՈՂՈՍ, Հայրապետի որդի Զաքարիան [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ ԶԱ-ՔԱՐԻԱ, Հակոբի որդի Սարգիս խանը [կնիք]. ՍԱՐԳԻՍ, Մարուքի որդի Մարգարան [կնիք]. ՄԱՐԳԱՐԱՅ, Մելիք Խուբին [կնիք]. ԹԱԹՈՍ ԽՈՊԻ, սույնի վկա Յաղին Ալի Աղա քուրդլար ղաջար [կնիք]. ///Աստծո ծառա Յաղին Ալի, սույնի վկա Յաղին Ալի Աղա Քուրդլար Ղաջար, [կնիք]./// Սեֆի, սույնի վկա [կնիք].///:

13

Մուղնու Հովհաննես վարդապետի կողմից Երևանցի Սահակ նախկին քալանթարից 1664 թ. գնված ու Ղըզըլվանքին վակֆ արված Շահր-ե Ղադիմում գտնվող մեկ կտոր այգու կեսի ղաբալեն, մուսալեհեն և վակֆնամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 117, բնագիր,
մեծ. 24.2 x 77 սմ, գիր՝ շիքասթե – նասթա'ալիղ, նասխ:

Նա է արդար Տերը
Նրանն է արդարության լույսը
Ով հավատում է, նա փրկվում է չարչարանքներից

Ալլահի փառաբանումից հետո այս *շարիաթական* պարտադիր գործադրություն պահանջող գրառման պատճառն այն է, որ ստորև նշվող օրը Իրավանի բարեբախտ բերդի, թող Աստված պաշտպանի այն աղետներից, հպատակություն պահանջող, *շար'ի* պայծառ ատյան ներկայացավ նմանների մեջ լավագույն Իրավանի Սեթի որդի Գրիգորի որդի նախկին *քալանթար* Խոջա Իսահակը, որից հետո առողջ մտոք ու ոգով քահանաներից ու հոգևորականներից լավագույն Մուղնիի Ավանես վարդապետին վաճառեց Շահր-ե Ղադիմում գտնվող իր մեկ կտոր մասամբ բարեկարգ այգու կեսն ամբողջությամբ՝ իրեն վերաբերող անցուդարձի տեղերով ու ամեն ինչով, որի սահմաններն են տարբեր կողմերից հիշյալ այգու մյուս կեսը, որը նշված վաճառողը *վակֆ* է արել Ղըզըլվանքին, Ուչքիլիսայի *վակֆ* այգին և Ղըզըլվանքի *վակֆային* այգին, շահ Աբբաս Բ-ի նոր հատած ու գործող 6 թավրիզի *թուման* գումարով, որի հաստատուն կեսը 3 *թուման* է: Գործադրվեց վերը նշված պայմանագրի կողմերի միջև *շարիաթական* պարտադիր առքուվաճառքի գործարքը՝ ընդունման, վճարելիքի ստացման ու հանձնվելիքի

հանձնման պայմաններով: Վերոհիշյալ վաճառողը, տեղյակ լինելով գնվածի արժեքին, *մուսալեհե* կնքեց և հրաժարվեց իրեն խաբված հայտարարելու իրավունքից 8000 թավրիզի *դինարով* և այդ [գործարքը ևս] անարդար հայտարարող վեճից՝ 2000 *դինարով*: Կողմերի միջև որոշված ամբողջ [գործարքի] ու *մուսալեհեների* գումարը, որը 7 թավրիզի *թուման* է, հիշյալ վաճառողը սուրբ *շարիաթի* սպասավորի ներկայությամբ գնորդի լիազորի ձեռքից այն ամբողջությամբ վերցրեց ու ստանալուց հետո *շար'ով* երաշխավորեց, որ գնման առարկայի օտարումից հետո, այն այլի է պատկանում: Քանի որ գումարը վճարելուց հետո այս գործարքի *շարիաթական* պարտադրանքով վերոհիշյալ գնորդն ըստ իր կամքի կարող է տնօրինել գնվածը: Դրանից հետո քանզի վերոհիշյալ գնորդը հիշյալ գնվածի գումարը *վակֆի* համար էր հանձնել նշված վաճառողին, ուստի ամբողջ գնվածը որպես մշտապես հաստատված *շար'իաթական վակֆ* հանձնվում է հիշյալ վանքին, որպեսզի տարեցտարի Ղըզըլվանքի օրինական *մութավալլին* այդ այգու բերքը ստանա ու տնօրինի նրա լուսավորման, գնացող-եկողների ու այլ ծախսերի վրա: Քանի որ իրողությունն այսպիսին էր, այս բառերը որպես *դաբալե* ու *վակֆնամե* գրի առնվեցին: Գրվեց 1074 թ, մեծ շա'բան ամսի 27-ին[283]:

[Լուսանցքում]

Սկզբից մինչև վերջ իմ ձեռքով գրեցի ստորև նշված վաճառքը և հիշյալ նվիրատուի կողմից *վակֆի* գործարքը ինչպես որ շարադրված է. [կնիք]. Չկա Աստված բացի Ալլահը, նրանն է հստակ իրավունքը, Աստծո ծառա Սելահ ալ-Դին, [կնիք]. Աստծո ծառա Մուհամմադ,

Դատարանի սպասավոր՝ ներկա երկու *սարքար*

Շահր-ե Ղադիմի բնակիչ Մոհիբ Ալի Հաջի Բիգլուի որդի Բայրամ Ալի, /// իրավասու դատարանի պաշտոնյա, ողորմած Շեյխ Մուհամմադ Յուսեֆի ծախսերը կատարող *դուլամ* Ջահանգիրի որդի Իմանի, Մելիքջան Իրավանիի որդի Ավանես [կնիք]. ///, Ամիրբեկի որդի Ավանես մուղդուսի, Խոջա /// որդի Հակոբը նույնպես, Ասատուրի որդի Խոջա Իլիասը նույնպես [կնիք]. ԻԼԻԱՍ, ///ի որդի վարպետ Պետրոս, /// որդի Օթարը նույնպես, Մարտիրոսի որդի Սարգիսը նույնպես, Մարուքի որդի *քյաղխուդա* Մարգարան [կնիք]. ՄԱՐԳԱՐԱ, Հայրապետի որդի Ջաքարիան [կնիք].///, Մելիք Խուբին [կնիք].///, Հախում մուղդուսիի որդի Պողոսը [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ն[Ա]Յ ՊՈՂՈՍ, Հակոբի որդի Սարգիս խանը [կնիք]. ՍԱՐԳԻՍ, Մարուքի որդի Մարգարան [կնիք].///,

---

283 1664 թ. մարտի 26:

սույնի վկա Յաղին Ալի քուրդլար ղաջար [կնիք]. ///Աստծո ծառա Յաղին Ալի, սույնի վկա Յաղին Ալի Աղա Քուրդլար Ղաջար, վկա [կնիք]. Մուհամմադ Ռեզա, [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ԻՍԱՅԻ, [կնիք]. ՄԿՐՏԻՉ Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[ԱՅ], Ազարիես վկ[այ] [հայատառ և արաբատառ կնիք]. ԱԶԱՐԻԱ- Աստծո ծառա Ազարիա:

Ճիշտ է:

14

Խոջա Հովհաննես Ջուղայեցու 1679 թ . վասիյաթնամեն ու սոլհնամեն, որով նա իր կնոջը՝ Դադքամին է կտակում իր ողջ ունեցվածքը

Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 25, բնագիր,
մեծ. 36 x 84սմ, գիր՝ նասթա'ալիղ, նասխ:

Աստծո փառաբանումից հետո այս *շարիաթական* իմաստով հստակ ու կրոնական *այաթներով* հիմնավորված և ստորև շարադրված հանգամանքներով գրության պատճառն այն է, որ թագավորանիստ Սպահանի պատվարժան, սխալների շրջապատում արդարադատ ու գովելի *դազիների դազիի* գերագույն ու պատվելի ատյան ներկայացավ Ջուղայի քրիստոնյա հանգուցյալ Նիկողոսի որդի գովելի Խոջա Հովհաննես Թոփչին և առողջ մարմնոք և արթուն մտոք *շար'ի* ճշմարիտ ընդունմամբ կրոնական պարզ ծանուցում տվեց այն մասին, որ *շար'ի* ու իսլամի օրինական կարգով իր կնոջը՝ Ջուղայի հայ Գրիգորի դուստր Դադքամին փոխանցեց. իր ողջ գույքն ու ունեցվածքը՝ կանխիկ ու ապրանքով, սպասքն ու տան կահ-կարասին, գորգերն ու կարպետները, անկողինն ու հագուստները, պղնձե, ճենապակե, ջնարակված, ոսկյա ու արծաթյա իրերը, *մուլքերը*, այգիները, տներն ու անշարժ գույքը, պարտքով տրված գումարները, գրավ վերցվածն ու համատեղ գործի բաժինները և այլ ամեն ինչ, որ օրենքով ու բավարար հիմքով նրան է պատկանում [անկախ նրանից] որպես ժառանգություն, կամ ունեցվածք. լինի այդ վատորակ ռուսական դրամով, *դիրհեմով*, թե *դինարով*, շատ լինի, թե քիչ, թեկուզ աննշան, գաղտնի, թե բացահայտ, մայր գումարով, թե տոկոսով, գործի մեջ, թե ոչ, հատկապես Սպահանի հին Ջուղայում գտնվող մեկ ձեռք պատրաստի տունը իրեն պատկանող անցուդարձի նրբանցքով, մուտքով ու այլ և այլ *վակֆերով*, որին կից են Սուլթանումի, Աղազարի, Ավետիքի, Հայրապետի տները: Այս որոշումն ու ծանուցումը հիմնավորվում է *շարիաթական* ճշմարիտ *մուսալեհեով*, որ բովանդակում է բոլոր վերը նշված կետերը և որի համար [վճարեց]

200 թավրիզի արծաթ *դինար* կանխիկ գումարով, որի կշիռը մեկ *ման* հնդկաձավարին է [հավասար]: Եվ *մուսալեհեն* ընդունողը տեղյակ լինելով նրա բովանդակությանն ու պահանջներին, ըմբռնելով նրա որակական ու քանակական կողմերը, նրա բացահայտ չափազանցման, կեղծման հնարավորությանը, այս *սոլհը* հրապարակեց՝ կնքելով ու ստորագրելով: Արաբերեն ու պարսկերեն *սիղեով* այն գործադրվեց ու նույն օրը նշվածի համաձայն կտակագրի ամբողջ ունեցվածքն ու գույքը սեփականության իրավունքով վերոհիշյալ կնոջը տրվեցին ու *շարիաթով* հաստատվեցին: Նրանն են այս նշված կամ չնշված ունեցվածքի *մալիքանեն* լիիրավ կերպով, որպեսզի ինչպես, որ ցանկանա այն տնօրինի. այնպես, ինչպես որ սեփականատերն է տնօրինում իր սեփականությունը ըստ իրավունքի ու *այաթների*: Ուստի, այսուհետև, եթե վերոհիշյալ *մուսալեհեն* ընդունողը, ինքն անձամբ, կամ որևէ մեկը նրա կողմից, լիազորագրով կամ ժառանգներից որևէ մեկը գրվածին հակառակ վեճ սկսի, այն անվավեր ու վստահությունից զուրկ կճանաչվի: Սա գրվեց 1089 թ. սրբազան զի ղաադե ամսի 20-ին[284]:

[Լուսանցքում]

Ստորև ներկայացվող բովանդակությունը աներկբայելի է և գրեց Թուփչի անվամբ հայտնի Խոջա Ավանեսը՝ ընդունեց սույն գրությունը և հաստատեց *մուսալեհեի* ստուգությունը 1090 թ. ռաբի Բ ամսի 20-ին[285]. [կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Ալի Ռամազան:

Սույնի վկա Սարհադի որդի Մարգար [կնիք]. Աստծո ծառա Մարգար:

Սույնի վկա Աղավելիի որդի Սաֆար [կնիք]. ՍԱՖԱՐ

[Հայերեն]՝

Ես Սարհադի որդի Մուքելս վկ[ա]յ [արաբատառ կնիք]. Հիսուսի սիրուց իղձս կատարվեց: Ես Մուրադս վկ[ա]յ: Ես Կարապետի որդի Յովհաննես վկ[ա]յ, [կնիք] Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ Յ[Ո]ՎՀ[ԱՆ]ՆԷՍ: Ես Մաթոս Յակոբջանի որդի վկ[ա]յ [հայատառ և արաբատառ կնիք]. ՄԱԹԵՎՈՍ, Հակոբի որդի: Ես Պողոսի որդի Ծատուրս վկ[ա]յ [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ԾԱՏՈՒՐ: Ես Զաքարէ որդի Բարղամս վկ[ա]յ [արաբատառ կնիք]. Աստծո բարեհաճության մարմնավորում, Բաղեր 1083: Ես Յովաննէս Գրիգորի որդի վկ[ա]յ [կնիք]. Յ[Ո]ՎՀ[ԱՆ]ՆԷՍ:Ես Աղամալս թօփչոց վկ[ա]յ [կնիք].Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ԱՂԱՄԱԼ: Ես

---

[284] 1679 թ. հունվարի 3:

[285] 1679 թ. մայիսի 31:

Մահդասի Զահիրի որդի Խաչատուր վկ[ա]յ [կնիք]. ///:Ես Խ[օ]ջ[ա]յ Պողոսի որդի Յոհաննջանս վկ[ա]յ [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] Յ[Ո]Հ[Ա]ՆՋ[Ա]ՆՍ: Ես Պողոսի որդի Մարկոսս վկ[ա]յ [կնիք]. Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ՄԱՐԿՈՒՍ: Ես Պետրոսի որդի Ոսկանս վկ[ա]յ [կնիք]. Ա[ՍՏԾՈ]Յ Ծ[Ա]Ռ[ԱՅ] ՈՍԿԱՆՍ: Ես Աղա Վալէ որդի Պողոսս վկ[ա]յ [կնիք]. ՊՈՂՈՍ: Ես Սաֆարի որդի Ստեփանոս վկ[ա]յ [կնիք]. ///: Ես Գիրայքի որդի Զաքարէս վկ[ա]յ եմ, [կնիք]. ///: Ես Ստեփանոս վարդապետս ևս վկ[ա]յ եմ [կնիք]. Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ՍՏԵՓԱՆ Վ[ԱՐ]Դ[Ա]Պ[Ե]Տ ///: Ես Դ[ա]ւ[ի]թ վ[ա]րդապետս Ովանեսին եղրարովն միրեցի որ ասաց թէ իմ ինչ որ ունի թէ տուն թէ տեղ սուիլ արարի իմ կողայկից Գրիգորի դուստր Տատումն [կնիք]. Յ[ԻՍՈՒՍ]Ի Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա]Յ Ա[ՍՏԾՈ]Յ ԴԱՒԻԹ ՎԱՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻ ՋՈՒՂԱՅԵՑՈՅ:

Ծնթ. *Խոջա Հովհաննես Թոփչին, թերևս, Նոր Ջուղայի Թոփչյանների տոհմից էր, որի ներկայացուցիչները հիմնականում եղել են արքունի թնդանոթաձիգ (թոփչի – պարսկ. թնդանոթաձիգ) զորքերի զորապետները: Ըստ Տեր-Հովհաննյանի այդ տոհմը բավականին մեծ է եղել, և այդ ազգատոհմից շատերը վաճառականությամբ էին զբաղվում և նրանցից ոմանք գնալով Ռուսաստան, այնտեղ հաջողության հասան առևտրի բնագավառում*[286]*:*

15

Վերին Ագուլիսի վանահոր կողմից այնտեղի հայոց վանքի նորոգման և նրա շուրջը պարսպի ու իջևանատան կառուցման օրինականությունը հաստատող 1671 թ. մաջլեսը

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 154, բնագիր,
մեծ. 24.5 x 83սմ, գիր՝ շիքասթե:

Այն բանից հետո, երբ Վերին Ագուլիս գյուղի մահմեդական համայնքը Ազերբայջանի *վիլայեթի* անկրկնելի, պատվարժան ու բարեբախտ *վեզիրի* բարձրաստիճան *վաքիլներին* դիմում էր գրել՝ զեկուցելով, որ Ագուլիս գյուղի վանքի վանահայրը վանքի շուրջը և մոտակայքում չափազանց երկար, լայն ու բարձր պատ ու շինություններ է կառուցել առանց արեգակնափայլ, աշխարհասաստ հրամանագրի ու *շար'ի* ան-

---

286 **Յ. Տէր-Յովհաննեան**, Պատմութիւն Նոր Ջուղայի, աշխարհաբարի թարգմ. Պ. Պետրոսեան, հ. Ա, Սպահան, 2014, էջ 127:

դամների ու գերագույն *վաքիլների* ծանուցման, որը հակառակ է ամենալուսավոր *շարի՛ն,* հիշյալ բարձրաստիճան [անձի] *վաքիլները* մի հրամանագիր են գրում Մուհամմադ Ղասեմ Բեկին ու կարգադրում, որ այդ *մահալը* գնալով այն կողմերի *շարի՛ի* անդամների, *քյադխոդաների* ու գեղջավագների ներկայությամբ ներկայացված հանգամանքների ու խնդրի իրողությանը վերահասու լինի, կառուցված պարսպի ու շինությունների երկարության, լայնության, բարձրության որպիսությանն ու ներկայացված խնդրի իրողությանը համապատասխան մի համախոսական փաստաթուղթ կազմի մարդկանց այն խմբի ներկայությամբ, որոնք *շարի՛ն,* հրամանին և կարգին հակառակ են վարվել, ու [նրանց] պատժի: Գրության մեջ նշված օրը վերոհիշյալ բարձրաստիճան անձը, մահմեդական ու քրիստոնյա *քյադխոդաների* և գեղջավագների հետ, որոնց անունները լուսանցքում նշված են, մտավ հիշյալ գյուղը: Հիշյալ գյուղի մահմեդական համայնքին, որի անունով էր նշված դիմում-բողոքը, հարցում արվեց դիմումի վերաբերյալ, բոլորը ժխտեցին, թե իրենք են այն գրել ու ներկայացրել վերոհիշյալ պաշտոնյայի *վաքիլներին:* Նշված գյուղի քրիստոնյա *քյադխոդաները,* գեղջավագներն ու *ռայաթներն* էլ համապատասխանաբար նշեցին, որ մինչև մահմեդականներից այն անձը, որն այդ դիմումը, որ բարձրաստիճան ու պատվելի *վեզիրի* արդարադատ ատյանին էր հղել, անձամբ չներկայանա ու դեմառդեմ անբիծ ու ամենալուսավոր *շարի՛ն* համապատասխան իրենց ու վանահոր դեմ հիմնավոր ու լիարժեք փաստարկ չներկայացնի, այս խնդրին, որ պարզապես կեղծիք է, չեն անդրադառնալու: Շատ խոսք ու զրույցից հետո նշված գյուղի վանքի շուրջ կառուցված պատը վերոհիշյալ բարձրաստիճան պաշտոնյայի ներկայությամբ մահմեդական *քյադխոդաներն* ու գեղջավագները դիտեցին, նրա ներսը մտան՝ քննելով լայնությունը, երկարությունն ու բարձրությունը, որը նրա *վակֆային մուլքում* էր:

Երկարությունն առանց շինության 44 *գար'* էր, արևմտյան կողմը՝ 44 *գար',* արևելյան կողմը, որ նորոգվել է, 43 *գար',* երեք կողմերի բարձրությունը ամբողջությամբ նորոգված չէ և պարզ չէ:

Միաժամանակ նշված գյուղի քրիստոնյա *ռայաթները, քյադխոդաներն* ու գեղջավագները հայտարարեցին, որ վանահայրը պարիսպը, որ վանքի ու հին շինության շուրջը և նրա *մուլքում* ու *վակֆում* կառուցել է, իր և շրջակա տարբեր կողմերից ուխտագնացության եկող հայերի ու հյուրերի համար կառուցված մի քանի հյուրատների, ամառային ու ձմեռային բնակարանների պաշտպանության համար է: Քանզի եկեղե-

ցու մոտի տներում քահանաներն են և ղզլբաշները, որոնք ևս այնտեղ են բնակվում, քրիստոնեական կարգով ու սովորույթներով չեն վարվում և հաճախ են օտար մարդիկ գալ-գնալով, վնաս հասցնում վանքի բնակիչներին ու նրանք չեն կարողանում աղոթել Վերին երկնային սրբազնագույն էության համար: Այս պատճառով վանահայրը եկեղեցու *վակֆային մուլքի* հին վանքի տների ներքևում պատ ու առու է անցկացրել, որ ջրի քրիստոնյա համայնքի այգիները և մի քանի հյուրատուն ու տներ է նորոգել նրա մոտակայքում: Նշված պատն ու մոտակա հյուրատները հին վանքի մեջ չեն մտնում ու կապ չունեն հին եկեղեցու ու տների հետ, և հին վանքին ոչինչ չի ավելացվել ու այն ոչ մի փոփոխություն չի կրել: Այդ պատի ու մոտակա տների կառուցումից ոչ մեկի, մասնավորապես մահմեդական համայնքին, որևէ վնաս կամ նեղություն չի հասցվել: Քանի որ գործի ընթացքն այսպիսին էր, այս երկու խոսքը իրողության ներկայացման համար գրի առնվեց: Գրվեց 1082 թ. ջումադի Բ. Ամսին[287]:

[Լուսանցքում]

Նա է

1. Նենգափոխման դեմ. հաստատում եմ ինչպես, որ գրվեց, բացատրվեց ու շարադրվեց իմ ձեռքով [կնիք].///:
2. Այնպես է, ինչպես, որ արձանագրվեց Աստծո ծառա [կնիք].///:
3. Գրվածին համապատասխան Սեֆի Ղուլի Ագուլիսիի որդի Չելեբին դիտարկեց պատը և մի քանի հյուրատները, որ վանահայրը եկեղեցու շրջակայքում կառուցել է: [Դրանք] հին վանքի հետ կապ չունեն, [կնիք]. Աստծո ողորմածության մարմնացում Սեֆի Ղուլի:
4. Գրվածին համապատասխան ես՝ Մորթազա Ագուլիսիի որդի Ռեզա Ղուլիս, նայեցի պատը և շինությունը, որ վանահայրը եկեղեցուց դուրս նորոգել է: [Դրանք] հին վանքի հետ կապ չունեն, [կնիք].///:
5. Նա է: Ինչպես, որ քննության մեջ նշվեց, Աստծո ծառա Բեհզադս նոր պատն ու նրա մոտ կառուցված շինությունը ոչ մի դեպքում հին վանքի հետ կապ չունեն [կնիք]. Մուհամմադի տոհմի ծառա Բեհզադ:
6. Նայեցի պատն ու շինությունը, որ նրա կողմերում նորոգել են և մի հյուրատուն կառուցել, [կնիք]. /// Մուհամմադ Ռազի:
7. Նա է: Աստծո ամենանվաստ ծառա Մուհամմադ Իբրահիմ Ագուլիսին գրվածին համապատասխան նայեց ու վկայություն տվեց, որ

---

[287] 1671 թ. հոկտեմբերի 5 - նոյեմբերի 3:

կառուցված պատն ու շինությունը վանքի մասը չեն և վանահայրն իր պաշտպանության համար է կառուցել [կնիք]. ///Իբրահիմ:

8. Նա է: Աղամիր Միրզայի որդի Մուրադջանս ականատես եղա, որ մոտակա պատն ու հյուրատունը հին վանքի մասը չեն, այսքանը [կնիք]. Աստծո ծառա Մուրադջան:
9. Նա է: Ես՝ Հաջի Իսմայիլ Ագուլիսիս տեսա ու հավաստում եմ, որ վանքի մոտ կառուցված պատն ու շինությունը նրա մասը չեն [կնիք]. /// Աստծո ծառա Մուհամմադ Իսմայիլ:
10. Նա է: Ամենանվաստ աղոթող Մեհդի Յահիա Մուեզինս սկզբից մինչև վերջ նայեցի և վկա եմ [կնիք]. ///Մուհամմադ Մեհդի:
11. Նա է: Այն, ինչ այս էջին գրվեց սկզբից մինչև վերջ նայեցի և վկա եմ. Աստծո ծառա Խալաֆ Մուհամմադ Բուդաղ Բեկ Ագուլիսի [կնիք]. Մուհամմադի տոհմի ծառա Խալաֆ:
12. Նա է: Գրվածին համապատասխան Մոլլա Յուսեֆ Ագուլիսիի որդի Ահմադ Խանս վկա եմ և տեսել եմ պատն ու շինությունը, որ նրա շրջակայքում կառուցվել է, վանքի մեջ չի մտնում:
13. Նա է: Բարձրաստիճան Սուլթան Մուհամմադ Բեկի որդի նվաստ Մուհամմադս տեսա ու վկայում եմ, որ նրա մոտակայքում են կառուցված պատը և նրա մոտի շինությունը, գրեց [կնիք]. /// Մուհամմադ 1078:
14. Նա է: Ես՝ Աստծո ծառա Աբդալլահ /// Շահ Հուսեյն Ագուլիսիս այդ *մահալը* գնալով, տեսա պատն ու շինությունը, որը վանահայրը վանքից դուրս, նրա շրջակայքում կառուցել է, և այն ոչ մի դեպքում հին վանքի հետ կապ չունի [կնիք]. Նահատակների շահ Հուսեյն:
15. Գրվածին համապատասխան Ալի Ղուլի Բեկի որդի, Աստծո ամենանվաստ ծառա *խաասե-ե շարիֆեի դուլամ* Աղա Մուհամմադս հավաստում եմ, որ տեսա պատը և շինությունը, որ կառուցված են նրա [վանքի] շրջակայքում, [կնիք]. /// Աղա Մուհամմադ:
16. Ալի Ղուլի Բեկի որդի ամենանվաստ ծառա *խաասե-ե շարիֆեի դուլամ* Սուլթան Մուհամմադս հավաստում եմ, որ տեսել եմ պատը և շինությունը ինչպես, որ կառուցվել են, [կնիք]. Հավատի շահի[288] սիրելի Սուլթան Մուհամմադ:
17. Այն, ինչ այս էջին գրված է, իրականություն է, Աստծո ծառա Ագուլիս գյուղում բնակվող Ալի Ռեզայի որդի Ամիր Չելանգիր:

---

[288] Իմամ Ալիի բնորոշումներից է:

18. Ամենանվաստ ծառա *Ղուլամ* Հուսեյն Ագուլիսիս՝ այն ինչ այս էջին գրված է, տեսա ու վկայում եմ, որ մի քանի հյուրատները, որ գնացող-եկողների ու հյուրերի համար են կառուցվել, նրա [վանքի] շրջակայքում են:
19. Ես՝ Ղարախան Ագուլիսիի որդի Աստծո ծառաներից ամենանվաստ ///ս, այդ *մահալը* գնալով տեսա, որ հին վանքի պատն ու շինությունը չեն փոփոխվել և կառուցված պատը և մի քանի հյուրատները վանքից դուրս են և հին եկեղեցու հետ կապ չունեն [կնիք]. Ապավինում եմ Ալլահին ///:
20. Մուհամմադ Զաման Ագուլիսիի որդի մարդկանցից ամենանվաստ Աբդ ալ-Ռազաղս այդ *մահալը* գնալով՝ տեսա ու վկայում եմ, որ հին վանքի պատն ու շենքը չեն փոփոխվել: Կառուցված պատն ու մի քանի հյուրատները վանքից դուրս են և հին եկեղեցու հետ կապ չունեն, [կնիք].///
21. Նա է: Գրվածին համապատասխան Մաջնուն Ագուլիսիի որդի, մարդկանցից ամենանվաստ Հեյդարս վկայում եմ, որ տեսել եմ, որ շինությունը, որ վանահայրը ներկայումս կառուցել է, հին եկեղեցու հետ կապ չունի, [կնիք]. ///Հեյդար:
22. Նա է: Մարդկանցից ամենանվաստ Իման *Խան* Ագուլիսիս գրվածին համապատասխան տեսել եմ, որ շինությունը, որ վանահայրը կառուցել է, հին վանքի հետ կապ չունի, այլ մի քանի գնացող-եկողների համար է կառուցվել որպես հյուրատուն: Այսքանը:
23. Ինչպես, որ շարադրված է, ճիշտ է և հակասություն չունի, ամենանվաստ ծառա Վերին Ագուլիսցի Մուհամմադ Ասքարի, [կնիք].///:
24. Գրվածին համապատասխան վկա եմ ու տեսել եմ պատը և շինությունը, որը հյուրատուն է և չի մտնում հին վանքի մեջ, Աստծո ծառա Մուհամմադ Ասքարի Ագուլիսիի որդի Մուհամմադ Սալեհ:
25. Գրվածին համապատասխան վկա եմ ու տեսել եմ պատը և շինությունը, որը հյուրատուն է և որը չի մտնում հին վանքի մեջ, Աստծո ծառա Մոլլա Շահղուլի Ագուլիսիի որդի Մուհամմադ Ալի [կնիք].///:
26. Ամիրշահ Դերաղորդիի որդի Խանվերդին վկա է, որ վանահայրը վանքի շրջակայքում շինություն ու մի քանի տներ է կառուցել: Այսքանը [կնիք]. Խանվերդի:
27. Խալաֆ Բեկ Դերաղորդիի որդի, մարդկանցից ամենանվաստ /// Բեկս տեսա և վկայում եմ, որ պատը կառուցել է հին եկեղեցուց դուրս, իսկ մի քանի հյուրատները՝ նրա շրջակայքում և հին եկեղեցու հետ կապ չունեն:

28. Շարադրանքում գրվածին համապատասխան վկա եմ ես՝ Շահղուլի Ագուլիսիի որդի Աստծո ծառա Մուհամմադ Իբրահիմս, որ մի քանի հյուրատները և նրանց շուրջ պատը հին վանքի հետ կապ չունեն, այսքանը [կնիք]. ///Մուհամմադ Իբրահիմ:
29. Բարձրաստիճան Խալաֆ Բեկը տեսել է, որ հին վանքն ու նրա տաճարը փոփոխություն չեն կրել և նշվում է, որ վանահայրը պատն ու նոր շինությունը վանքից դուրս, նրա այգում է կառուցել, և Աստված գիտի ճշմարիտը, [կնիք]. ///Մուհամմադ:
30. Գրվածին համապատասխան Դավուդ Դերաղորդիի որդի Հաջի Ղադիմը տեսավ ու վկայում է, որ շենքը և պատը, որ այժմ վանահայրը [վանքի] շուրջը կառուցել է, վանքի հետ կապ չունեն, այլ նրանից դուրս այգում, շրջակայքում և այգում են [կնիք]. ///Հաջի Իբրահիմ:
31. Յարեշ ///ի որդի, մարդկանցից ամենանվաստ Նովրուզս տեսել եմ ու վկայում եմ, որ պատն ու շինությունը, որոնք վանահայրը այժմ նրա շուրջը կառուցել է, հին եկեղեցու հետ կապ չունեն, այլ նրա այգում են ու վանքից դուրս [կնիք]. ///Նովրուզ:
32. Խալաֆ Բեկ ///ի որդի Մուհամմադ Հաթամը վկա է, որ վանահայրը վանքի շուրջն է պատը կառուցել, իսկ շինությունը՝ նրա շրջակայքում: Այսքանը [կնիք]. ///Մուհամմադ Հաթամ:

16

Մելիք Իլիասին ու քյադխոդա Գրիգորին Քաշաթաղի հայ ավագանու կողմից 1691 թ. տրված լիազորագիրը

Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 969, ցուցակ 1, գործ 1, էջ 4[289]

Մեծ. 23 x 19սմ. Գիր՝ շիքասթե – նասթա'լիղ

Քոշթասֆ[290] *մահալի* մելիքներն ու *քյադխոդաները* որոշեցին ու *խասսե-ե շարիֆեի սարքար նազեր-ե բոյութաթին շար՛ի* ծանուցում տվեցին, որ ամբողջ *մահալն* ու իրենք բոլորը՝

---

[289] Այս վավերագրի նախկինում պահվելիս է եղել Պետական Կենտրոնական Պատմական արխիվում, ֆոնդ 59, ցուցակ 1, գործ 1, էջ 4, ուստի այդ տվյալներով է հրատարակվել մեր կողմից դեռևս 2001 թ. (Ք. Կոստիկյան, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, էջ 169):

[290] Մատենադարանի պարսկերեն վավերագրերում այդպես է կոչվում Քաշաթաղ գավառը (այս մասին մանրամասն տե՛ս Ք. Կոստիկեան, Հայոց վանքերի ու բնակաւայրերի անուանումներ, էջ 131):

/// *մահալի* Մելիք Հախնազար [կնիք]. ///
Հալաք գյուղի[291] *քյադխոդա* Անդրիաս,
Բայանդուր[292] գյուղի *քյադխոդա* Ամիրֆազլ և այլք,
Ջաղացատուն գյուղի *քյադխոդա* ///և այլք,
Շրվական[293] գյուղի *քյադխոդա* Մարտիրոս և այլք,
Ղուշչի[294] գյուղի /// քյադխոդան և այլք
Մերիկ գյուղի *քյադխոդա* Պողոս և այլք,
Հարար[295] գյուղի *քյադխոդա* Մելքում և այլք,
Աֆաթխար[296] գյուղի *քյադխոդա* Առաքել և այլք [կնիք].///,
Մինքենդ գյուղի[297] *քյադխոդա* Իսախան և այլք [կնիք].///
Փուլ[298] գյուղի *քյադխոդա* Հակոբ և այլք,
Հոչաս[299] գյուղի *քյադխոդա* Պետրոս և այլք [կնիք]. ///
Յալղուզդամ[300] գյուղի *քյադխոդա* Սարգիս և այլք,

---

[291] Հալաք[ս] գյուղը Ալիշանը նույնացնում է իր ժամանակների Ալեաքչի գյուղի հետ, նշելով այն Հագարի գետի մոտ Աղահեճք գավառում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 270):

[292] Բայանդուր գյուղը Պայանդուր ձևով նշվում է Ալիշանի կողմից Աղահեճք գավառի մոտ Ղարաբաղի Հաբանդ գավառում, Խնածախից քիչ դեպի հյուսիս (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 264):

[293] Շրվականը Ալիշանը նշում է Սյունյաց եկեղեցուն հարկատու Աղահեճք գավառի բնակավայրերի մեջ (Ղ. **Ալիշան**, Սիսական, էջ 267):

[294] Ղուշչի գյուղը Ալիշանը նշում է Աղահեճք գավառի «թուրքանուն» գյուղերի թվում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 267):

[295] Հարար գյուղը նշվում է Աղահեճք գավառի Հագարի գետի հովտում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 270):

[296] Աղբաթխեր գյուղն է, որ գտնվում է «Աղաւնոյ վտակի վերնահովտում, Իշխանասարի հիւսիսային լանջերի աղբիւրներից ձեւաւորուող եւ շուրջ 10 կմ զուգահեռ հոսող երկու օժանդակների միջեւ հարաւից հիւսիս ձգուող սարահարթի վերջին մասում, Աղաւնոյի ափից 2 կմ հարաւ- արևմուտք, Հակ գիւղից Իշխանասարի աղբիւրները գնացող դաշտային ճանապարհով 4 կմ հարաւ, ծովի մակերեւոյթից 1650 մ բարձրութեան վրայ» (Ալ. Հակոբյան, Հակարիի վերնահովտի նորահայտ վիմագրերը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1998, 1-12, էջ 270-271):

[297] Մինքենդ գյուղը նշելով Սյունիքի Աղահեճք գավառում՝ Ալիշանը այն նույնացնում է Մննի գյուղի հետ (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 267):

[298] Փուլ գյուղը նշվում է Աղահեճք գավառի Տաթևի վանքին հարկատու գյուղերի թվում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 267):

[299] Քաշաթաղի Հոչաս, Հոչես, Հոչանց կամ Հունչաք անուններով հայտնի գյուղն է Հագարա գետի ափին (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 269):

Արավիս[301] գյուղի *քյադխոդա* Պետրոս և այլք,

- իրենց հոժար կամքով ու համաձայնությամբ քրիստոնյաներից լավագույն Մելիք Հախնազարի[302] որդի Մելիք Իլիասին ու *քյադխոդա* Գիքորին իրենց հատուկ *վաքիլը* դարձնեն, որպեսզի իրենց խնդիրն ու պահանջը *խասսե-ե շարիֆեի սարքար նազեր-ե բոյութաթի դիվանին* ներկայացնի: Այն, ինչ նշված *վաքիլները* բարձրաստիճան պաշտոնյաներին կզեկուցեն ու որպես խնդիր կներկայացնեն, իրենք համաձայն են և դա իրենց հայցն է, որի համար սույն *վեքալաթ-նամչեն* կազմվեց: Գրվեց 1103 թ. սրբազան մուհարրամ ամսին[303]:

[Լուսանցքում]

1. Ինչպես, որ գրված է, ճիշտ է, [կնիք]. ///
2. Ինչպես, որ գրված է, ճիշտ է, [կնիք]. Աստծո ծառա Ալի Աղա Միրզա,
3. Ճշմարտությունն այսպիսին է, և սխալ չկա, Ալի Ղարայ Դիզակի, [կնիք].///,
4. Ինչպես, որ գրվեց, ճիշտ է, [կնիք].///
5. Ընդունում եմ, որ այնպես է, ինչպես գրվեց, Ղափանի մելիք Մելիք Հայկազ, [կնիք]./// Հայկազ,
6. Վկա եմ սույն գրությանը Քոշթասֆի Մելիք Հախնազարի եղբայր Հայկազ[304], [կնիք].///,
7. Ճշմարտությունն այնպես է, ինչպես, որ նշվեց, [կնիք]. ///,

---

[300] Յալդուզդամը Ալիշանը ևս նշում է Աղահեճք գավառի «թուրքանուն» գյուղերի շարքում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 267):

[301] Հնարավոր է լինի Արահուծ բնակավայրի աղավաղված տարբերակը: Այն նշվում է Սյունյաց եկեղեցուն հարկատու Աղահեճք գավառի բնակավայրերի մեջ (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 266): Այսպիսի աղավաղումները բազում են օտարահունչ տեղանունների մեջ (հայկական տեղանունների աղավաղումների մասին տե'ս մանրամասն Ք. Կոստիկյան, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները, էջ 129-133):

[302] Մելիք-Հայկազյանների 15-17-րդ դարերի պատմությունը վկայված է ինչպես պարսկերեն վավերագրերում ու պատմագրական երկերում, այնպես էլ հայկական վիմագրական նյութերում (այդ մասին տե՛ս Ք. Կոստիկյան, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, էջ 168-9):

[303] 1691 թ. սեպտեմբերի 24 – հոկտեմբերի 24:

[304] Մելիք Հախնազարի ու նրա եղբայր Հայկազի անունները նշվում են Մերիկ գյուղի ս. Աստվածածին եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրայի 1682 թ. արձանագրության մեջ (Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 134):

8. Գրությունը ճիշտ է, [կնիք]. Աստծո ծառա///,
9. Այսպիսին է ճշմարտությունը և սխալ չկա, [կնիք].///,
10. Ինչպես, որ ստորև գրվեց, ճիշտ է և սխալ չկա, Աբդ ալ-Քերիմ Քոշթասֆի, [կնիք].///,
11. Ճշմարտությունն այսպիսին է և սխալ չկա, Միրզա Ալիի ծառա Մուհամմադ Ռազի,
12. Ճշմարտությունն այսպես է և սխալ չկա, նոր մահմեդական Քյալ Ալի, [կնիք].///,
13. Գրության վկա Աստծո ծառա [կնիք]./// Մանուչեհր,
14. Գրության վկա Աստծո ծառա [կնիք]. Աստծո ծառա Ալի Թուֆան,
15. Իրականությունն այնպես է, ինչպես նշվեց, [կնիք].///
16. Իրականությունն այնպես է, ինչպես նշվեց և սխալ չկա, [կնիք].///,
17. Իրականությունն այնպես է, ինչպես նշվեց և սխալ չկա, [կնիք].///,
18. Իրականությունն այնպես է, ինչպես նշվեց և սխալ չկա, [կնիք].///,
19. Իրականությունն այնպես է, ինչպես նշվեց, [կնիք].Մուհամմադի տոհմի ստվեր, Բահրամ,
20. Իրականությունն այնպիսին է, ինչպես որ նշվեց, [կնիք].///

17

Ղրխբուլաղի Գյոքգմբեթ (Կավակերտ) գյուղի բնակիչների կողմից Էջմիածնի վանքին 1704 թ. վակֆ արված իրենց մեկ կտոր 30 թաղար ցանքատարածության վակֆնամեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 213, բնագիր,
մեծ. 19 x 29 սմ, գիր՝ շիքասթե:

[Աստծո] փառաբանումից հետո այս խեղճության քողով ծածկված հրաշալի, մարգարեից սերող ու *շարիաթից* բխող գրության պատճառն այն է, որ ապահով Իրավանի, թող Աստված պահպանի այն աղետներից ու փորձություններից, պարտադիր հպատակություն պահանջող *շար'ի* ատյան ներկայացան Մնացականը, Ծառուկը, Հակոբը, Մկրտիչը, Երեմիա քահանան ու Ղրխբուլաղի Վերին Գյոքգմբեթ գյուղի մյուս *ռայաթները* և լինելով առողջ ու բանական վիճակում, իսլամի բոլոր *շարիաթական* ու *ուրֆի* ձևակերպումներով այդ գյուղում գտնվող ամբողջ մեկ կտոր 30 *թաղարի* ցանքատարածությունը, որի սահմաններն են այդ գյուղի *քյոֆշանը*, գետը, նոր առուն ու հիշյալ գյուղը, *վակֆ* արեցին Ուչքիլիսայի վանքին, որպեսզի այդ վանքի *վակֆերի մութավալլին* այն մյուս *վակֆերի* նման տնօրինի և նրա եկամուտը տարեցտարի ծախսի

հիշյալ վանքի *իխրաջաթի* վրա: Թող այն առքուվաճառքի առարկա չդարձնեն: *Շարիաթական* այս ճշմարիտ *վակֆը* գործադրվեց 1116 թ. սրբազան մուհարրամ ամսի 23-ին[305]:

[Լուսանցքում]՝

Գործադրվեց՝ իմ ձեռքով հաստատված լինելով [կնիք]. Ամենաողորմած ու գթառատ Աստծո անունով,

Ներկաներ՝ Ամենանվաստ Մուհամմադ Ռեզա /// *քալանթար* [կնիք]. ///Մուհամմադ Ռեզա,

Ղրխբուլաղի մելիք Մելիք Աղամալ [կնիք]. Մելիք Աղամալ,

Գործադրվեց ճիշտ ստորև գրվածին համապատասխան [կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Մուհամմադ Քերիմ,

Սույն գրությանը վկա Մուհամմադ Սադեղ *քալանթար.* [կնիք]. /// Մուհամմադ Սադեղ:

18

Աստվածատուր կաթողիկոսի կողմից Ալիբեկլու գյուղի ռայաթներից 1719 թ. գնված ցանքատարածությունների ու արոտավայրի ղաբալեն

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1127, բնագիր, նորոգված, մեծ. 24 – 45սմ, գիր՝ շիքասթե

Իրավունքն Աստծունն է

Ալլահի փառաբանումից ու գովաբանությունից հետո այս *շարի'աթական* գրության պատճառն այն է, որ ապահով Իրավանի գերագույն, գլխավոր *շարի'աթական* դատարան ներկայացան Կարբիի *նահիեի* Ալիբեկլու գյուղի *ռայաթներ* Կարապետի որդի Ալլահվերդին, Ղուկաս քահանայի որդի Արփանոսը, Արութինի որդի Ղազարը և Դավուդի որդի Պետրոսը՝ հիշյալ գյուղի բոլոր *ռայաթների* լիազորությամբ ու իրենց հոժար կամքով, առանց որևէ հարկադրանքի կամ պարտադրանքի, վաճառեցին օրինական ուղիղ վաճառքով հոգևորականների առաջնորդ Ուչքիլիսայի Աստվածատուր կաթողիկոսին Ալիբեկլու գյուղում գտնվող մի քանի կտոր ցանքատարածությունն ու արոտավայրը նրանց մեջ մտնող ու նրանց վերաբերող ամեն ինչով, որոնց սահմաններն են Ղուփի Փալչաղլուն, Սևջուրը, նրա ավազուտն ու Սեֆիաբադի առուն, 25 *թավրիզի թուման* կանխիկ ու շրջանառվող գումարով, որի կեսը 12 *թուման* 5000 *դինար* է: Հիշյալ գնորդը նկարագրված գույքը նշված

---

[305] 1704 թ. մայիսի 28:

վաճառողներին պայմանավորված գումարը վճարելով՝ վաճառքի պայմանագիրը գործադրվեց և վերոհիշյալ վաճառողների համար հասկանալի է, որ գումարը ստանալով ու սեփականության օտարումից հետո, լիովին զրկված են այդ գործարքը չեղյալ դարձնելու բոլոր իրավունքներից, քանի որ *շարի՛ի* օրենքներով գույքի օտարումից հետո նրա նկատմամբ իրավունքները ուրիշի են [փոխանցվում]: Հաջորդ օրը վաճառողները գնորդների հետ *շարի՛աթով* հստակ համաձայնություն կնքեցին նաև, որ կողմերի բոլոր [հետագա] խարդախ վեճերն ու պահանջները անհիմն համարվեն: Վերոհիշյալ վաճառողները գնորդի հետ 1 թավրիզի *թուման* կանխիկ գումարով գործարքը կեղծ հայտարարելը անթույլատրելի դարձնող *շարիաթական մուսալեհե* կնքեցին ամենալուսավոր *շար՛ում* և այն ընթացք ստացավ: Այժմ այս *շար՛իաթական* առքուվաճառքի գործարքով նշված գույքի սեփականության իրավունքը հիշյալ գնորդինն է, որն ինչպես ցանկանում է, այնպես կարող է այն տնօրինել: Գործադրվեց հիջրայի 1131 թ. ռաբի Ա ամսի 1-ին[306]:

[Լուսանցքում]՝

Հիշյալ [գործարքին] շահագրգիռ վաճառողները ընդունեցին ինչպես, որ գրվեց իմ ձեռքով [կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Զահիր բ. Լոթֆի,

Վկա եմ հիշյալ վաճառողների համաձայնությանը նոտարական հաստատությունում [կնիք]. ///

Թեքելլու ցեղի գեղջավագ Նորին Գերազանցություն բարձրաստիճան Մուհամմադ Ալի Բեկ [կնիք]. /// Մուհամմադ Ալի,

Ներկաներ՝ հիշյալ գյուղի *սարքար* Ներսես Աղա,

Մուսթովֆի Բիգլու, Դատարանի սպասավոր Ալլահվերդի

[Կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[ԱՅ] ՊԵՏՐՈՍ

19

Շիրվանի ու Շաքիի ավագանու մահզարն այն մասին, որ նրանք համաձայն չեն Էջմիածնի անմիջական ենթակայությանը և կամենում են Աղվանից Եսայի կաթողիկոսի[307] ենթակայության տակ գտնվել

Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 208ա, բնագիր,

մեծ. 24.5 x 91.5սմ, գիր՝ շիքասթե – նասթաալիղ

---

306 1719 թ. հունվարի 22:

307 Եսային Աղվանից կաթողիկոսն է եղել 1701-1728 թթ.:

Այս կարևոր խոսքերի գրության պատճառն այն է, որ ներկայացան և գիտակցաբար ընդունելով՝ հայտարարեցին Շիրվանի ու Շաքիի *մահալների* հայ բնակչության մեծամեծները, *քյադխոդաները*, գեղջավագները, քահանաները, վանահայրերն ու այլ ազդեցիկ մարդիկ, որ հին ժամանակներից ի վեր մինչ այժմ հիշյալ *վիլայեթների* հայերի կաթողիկոսությունը սերնդեսերունդ Գանձասարի Եսայի կաթողիկոսին է փոխանցվել: Ուստի Շաքիի ու Շիրվանի *վիլայեթի* բոլոր հայերը հաշվի առնելով նրա դրական ջանքերը և լավ վերաբերմունքը, սակավապետությունն ու հոգածությունը, նրանից գոհ ու շնորհակալ են և ընդունում են նրան որպես իրենց առաջնորդ: Ուչքիլիսայի կաթողիկոսությունը այս *վիլայեթի* նկատմամբ իր հավակնություններով նոր է հանդես գալիս և պահաջներ ներկայացնում, որը ի սեր Աստծո, իր բարօրության համար է, և նեղություն է պատճառում: [Մենք] համաձայն չենք Ուչքիլիսայի կաթողիկոսի առաջնորդությանը և այն չենք ընդունում: Եվ ով, որ վերահասու լինելով իրողությանը համամիտ է, իր անունը այս թղթի վրա թող գրի ու կնիքով հաստատի, իսկ եթե գրագետ չէ, թույլատրվում է գրչով նշում անի.

[Վերին լուսանցքում]

Իրականությունը հետազոտվեց, և խնդրարկուի կողմից ստորև նկարագրվող իրողությունը ճիշտ է, [կնիք]. Աստծո ծառա Մուհամմադ Ղասեմ:

[Ստորին լուսանցքում]

Գիտակցում ու ընդունում ենք՝

1. Ղաբալեի *մահալներից* Նիջ գյուղի[308] *քյադխոդա* Սարգիս [կնիք].///,
2. *Քյադխոդա* Ավանես, [կնիք]. /// Ավանես,
3. Ընդունում եմ՝ Ալլահղուլի [կնիք]. ///,
4. Գիտակցում և ընդունում եմ: Պողոս քահանա [կնիք]. ///,
5. Ղաբալայի Բումի[309] գյուղի *քյադխոդա* Բայրամը,
6. *Քյադխոդա* Նասիբը նույնպես,

---

[308] Նիջը (կամ Նիժ) Շաքիի Ղաբալա գավառի հայաշատ գյուղաքաղաքներից է, որը 19-րդ դարի երկրորդ կեսին ուներ 800 ծուխ, շուրջ 5000 հայ բնակիչ (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, Երեւան, Գանձասար, 1999, էջ 126):

[309] Մ. Բարխուդարյանցը Բում գյուղը նշում է Շաքիի ու Կապաղակի մահմեդականացած հայկական գյուղերի շարքում (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 147):

7. *Քյաղխոդա* Մինաս քահանան ևս,
8. Նուխի գյուղի[310] *քյաղխոդա* Գրիգորը,
9. Գիտակցում ու ընդունում եմ Ղաբալայի Շաքիլու *քյաղխոդա* Յավրի [կնիք]. Աստծո ծառա Յավրի,
10. Ղաբալայի Չայլու գյուղի *քյաղխոդա* Բաբա [կնիք]. Ք[ՐԻՍ-ՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա] ՊԱՊԱ,
11. Յաղուբլու[311] գյուղի *քյաղխոդա* Սիմեոն քահանա [կնիք]. ԱՍՏԾՈ ԾԱՌԱ ՍԻՄԵՈՆ,
12. Դարաքենդի[312] Ջանի *քյաղխոդա* [կնիք]. ՃԱՆԻ,
13. Բաբաքի[313] գյուղի *քյաղխոդա* Յադգար, [կնիք]. Ա[ՍՏԾ]Ո Ծ[Ա]Ռ[Ա] ԵԴԿԱՐ,
14. Ղաբալեի Զառափի[314] գյուղի *քյաղխոդա* Գրիգոր, [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա] ԳՐԻԳՈՐ,
15. Բաբաքի Սրապիոն քահանա,
16. Յաղուբլուի Ներսես քահանա և Բեկնազար,
17. Չայքենդի[315] Իսայի և Ծատուր քահանաներ, նաև ջուլհակ Ամիր,

---

310 Մ. Բարխուդարյանցի հավաստմամբ նախկինում Նուխի կոչվող գյուղը օսմանյան նվաճումից հետո վերանվանվել է Սոլթան-Նուխի (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 125):

311 Եաղուբլու (կամ Յակովբայ) հայաբնակ գյուղն ըստ Մ. Բարխուդարյանցի Շաքիի Հողի գավառում էր (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 116):

312 Դարաքենդը թերևս Մ. Բարխուդարյանցի կողմից Շամախու շրջանում նշած Դարաքարքանջ հայկական բնակավայրն է (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 89), որտեղ բառի երկրորդ բաղադրիչը փոխարինվել է պարսկական գրագրության մեջ առավել ընդունված քենդ բաղադրիչով որը լայն կիրառություն ուներ (այս մասին մանրամասն տես Ք. Կոստիկեան, Հայոց վանքերի ու բնակաւայրերի անուանումներ, էջ 133-135):

313 Խոսքը թերևս Յաղուբլուի հարևանությամբ Մ. Բարխուդարյանցի նշած Պապիկ հին գյուղատեղիի մասին է (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 116), որը XVIII դարի սկզբին վավերագրի համաձայն դեռևս բնակելի էր:

314 Զառափի գյուղը նշվում է թե Բարխուդարյանցի երկում և թե ռուսական վիճակագրական նկարագրության մեջ Շաքիի հայաբնակ գյուղերի շարքում (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 117, Описание Шекинской провинции составленное в 1819 году ген.-майором Ахвердовым и ст. сов. Могилевским, Тифлис, тип. гл. уп. Наместника Кавк., 1866, н. 56):

18. Խոշքաշենի[317] *քյադխոդա* Հարիթուն,
19. *Քյադխոդա* Դավուդը նույնպես,
20. Բոզավանդի[318] *քյադխոդա* Անդրիաս,
21. նաև *քյադխոդա* Աղաբեկ,
22. Ուլմարի[319] *քյադխոդա* Սարգիս,
23. *Քյադխոդա* Աղախանը նույնպես,
24. Դաշբուլաղի[320] Եղիազար *քյադխոդա* [կնիք]. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ռ[Ա] ԵՂԻԱԶԱՐ,
25. Մանվել քահանան նույնպես,
26. Քուրդադուլի[321] *քյադխոդա* Շահնազար,
27. *Քյադխոդա* Սիմեոնը նույնպես,
28. Օհան քահանան նույնպես,
29. Ղարաբեկը նույնպես,
30. Վանքի[322] *քյադխոդա* Մելիքշահը,
31. *Քյադխոդա* Ջամալը նույնպես,
32. Եսայի քահանան ևս,
33. /// *քյադխոդա* Յախշի Բեկը,
34. *Քյադխոդա* Ավանեսը նույնպես,

---

[316] Շաքիի Հողի գավառի մեջ մտնող Գետաշեն գյուղի օտար թարգմանական անունն է:

[317] Խոշքաշենը Շաքիի Հողի գավառի հայաբնակ գյուղերից էր, որը «հիմնուած էր Դուրկան գետիակի աջ կողմի բարձրութեան վերայ» (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 114):

[318] Բոզավանդ հայաբնակ գյուղը Մ. Բարխուդարյանցը նշում է Գարդմանի Կոկիսոն գավառում, «Կոկիսոն գետի ձախ ափի բարձրության վրա Վանքաշենի ուղղությամբ» (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 110):

[319] Պետք է լինի Ուլվարի, որը Քիլվարից դեպի հարավ-արևմուտք, որպես ավերակ բնակավայր հիշատակում է Մ. Բարխուդարյանցը Դարբանդի ճղբաց գավառում (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 80):

[320] Դաշբուլաղը Շաքիի Հողի գավառի հայկական բնակավայրերից էր (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 123):

[321] Մ. Բարխուդարյանցը այդ հայկական բնակավայրի անունը նշում է Գիրդադիլ ձևով՝ տեղադրելով այն Շաքիի Հողի գավառում, «Կոկիսոն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ Բօզաւանդի դէմուդէմ» (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 112):

[322] Վանք կամ Վանքաշեն գյուղը ըստ Մ. Բարխուդարյանցի «շինված էր Կոկիսոն կամ Գեօգ-չայ գետակի ձախ ափի բարձրութեան վերայ» (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 106):

35. Բաղդասար քահանան նույնպես,
36. *Քյաղխոդա* Ավանեսը,
37. Քիլվարի[323] *քյաղխոդա* Բեկնազարը,
38. *Քյաղխոդա* Եգանը նույնպես,
39. Ղավախանի[324] *քյաղխոդա* Օհանը,
40. Թոսիքի[325] Վարդան *քյաղխոդան* [կնիք]. Աստծո ծառա, Վարդան,
41. *Քյաղխոդա* Սարգիսը նույնպես [կնիք]. ՍԱՐԳԻՍ,
42. /// *քյաղխոդա* Յավրին,
43. *Քյաղխոդա* Սարդարը նույնպես,
44. Աղջափարայի[326] *քյաղխոդա* Զոհրաբը,
45. *Քյաղխոդա* Իսախանը,
46. Ենգիջաքենդի[327] *քյաղխոդա* Շամխալը,
47. Բադարայի[328] *քյաղխոդա* Վարդանը,

---

[323] Քիլվարը նշելով ճղբաց գավառում՝ Մ. Բարխուդարյանցը ընդարձակ տեղ է հատկացնում նրա նկարագրությանը՝ խոսելով նաև բնակչության ծանր վիճակի մասին (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 79-80):

[324] Հնարավոր է, որ լինի Շաքե գավառի Կախ̣ավան հայկական գյուղաքաղաքի անվան աղավաղված տարբերակը (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 138):

[325] Թոսիկ հայաբնակ գյուղը Շաքիի Հողի գավառում Դուրկան գետակի ձախ կողմի բարձրութեան վրա է նշվում (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 114):

[326] Հավանաբար Ղազախի շրջանի Ակսիփարա գյուղն է , որ նշվում է Ոսկեպար գետի ձախ ափին՝ Ոսկեպար և Բաղանիս գետերի միջև (Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 438): Այդ դեպքում այն կարելի է նույնացնել Մ. Բարխուդարյանցի հիշատակած Ոսկեպար հայկական գյուղի հետ (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 320): Հնարավոր է, որ տվյալ դեպքում տեղի ունեցած լինի հայկական անվան նույնացում դրամական միավորի թյուրքական անվան հետ. «ոսկի» բառը – «դրամ» իմաստով փոխարինվել է թուրքերեն «աղչե» դրամ բառով, իսկ «պար»ը նմանեցվելով փոխարինվել թյուրքերեն «փարա» բառով:

[327] Յանգիքենդը անվամբ բնակավայր է նշվում 1819 թ. կազմված ռուսական վիճակագրական նկարագրության մեջ (Описание Шекинской провинции, н. 39), որը հավանաբար Նոր շեն բնակավայրի անվան թուրքերեն թարգմանական տարբերակն է (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 98):

[328] Խոսքը թերևս Փատաո գյուղաքաղաքի մասին է, որը Մ. Բարխուդարյանցը նշում է Շաքիի Ղաբալա գավառում և խոսում նաև այնտեղի մահմեդականների

48. *Քյաղխոդա* Բաբան նույնպես,
49. Վարդանի[328] *քյաղխոդա* Սարգիսը,
50. *Քյաղխոդա* Ղազարը նույնպես,
51. Զառափի *քյաղխոդա* Բեգլարը, Բայանդուրն ու Այդինը,
52. Շաքիի Ղոզլու գյուղի[329] *քյաղխոդա* Բեկնազարը,
53. Մեջլիսի[330] քահանա *քյաղխոդա* Մելիքսեթ,
54. *Քյաղխոդա* Մալջանը նույնպես,
55. *Քյաղխոդա* Ղուլին ևս,
56. Սալբեկի[331] գյուղի քահանա *քյաղխոդա* Գրիգոր,
57. *Քյաղխոդա* Այդինը,
58. *Քյաղխոդա* Իսան,
59. Այդինբուլաղի[332] *քյաղխոդա* ///,
60. Մելիքսեթ քահանան նույնպես,
61. *Քյաղխոդա* Ղիյազը նույնպես,
62. Նարլուջայի[333] Մելիք Օհանը,
63. Գիս գյուղի[334] *քյաղխոդա* Ոսկանը,

մեծաթիվ լինելու մասին (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 126):

[328] Վարդանի գյուղը ևս Մ. Բարխուդարյանցը նշում է որպես Շաքիի Ղաբալա գավառի հայկական, բայց նաև մահմեդական բնակչություն ունեցող գյուղերի թվում (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 127): Ռուսական վիճակագրական նկարագրության մեջ այն նշվում է Խաչմասի շրջանի գյուղերի թվում (Описание Шекинской провинции, н. 12):

[329] Ղոզլու հայաբնակ գյուղը Մ. Բարխուդարյանցը նշում է Շաքիի Խենի գավառում՝ «շինուած է լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ... Եկեղեցին Ս. Աստուածածին» (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 120):

[330] Մեջլիսը, որը Մ.Բարխուդարյանցը հիշատակում է Շաքիի Խենի գավառում, հայաբնակ էր թե՛ ըստ 1819 թ. վիճակագրական տվյալների, և թե՛ հետագայում (Описание Шекинской провинции, н. 45, Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 120):

[331] Ըստ Մ. Բարխուդարյանցի, Սալի-Բեկ գյուղը նույնպես Շաքիի Խենի գավառում էր (Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ Դրացիք, էջ 120):

